

Ե՛կե՛ք ի՛մ հո՛րն և՛նձը՛ն . և՛նչի՛նք անձը՛ն . և՛նչի՛նք զ՛ստի  
և՛նչա՛նք է՛նչ թա՛գաւո՛րքն անձա՛նք .  
ե՛տ զ՛նք է՛տ ա՛նե՛ր զ՛նք է՛նք թա՛նն ո՛ր հո՛րցա՛ր յի՛ն . և



ԳՆԱՄԱՆ ԳՐԱԲԱՆ ԿՐԻՏԱՆ . ՈՐ ԻՆԻՒՆԱՆ ԳՆԵՐԻ .  
Ե՛կե՛ք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք .  
ե՛տ զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք .  
ԳՆԱՄԱՆ ԳՐԱԲԱՆ ԿՐԻՏԱՆ . ՈՐ ԻՆԻՒՆԱՆ ԳՆԵՐԻ .  
Ե՛կե՛ք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք .  
Ե՛կե՛ք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք զ՛նք .

**ԱՐԱԲԱԿԱՆ  
ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ  
ԱՐՁԱԿԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ  
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



Համիկ Մկրայանը ծնվել է 1958 թ. Երևանում: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի և Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարաններում: Արաբագետ-գրականագետ է, միջնադարագետ: Ջրաղվում է հայ-արաբական միջնադարյան գրական առնչությունների, արաբերենից հայերեն և հայերենից արաբերեն քարգմանված գրական հուշարձանների հետազոտությամբ, արաբերեն և եբրայա-ասոր արաբերեն ձեռագրերի ուսումնասիրությամբ: Հեղինակ է մոտ մեկկես տասնյակ գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում (Պաշերեն, Ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով): Բանասիրական գիտությունների թեկնածու է, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

*Հեղինակը իր երազնազգիությունն է հայրենու՛  
Տիգրանուհիի Հայկեհյուսեին եւ իրա որդիւնը՝  
Մարիուս եւ Աւարուպէսը Մուշեղյանեհյիսի  
գրքի քաղաքությունս ծագուելոյ ինքաւու հանուր:*



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

H. N. MKRTCHIAN

ARMENIAN-ARAB LITERARY RELATIONS

BOOK I

**THE MEDIEVAL ARMENIAN TRANSLATIONS  
OF THE ARAB PROSE**

(X-XV centuries)

«ZANGAK-97»  
Yerevan — 1998

8(62)  
Մ-80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Ն. ՄԿՐՏՉԻԱՆ

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՄԱՏԵԼԱԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐ II

**ԱՐԱԲԱԿԱՆ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ  
ՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(X-XV դդ.)

4642



«ԶԱՆԳԱԿ-97»  
Երևան — 1998



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պատմական գիտությունների դոկտոր  
Ա. Պ. Փոլադյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝  
քանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Ա. Գ. Դոլուխանյանը  
և պատմական գիտությունների թեկնածու  
Է. Գ. Գրորյանը

Նկարիչ՝ Արա Բաղդասարյան

ԳՏՀ 892.7

ԳՄԴ 84(0)4

Ս 806

Ս 806 Սկրտյան Գ. Ն.

Արաբական գեղարվեստական արձակի մոտիվների հայ  
միջնադարյան թարգմանությունները (X-XV դդ.): /Այ-  
արաբական մատենագրական առնչություններ: Գիրք Ա./  
— Եր.: Ձանգակ-97, 1998:

Աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում հայտնաբերելու հայերեն թարգ-  
մանությունների («Պատմութիւն վասն մանկանց եւ աղջկանց», «Պատմութիւն յա-  
ղագս Փահլուլ բազավորին», «Պատմութիւն Պղնձե քաղաքին», «Պատմութիւն Արդ  
ճաֆար մանկան եւ Նեմիլայ աղջկան») ցայժմ անհայտ արարներն բնագրերը, վեր-  
ջիններիս այլաբերական զուգահեռները, կատարելու համեմատական տեքստաբանա-  
կան բնութագրում՝ պարզելու իսմար, թե ո՞ր լեզվից են արված հայերեն թարգմանու-  
թյունները, ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել հայկական միջավայրում:  
Կից հավելվածում ներկայացվում են հեղինակի պատմամեթոդի արդյունքները ևս եր-  
կու (կիլիկյան շրջանի) միջնադարյան հուշարձանների վերաբերյալ՝ 1. «Գիրք Վաս-  
տակոցի» հայերեն թարգմանության բնագրի խնդրի շուրջ և 2. Ֆարաջ Ասորու «Բժշ-  
կարան ճիոյ եւ առեսարակ գրատնոյ» երկի արաբական աղբյուրները:  
Հասցեագրվում է բանասերներին, պատմաբաններին, արևելագետներին, ինչպես  
նաև ընթերցող այն շրջաններին:

Ս 4703020600 98  
0003(01)-98



ԳՄԴ 84(0)4

ISBN 99930 - 2 - 007 - 2

© Սկրտյան Գ. Ն., 1998 թ.

ՆԱԽԱԲԱՆ

## ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջին դարերում հայ գրականության՝ զանազան ժողովուրդների գրա-  
կանությունների հետ ունեցած փոխադարձ կապերի ու փոխազդեցությու-  
նների լնդիանուր պատկերն ավելի ու ավելի պարզորոշ է դառնում շնորհիվ  
այդ կապերի առանձին դրվագների աստիճանական հետազոտման: Այդ  
դրվագներից են հայ-առաբական, հայ-ասսրական, հայ-իրանական, հայ-  
վրացական գրական առնչությունները, որոնք արդեն բավական մանրա-  
մասնորեն լուսարևնված են հանգամանային ուսումնասիրություններում:  
Նշված կապերի մեկ այլ հատվածը կազմող հայ-արաբական գրական  
կապերին ևս, զանազան առիթներով, անդրադարձել են տարբեր հետա-  
զոտողներ, երբևէ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով այս կամ այն  
առանձին գրական հուշարձանի վրա, սակայն հատուկ ուսումնասիրության  
նյութ դրանք դեռևս չեն դարձել:

Միջնադարում հայ-արաբական մշակութային և, մասնավորապես,  
գրական փոխադարձ կապերի առաջացմանն ու զոյատևմանը նպաստել են  
մի շարք գործոններ՝ պատմական Հայաստանի, ինչպես և Կիլիկիայի  
հայկական քաղաքության, աշխարհագրական դիրքը (Արևելքից Արև-  
մուտք տանող ուղիների խաչմերուկում), արաբական տիրապետության  
շրջանը և արաբական ամիրայությունների գոյության փաստը Հայաստա-  
նում, ինչպես նաև հայկական գաղթավայրերի առկայությունը (դեռևս միջին  
դարերում) արաբական մի շարք երկրներում՝ և այլն: Հիշյալ բազմադարյան  
պատմա-քաղաքական, առևտրական և այլ բնույթի փոխադարձ կապերն  
ուղեկցվել են երկու ժողովուրդների կենդանի, անմիջական հարու-  
րակցմամբ, մշակութային արժեքների փոխանակմամբ՝ ու փոխադարձ  
ազդեցությունների գրեթեմասն զանազան ձևերով:

Այսպես, օրինակ, ուսումնասիրողների կողմից մասնանշվել է հայկա-



կան ճարտարապետության ազդեցությունը, մասնավորապես, Ֆաբիժյանների և Այուրյանների դարաշրջանի եզրիպատկան կառույցների վրա<sup>5</sup>: Մասնանշվել է և հակառակ երևույթը՝ արարական ազդեցությունը հայկական միջնադարյան անձնանունների<sup>6</sup>, հայոց լեզվի, IX-XI դդ. հայկական աարազի<sup>7</sup> վրա և այլն:

Հայ-արարական գրական առնչությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ևս կրկ ևն փոխադարձ բնույթ. բարգմանություններ արվել են ոչ միայն արարերենից հայերեն, այլև հայերենից արարերեն: Բացի այդ, ինչպես ցույց է տալիս նշված բարգմանությունների ուսումնասիրությունը, ոչ միայն հայ միջնադարյան հեղինակներն ևն ծանոթ եղել արարական աղբյուրներին և օգտագործել դրանք իրենց երկերը շարադրելիս, այլև արար հեղինակներն ևն, իրենց հեքթին, օգտվել հայկական աղբյուրներից: Այդ կարելի է տեսնել, մասնավորապես, բժշկական գրականության օրինակով: Ինչպես հայտնի է, միջնադարի հայ բժիշկներն օգտագործել են բազմաթիվ արարական աղբյուրներ<sup>8</sup>, ինչպես նաև արարական տեքստեր<sup>9</sup> (բժշկական, ամսանարածական, ղեղագործական) ու բուսանուններ: Մակայն արարական ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղի է ունեցել և հակառակ երևույթը՝ արար բժիշկներն էլ, իրենց հեքթին, օգտվել են հայ հեղինակների երկերից<sup>10</sup>: Հայտնի է նաև հայերենով ստեղծված բժշկական երկի՝ արարերեն բարգմանվելու մեկ փաստ<sup>11</sup>, որը նույնպես վկայում է հայ միջնադարյան բժշկության նկատմամբ արարների ցուցաբերած ոչ միայն հետաքրքրության, այլև բարձր գնահատանքի մասին:

Հայ-արարական առնչություններն ուսումնասիրողներն իրավացիորեն տարբերում են դրանց դրսևորման երկու տարբեր ձևեր՝ փոխհարաբերությունները քրիստոնյա արարների և մահմեդական արարների հետ<sup>12</sup>: Բրիստոնյա-արարական և մահմեդական-արարական մշակույթները, ինչպես հայտնի է, միանգամայն տարբեր և կրոնական իմաստով նույնիսկ հակամարտ երևույթներ են, ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, որոնք, բնականաբար, ի հայտ են գալիս նաև գրական առնչությունների ասպարեզում:

Բրիստոնյա արարների հետ հայերի ունեցած փոխհարաբերությունների արդյունք է հանդիսանում արարերենից կատարված հայերեն հնագույն բարգմանությունը՝ Նանա Ասորու կազմած «Հովհաննու Ավետարանի մեկնությունը» (մոտ. 840 թ.)<sup>13</sup>: Վերջինս հայերեն է բարգմանվել մի

վարդապետի կողմից, որի անունը, ինչպես և նրա կառարած բարգմանության արարերեն բնագիրը, մեզ չի հասել:

Իրենց հեքթին, քրիստոնյա-արարական միջավայրում հայերենից արարերեն են բարգմանվել հայ մատենագրության մի շարք հուշարձաններ՝ «Լրիգոր Լուսավորչի վարքը»<sup>14</sup>, որի հայերեն բնագիրն առ այսօր մնում է անհայտ, Ագաբանգեղոսի «Պատմությունը»<sup>15</sup>, Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը»<sup>16</sup>: Հայտնի են նաև նույն միջավայրում և նույն ճանապարհով կատարված որոշ քրիստոնեական-կրոնական բնույթի բարգմանություններ, ինչպես, օրինակ, «Թուրք կորնբացուց առ Պաղոս և Պաղոսի առ կորնբացիս» և այլն<sup>17</sup>: Ըստ Ն.Մառի, «Հայերենից արարերեն բարգմանությունների ի հայտ գալը, մասնավորապես, կարելի է բացատրել, բերև, նրանով, որ ուշ շրջանում արարերենն ասորիների համար ծառայում էր որպես գրական լեզու, իսկ հակորիկ-ասորիները և հայերը զանգված էին սերտ հաղորդակցության մեջ»<sup>18</sup>: Ն.Մառի հետ համակարծիք է և Ա.Տեր-Վանդյանը, որն իրավացիորեն քրիստոնյա-արարների (այսինքն՝ հիմնականում արարախոս ասորիների) հետ հայերի ունեցած առնչությունները դիտում է որպես ասորա-հայկական բազմադարյան գրական կապերի ավանդույթի շարունակությունը<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է մահմեդական-արարների հետ փոխհարաբերություններին, ապա այստեղ ևս հետազոտողների կողմից մատնանշվել են որոշ առանձնահատկություններ: Այդ առանձնահատկություններից է, մասնավորապես, հայկական բանահյուսական ավանդույթի արասցույունը մահմեդական-արարական պոետագրության մեջ՝ Հայաստանի և հայերի մասին առասպելների տեսքով<sup>20</sup>: Իր հեքթին, մահմեդական-արարական բանահյուսական ավանդույթն իր արասցույունն է գտել հայկական աղբյուրներում՝ Մոհամմադի մասին մի շարք ավանդությունների տեսքով<sup>21</sup>, ինչպես նաև, որոշ չափով, հայ ժողովրդական էպոսում և հեքիաբնկում<sup>22</sup>:

Միջնադարի հայ բարգմանիչներն արարերենից հայերեն են բարգմանել ամենատարբեր բնագավառների վերաբերող գրականություն՝ սկսած կրոնական-աստվածաբանականից<sup>23</sup> ու փիլիսոփայականից<sup>24</sup> և վերջացրած երազահաններով<sup>25</sup>, սոքարբային<sup>26</sup> ու այլբնիական<sup>27</sup> գրականությամբ: Արարական միջնադարյան գիտության նվաճումներով ազգային մշակույթը հարստացնելու տեսակետից առանձնապես կարևոր դեր են խաղացել արարերենից հայերեն բարգմանված բժշկաբանները<sup>28</sup>, ավարախիները<sup>29</sup>, ամսանարածական<sup>30</sup>, աստղագիտական<sup>31</sup>, երկրագործական<sup>32</sup> երկերը և այլն<sup>33</sup>:



Հայերենում արարական փոխառությունների հայտնվելուն նպաստել են ոչ միայն երկու լեզուների կենդանի, անմիջական շփումը (փոխազդեցությունը բանավոր ճանապարհով), այլև արաբերենից հայերեն քարգմանված վերոհիշյալ երկերը, ինչպես և արարական աղբյուրների հիման վրա կազմված հայերեն կոմպիլյատիվ բնույթի երկերը: «Լեռջիններում մեծ թիվ են կազմում հատկապես գիտության զանազան ասպարեզներին վերաբերող տերմինները՝ բժշկական, անասնաբուժական, աստղագիտական, փիլիսոփայական, երկրաբանական, բուսանունները և այլն: Արարական փոխառություններով հարուստ է եղել առանձնապես միջին հայերենը<sup>24</sup>, իսկ այսօրվա հայերենում պահպանվել է դրանց միայն մի վաղը մասը:

Հայ-արարական միջնադարյան գրական կապերի արդյունքը հանդիսացող վերոհիշյալ հուշարձաններից համեմատաբար լավ են ուսումնասիրված հայերենից արաբերեն քարգմանված երկերը՝ Ազարանգեղոսի «Պատմությունը», «Գրիգոր Լուսավորչի վարքը», Այգեկցու «Աղվեսագիրքը», ինչպես նաև Ֆարաջ Ասորու «Ըժշկարան ձիոյ և առհասարակ գրասանոյ» անասնաբուժական ձեռնարկը, որն անսպաժն հայունի միակ քարգմանությունն է հայերենից կատարված մահմեդական-արարական միջավայրում<sup>25</sup>:

Սակայն նույնը չի կարելի ասել մասնավորապես, «Գիրք Վաստակոցի» մասին, որի հայերեն քարգմանության բնագիրը մինչև վերջերս շարունակում էր մնալ անորոշ<sup>26</sup>, ինչպես նաև արարական միջնադարյան գեղարվեստական արձակի այն մի քանի նմուշների մասին, որոնք, ի թիվս արաբերենից արված մյուս, արդեն նշված քարգմանությունների, նույնպես հասել են մեզ:

Միջնադարյան իրականության պայմաններում, որ սրբագործ կերպով սահմանազատված էին հոգևոր և աշխարհիկ ոլորտները, նույախի սարբերակում գոյություն ուներ և գրականության մեջ. թե՛ ինքնուրույն, թե՛ քարգմանական երկերի առյուծի բաժինը կազմում էին, որպես կանոն, հոգևոր բնույթի երկերը, մինչդեռ աշխարհիկ ստեղծագործությունները երկու դեպքում էլ հազվադեպ էին:

Այնուամենայնիվ, ինչպես նկատել է Ֆ.Մակլերը, «Միջնադարի հայերն իրենց լեզվով են քարգմանել այդ ժամանակ ժողովրդականություն վայելած վեպերի մեծ մասը...»<sup>27</sup>: Մեր միջնադարյան քարգմանիչների ջանքերի շնորհիվ հայ ընթերցողը հնարավորություն է ունեցել մայրենի լեզվով ծանոթանալու համաշխարհային ճանաչում գտած այնպիսի գրական

հուշարձանների, ինչպիսիք են «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու», «Բարոյախօս», «Պատմություն և խրատ Խիկարայ Իմաստնոյ», «Պատմություն եօրն իմաստասիրաց», «Նկարագրություն հոգևոր վարուց Յովասափու, որդայ քազատրին Հնդկաց», «Վարք Հարսնց», «Հայելի վարուց» և մի շարք այլ նման երկեր:

Հիշյալ աշխարհահռչակ ստեղծագործությունների կողքին հայ միջնադարյան գրականության մեջ իրենց ուրույն, ոչ պակաս նշանակալից տեղն են գրավել նաև մի շարք այլ քարգմանական երկեր՝ նույնպես աշխարհիկ կամ գեղարվեստական բնույթի: Թեև վերջիններին տարածման շրջանակները համաշխարհային առումով, համեմատաբար ավելի նեղ են եղել, քան վերևում թվարկվածներինը, սակայն դրանք նույնքան մեծ ժողովրդականություն են վայելել Հայաստանում հարյուրամյակներ շարունակ: Նման քարգմանական երկերից են՝ «Ֆրատք Նուշիրուանի», «Պատմություն Պղնձե քաղաքին», «Պատմություն վասն մանկանն և աղջկանն», «Պատմություն յաղագս Փահլուլ քազատրին» և մի քանի այլ ստեղծագործություններ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հիշյալ քարգմանություններից հնագույնը՝ «Աղեքսանդրի պատմությունը», կատարվել է դեռևս V դարի 80-ական թվականներին<sup>28</sup>: Այսպիսով, հայ քարգմանական գեղարվեստական արձակի պատմությունը, սկիզբ առնելով հայ գրականության ստեղծման ստաջին իսկ դարից, շարունակվել է ողջ միջնադարի ընթացքում՝ մինչև XVII-XVIII դդ.<sup>29</sup>:

Նշված քարգմանություններն արվել են սարբեր լեզուներից՝ հունարենից, ասորերենից, լատիներենից, պարսկերենից, լեհերենից, արաբերենից: Դրանք մեզ են հասել երբեմն հինգ-վեց տասնյակ և ավելի ընդօրինակություններով, սակայն նույնիսկ նման դեպքերում ոչ միշտ են մեզ հայունի քարգմանիչների անունները և տեղեկություններ քարգմանության ժամանակի, վայրի ու բնագրի լեզվի մասին: Իսկ հաճախ էլ պահպանված տեղեկությունները սուղ են ու կցկատր:

Մեր ներկա ուսումնասիրության առարկան են X-XV դդ. Հայաստանում արաբերենից հայերեն քարգմանված գեղարվեստական արձակի բոլոր այն շորս նմուշները, որ այժմ հայունի են հայագիտությանը՝ 1. «Պատմություն վասն մանկանն և աղջկանն», 2. «Պատմություն յաղագս Փահլուլ քազատրին», 3. «Պատմություն Պղնձե քաղաքին», 4. «Պատմություն Աբդյ Շաֆար մանկան և Շևմիլայ անղջկան, որք առին գիրար»: Դրանցից յուրաքանչյուրի բնությունն են նվիրված, համապատասխանաբար, ուսումնասիրության շորս գլուխները: Քանի որ գլուխներից յուրաքանչյուրը վերաբերում է մի



առանձին հուշարձանի, նարսաակահարմար ենք զանցից դրանցից յորս-  
բանչյորի ուսումնասիրության պատմությունը ներկայացնել համաարտաս-  
խան գլխում:

Նշված պատմություններին, զանազան աշխրհերով, անդուդարձն են  
աարբեր հետազոտողներ (Ն.Անդրիկյան, Ն.Ալիկյան, Ա.Չոպանյան,  
Հ.Քյուրայան, Պ.Մարտոյան, Հ.Միմոնյան, Ա.Սրապյան և ուրիշներ): Նրանց  
չանքերով ուսումնասիրվել են նշված գրույցների հայերեն ձևագրերը և  
հրատարակությունները, գրավոր և բանավոր ավանդույթի պատմությունը,  
հրատարակվել են դրանց գիտա-համեմատական բնագրերը (բացառու-  
թյամբ մեկի՝ «Պղնձե քաղաքի պատմության», որի բնական բնագիրն առ  
այսօր մնում է չիրատարակված): Առանձին ուսումնասիրության նյութ են  
դարձել գրույցներում առկա կաճանները: Ուսումնասիրողները փորձել են  
պարզել նաև, թե ի՞նչ և ո՞ւմ կողմից են թարգմանվել հիշյալ գրույցները,  
ինչպես նաև, թե վերջիններիս հայերեն թարգմանություններն էլ, իրենց  
հերթին, ի՞նչ այլ լեզուներով են թարգմանվել:

Այսպիսով, բոլոր նշված «պատմությունների» հետազոտությունն առ  
այսօր ընթացել է զուտ հայագիտական տեսանկյունից. չնայած այն համ-  
զամանքին, որ խնդրո առարկա գրույցները հետազոտողների կողմից  
դասվել են արարերենից սրված թարգմանությունների շարքը, դրանց  
արարերեն բնագրերն առ այսօր հայանարերված չեն եղել (բացառությամբ  
«Պղնձե քաղաքի պատմության» բնագրի, որը մատնանշվել է Ա.Լ.Որանսիի  
կողմից, 1921 թ.): Այդ խել պատճառով հնարավոր չի եղել վերջնականապես  
ճշտել դրանց՝ ինչ լեզվից թարգմանված լինելը:

Սույն ուսումնասիրության նպատակն է եղել հնարավորության սահման-  
ներում հայտնաբերել հիշյալ թարգմանական գրույցների սրարերեն  
բնագրերը, ներկայացնել վերջիններիս գրավոր և բանահյուսական  
ավանդույթների պատմությունը, ցույց առալ հայկական պատմության  
նշանակությունը արարերեն բնագրերի ուսումնասիրության համար և  
բնդհակառակն, բաղդատել բնագրերը հայերեն թարգմանությունների հետ և  
պարզել, թե ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել դրանք հայկական  
միջավայրում, ինչպես նաև ճշտել, թե արտբական ո՞ր միջավայրն է  
հանդիսացել հայերեն թարգմանությունների փոխառու աղբյուրը՝  
քրիստոնյա-արարական, թե՛ մահնեղական-արարական: Այն դեպքերում,  
եթր հայանի են արարերեն բնագրի նաև այլ արևելյան գուգահեռներ  
(պարսկերեն, ասորերեն, երբայատառ արարերեն, բորբերեն և այլն),

հայկական պատմոր համեմատվել է նաև վերջիններիս հետ՝ վերջնա-  
կանապես պարզելու համար, թե հասկապես ո՞ր լեզվից է կատարված  
հայերեն թարգմանությունը: Ըստդասության համար օգտագործվել են մի  
շարք առ այսօր ոչ միայն չիրատարակված, այլև թիչ ուսումնասիրված կամ  
չուսումնասիրված ձևագրեր (արարերեն, պարսկերեն, երբայատառ արա-  
բերեն, ասորերեն, բարյունի և այլն):

Այսպիսով, ներկա ուսումնասիրությունում առաջին անգամ փորձ է  
արվել հանրագումարի բերելու այն ամենը, ինչ ցայսօր կատարվել է նշված  
գրույցների հետազոտման ողողությամբ ոչ միայն հայագիտության, այլև  
արարագիտության մեջ և մի շարք այլ հարակից գիտություններում՝ Արևելյի  
մյուս (պարսկական, ասորական, հրեական, հնդկական, բորբական և այլ)  
գրականությունների ուսումնասիրության ասպարեզում: Հարկ եղած  
դեպքում օգտագործվել են նաև համեմատական գրականագիտության,  
ինչպես նաև Արևմտարի գրականությունների հետազոտության  
բնագավառում ձևայ բերված արդյունքները:



«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՆ ԱՄՆԿԱՆՆ ԵՒ ԱՂՋԿԱՆՆ»

1. Հայկական պատմը

«Պատմութիւն վստն մանկանն և աղջկանն» գրույցը մեկն է միջնադարյան Հայաստանում մեծ տարածում գտած քարգմանական հուշարձաններից: Գարեդար հանդիսանալով հայ ընթերցողի «սեղանի գրքերից» մեկը, այն մեզ է հասել հինգ տասնյակից ավելի ձեռագիր ընդօրինակություններով (XIV-XIX դդ. գրչությամբ) և XVIII-XX դդ մոտ մեկուկես տասնյակ հրատարակություններով, ընդ որում որոշ ձեռագրեր վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ արդեն գոյություն ունեին մի քանի հրատարակություններ: Նման մեծ ժողովրդականություն վայելելու վաստը բազատովում է ինչպես գրույցի հեռաքրքրաշարժ սյուժետով, այնպես էլ նրա կառուցվածքով: Պատմության միջին մասը բաղկացած է հարց ու պատասխաններից (հանելուկներից և դրանց լուծումներից), որոնք ամենաապրեր բնույթի են՝ կրոնականից սկսած և աշխարհիկ ամենատվարական արարկաներին ու երևույթներին վերաբերող թեմաներով վերջացրած: Այդ իսկ պատճառով երկն ունի քն գեղարվեստական ստեղծագործության հատկանիշներ, քե ուսուցողական բնույթ, ընդ որում «ուսուցողական» մասը, շարունակ լրացվելով, ընդարձակվել է ու նորագվել, միշտ նոր հետաքրքրություն հաղորդելով այս հնագույն գրական հուշարձանին: Չրույցի համառոտ բովանդակությունը հետևյալն է.

*Մի մեծաասն իշխան գավակ շունի և «հանապարզ» աղաչում է ասածուն իրեն ժառանգ պարգևել: Վերջապես նա ունենում է մի որդի՝ գեղեցիկ, իմաստուն և «պատերազմող անյաղք»: Մակայն պատանին շալլում-վատնում է հոր ողջ ունեցվածքը: Տեսնելով, որ իրենց մնում է միայն մորալ, որպեսզի սովից չմեռնեն, որդին առաջարկում է ծնողներին տեղափոխվել մի այնպիսի երկիր, ուր իրենց չեն ճանաչում: Այստեղ, ծնողների համաձայնությամբ, պատանին քաղափորին է փաճառում նրանց՝ որպես իր ծառաների, խնդրելով մոր փոխարեն «ձի մի, իր սարօքն», իսկ հոր փոխարեն՝ «ընտիր զգեստ և գլն»: Այսպիսով պատանին մեկնում է երջանկություն սրտնելու՝ խառանալով ծնողներին վերադառնալ և փրկել նրանց: Ծանապարհին նա հանդիպում է մի ձիավորի, որին հանձնարարված է ինչ-որ նամակ տեղ հասցնել:*

*Վերջինս պատանուն հանձնում է նամակը, ասելով, որ տեղ հասցնողին մեծ պարգև է սպասում: Ուրախացած պատանին նամակը դնում է քսակի մեջ և շարունակում ճանապարհը, սակայն շուտով մոլորվում է: Մասաիկ ծարավելով փնտրում-գտնում է մի ջրհոր, որից ջուր է հանում իր քսակով: Մրա մեջ մտաւցած նամակը հանելով, նա կարդում է այն և իմանում, որ այստեղ նամակարերի մահվան դատավճիռն է, որն ի կատար է ամփելու տեղ հասնելուն պես: Պատանին ոչնչացնում է նամակը և շարունակում ճանապարհը: Հասնում է մի «մեծ և քարկի» քարաք և իջեանում Վի պատափ տանը: Պառափը պատմում է, որ իրենց քաղաքի քաղափորն ունի «խիտ գեղեցիկ և գարնանայի իմաստուն» մի դուստր, որի հրամանով արդեն 99 արքայազն է գլխաստել: Արքայադուստրը պայման է դրել, որ կանոնաճանա միայն նրա հետ, ով կարտասխանի իր բոլոր հարցերին և կզերազանցի իրեն իմաստնությամբ: Ասայժմ ոչ մեկին այդ չի հասցուցել: Պատանին որոշում է փորձել իր բախար: Երեք օր շարունակ նա պատասխանում է բոլոր հարցերին, իսկ հետո ինքն է մի հանկուկ առաջարկում քաղափորի դստերը. «Ո՞վ է այն, որ հարուստ էր և աղքատացաւ, և յիւր մարնութիւն հազա գիր հայրն, հեծավ գիր մայրն և գնաց, որ գիր տարանքն գտանէր, նա մանն ի վերայ հասաւ, վերոց գմահն յիւր ձիան վրայ, խնց մահովն ջուր և խնցոց ձիուն այր, և սպրեցաւ ինքն և ձին այր»: Չկարողանալով պատասխանել, աղջկը ժամանակ է խնդրում և որոշում խորամակնել: Ծպափած, երկու աղայսնի ողիկցությամբ, վերցնելով գինի և քնտիր ուտեստներ, նա գալիս է պատանու օրևանը, հարրեցնում է նրան և ստիպում, որ ասի պատասխանը: Մակայն արքայադստեր մոռացած զգեստից պատանին ճանաչում է նրան: Հեռկյալ օրը, երբ աղջկը պատասխանում է հարցին, պատանին նրան ևս մի հանկուկ է առաջարկում. «Ո՞րն է այն բոշուն, որ կարայ գինքն և գեներցի, և գինետրն պահեցի գինքն խորվեցի և դրի յապես, քէ ուտեմ... նա յանկարծակի քսաւ և գնաց, ապա գինետրն պահեր նմ, քէ չէք հաւասար, նա գինետրն բերեմ, որ անսուք, որ ուղորդ եմ»:*

*Թագափորի դուստրը ստիպված իրեն պարտված է ճանաչում: Յոբևորյա հարսանիքից հետո պատանին իր մոտ է վերադարձնում ծնողներին և ապրում երջանիկ:*

Չրույցի հայկական տարբերակի ուսումնասիրման ասպարեզում անդրանիկ քայլերն արել է Ն.Անդրիկյանը՝ դեռևս դարասկզբին: Նրան է պատկանում առաջին ենթադրությունն այն մասին, ու «Մանկան և աղջկա» պատմությունը քարգմանված է արարելներից: Նման եզրակացության



Ն.Անդրիկյանը հանգել է, համեմատելով այն «Հագար ու մի գիշեր» ժողովածուի «Թավադդուր» պատմության հետ և հայանարևելքով 7 գուգահեռ՝ առաջադրվող հանգուկների բովանդակում: Չնայած այս աղերսին, նա իրավացիորեն նկատում է նաև, որ «Թավադդուրը» և «Հարցմունք Աղջկան»-ի «ամբողջական նկարագրեր» բոլորովին իրարից տարբեր են ու նգրակացնում: «Հարցմունք Աղջկանը՝ Հագար ու մի գիշերներու շարքին կը պատկանի բնագիրը արաբերեն գրուած է ԺԴ դարուն սկիզբները. հեղինակը նոյն ըլլալու է ԹԷՎ.ատուտի գրողին հետ: Հայերէնը բարգձմանաբիւն է արաբերէնէ և կատարուած է ԺԴ դարու կիսն յառաջ՝ բայց միշտ նոյն դարուն մէջ»: Թարգմանությունը ենթադրաբար վերագրվում է Կոնստանդին Երզնկացուն:

«Մանկան և աղջկա պատմության» արարական իսկական բնագրի հայանարևելքմանը մտնելով է մեկ այլ հետազոտող Ա.Չոպանյանը, մի փաստ, որ տա այսօր մնացել է սովերում և որը հետագա ուսումնասիրողներից ոչ մեկը չի նկատել: Այսպես, Ա.Չոպանյանը գրում է. «Հարցմունք Աղջկան», որ ձևագիրներու մեջ շատ տարածուած է... Հագար ու մի գիշերներու մի գլոխն է (տրբ. Մարտիրոսի քարգմանութեան մեջ՝ ամուր վերնագիրն է Paroles sous les quatre-vingt-dix-neuf têtes coupées), կարծես դեռ չէ հրատարակուած այդ հայերէն քարգմանութիւնը, որ շատ կը տարբերի ֆրանսիական քարգմանութենէն. հարցումներու շարքը ըլիստոնեական աշխարհէն ստնուած է հայ քարգմանության մեջ, մինչ արարականին մէջ մահմետական գոյն ունին անոնք. պատմաւածքն ալ բնութանոր գծերով նոյն ըլլալով հանդերձ, մանրամասնութեան շատ տարբերութիւններ կը ներկայացնէ»:

Այդ երբ դիմում ենք Ժ.Մարդուտի ֆրանսերէն քարգմանութեանը, պարզվում է հետևյալը. Ն.Անդրիկյանի վերայառչած «Թավադդուր» (կամ «Իմաստուն գերուիին») Մարդուտի քարգմանության մեջ կրում է «Histoire de la docte Sympathie» անվանումը՝ իսկ «Paroles sous les quatre-vingt-dix-neuf têtes coupées»-ն բոլորովին այլ հեթիսը է: Համեմատության համար դիմենք այդ երկու հեթիսքների համատու բովանդակություններին.

#### «Թավադդուր»

Մի հարուստ վաճառական ասածուն երկար աղերսելոց հետո վերջապես անենում է մի որդի: Հոր մահից ետևո որդին շտաղում-փառնում է իր ողջ ունեցվածքը: Նա այլևս ոչինչ չունի, բացի Թավադդուր անունով մի իմաստուն ու բարեաես ստրկուհուց: Թավադդուրը շքավորությունից փրկում է իր տիրոջը, առաջաքկելով նրան տանել իրեն Հարուն առ-Ուաշիդի պալատը, որտեղ յուրատեսակ ջննություն է հանձնում: Թավադդուրը պատասխանում է խալիֆի քաղմարիվ իմաստունների բոլոր հարցերին, որոնք ի վերջո իրենց պարտված են ճանաչում: Հիացած խալիֆը Թավադդուրին անձ պարգևներով վերադարձնում է տիրոջը, դարձնելով վերջինիս իր սեղանակիցը:

#### «Paroles...»

Մի քաղափոր տնի մի խելացի և գեղեցիկ որդի: Մակայն բախտը երես է դարձնում քաղափորից, և նա կորցնում է իր ողջ հարստությունը: Որդին առաջաքկում է ծնողներին մեկնել որևէ այլ երկիր՝ երջանկություն որոնելու:

Գալիս-հասնում են մի մեծ քաղաք, որտեղ որդին, ծնողների համաձայնությամբ, վաճառում է նրանց այդ քաղաքի սուլթանին: Հոր փոխարեն տառնալով մի ձի, իսկ մոր փոխարեն՝ արքայազնի զգեստ, պատանին մեկնում է մի այլ քաղաք: Այստեղ մի ծերունուց իմանում է, որ այդ քաղաքի քաղափորի դուստրը որոշել է ամուսնանալ միայն նրա հետ, ով կպատասխանի իր բոլոր հարցերին, հակառակ դեպքում փեսացուն մահապատժի կենրարկվի: Արդեն 99 արքայազն է գլխատվել, սակայն պատանին այնուամենայնիվ որոշում է փորձել իր բախտը: Նա պատասխանում է արքայադստեր բոլոր հարցերին, սպա ինքն է մի հարց առալիս, որին աղջիկը չի կարողանում պատասխանել: Այսպիսով պատանին ամուսնանում է արքայադստեր հետ և վերադառնում իր ծնողների մոտ:

Այսպիսով, երե ընդունենք, որ Ա.Չոպանյանը ծանոթ է եղել Ն.Անդրիկյանի վերուիշյալ հոդվածին և ընդամենը փորձել է Մարդուտի ֆրանսերէն քարգմանության մեջ գտնել նոյն այն հեթիսքը, որ «Հագար ու մի գիշերի» իտալերեն քարգմանության մեջ հայանարևելք էր Ն.Անդրիկյանը, ապա փակուղու առջև կկանգնենք: Ն.Անդրիկյանը մեջ է բերում «Թավադդուրի» համատու բովանդակությունը, այնպես որ, նախապես ծանոթ լինելով վերջինիս, Ա.Չոպանյանը չէր կարող շփոթել այն որևէ այլ հեթիսքի հետ: Ուրեմն մնում է ենթադրել, որ Ա.Չոպանյանը «Հարցմունք Աղջկան»-ի արա-



բական նախօրինակը «Հազար ու մի գիշերում» հայանարերել է Ն.Անդրիկ-յանից անկախ, այսուպես նա անկասկած, պետք է որ առարկեր Ն.Անդրիկ-յանին հայտնաբերած լինելով հայկական տարբերակին անհամեմատ ավելի սերտորեն անջվող մի բնագիր:

Նեոտարար, երև Ն.Անդրիկյանը հայանարերել է «Հարցմունք Աղջկան»-ին հեռավոր կերպով միայն առնչվող մի պատմություն, ապա Ա.Չոպանյանը կանգնած է եղել ավելի ճիշտ ուղու վրա, քան այդ մասին նշել է սույլ բառացի դիտարկության տեսքով:

Ն.Ալիևյանը ևս մի քաղ սառչ է գնացել, քեկ չանդրադասանալով իր ի միջի այլոց արված դիտարկության ողջ կարևորությանը «Մանկան և աղջկա պատմության» գրավոր ավանդույթի վեր հանման գործում: Այսուպես նա չէր շփոթի երկու նույնանուն հեղինակների. այսպես, միանգամայն իրավացիորեն նշելով, որ «Այս գրույցի հիման վրա հորինած է E.Schiller իր Turandot, Prinzessin von China. Ein tragikomisches Märchen nach Gozzi»<sup>21</sup>, նա միաժամանակ անում է հետևյալ կոմսը. "Gasparo Gozzi, Opere, Padova, 1818-1820, հրատարակված 16 հատորով"<sup>22</sup>: Այստեղ անճշտություն կա. Ֆ.Շիլլերն իր «Տուրանդոտը» գրել է քսա Կարլո Գոցցիի (1720-1806) համանուն պիեսի<sup>23</sup>, իսկ Գասպարո Գոցցին (1713-1786) վերջինիս ավագ եղբայրն է<sup>24</sup>:

Ինչպես կհամոզվենք սառքե, Ն.Ալիևյանի վկայակոչած Ֆ.Շիլլերի «Տուրանդոտ, չինական արքայադուստր» պիեսը այն երկար շրջանի վերջին օղակներից մեկն է (ժամանակագրական առումով), որը խորանում է անվագն մինչև մ.թ.ա. V դ., մինչև մի հնագույն բանասիրական մոտիվի գրական մշակման ակունքները:

«Մանկան և աղջկա պատմության» հայկական տարբերակն, իր հերթին, որպես բնագիր է ծառայել վրացերեն բարձրագույնության համար<sup>25</sup>:

Ձրույցի հայկական և վրացական պատմմաների փոխհարաբերության խնդրին անդրադարձնել է Գ.Մուրադյանը<sup>26</sup>, եզրակացնելով, որ վրացերեն բարձրագույնությունն ինքս հայերենից է արված XVIII դարում կամ XIX դարի սկզբում<sup>27</sup>: Գ.Մուրադյանը նաև արձանագրում է, որ վրացական որոշ ձևազրկումն արտացոլված են բանասիրական պատմմանը<sup>28</sup>:

Ս.Հարությունյանը հայ ժողովրդական հանելուկները քննելիս գուզա-հեռներ է անցկացրել դրանց ու «Մանկան և աղջկա պատմության» հանելուկներից մի քանիսի միջև<sup>29</sup>:

Հ.Միսոնյանը նկատում է. «...պատմության բնոգրկած հարց ու պատասխան հանելուկների ցանկը հարստացնելու նպատակով ժամա-

նակին շնագրի զանազան մասերում մտցվել են նաև Ներսես Շնորհալու մի քանի տասնյակի հասնող շախաձու հանելուկները<sup>30</sup>»:

Ա.Մեհացահանյանը, ուսումնասիրելով գրույցի հանելուկները, մի շարք արժեքավոր եզրահանգումներ է արել, մասնավորապես հայանարերելով դրանց քաղման ևս մի աղբյուր՝ «Հարցմունք Բարսղի և պատասխանիք Գրիգորի» բարձրագույնական երկը<sup>31</sup>:

Պատմության հայկական օրինակն առանձին ուսումնասիրության նյութ է դարձրել Ա.Մրապյանը, հրատարակել է քննական բնագիրը, համեմատելով գրույցի 35 գրչագիր և 14 սուլագիր օրինակ<sup>32</sup>: Ա.Մրապյանը, մտնրազնին քննության ներքակելով պատմության տարբեր պատմմաները, հավաստում է, որ «XVI դ. սկսած արդեն կան նրա բանասիրական պատմմաների գրատմմները, որոնք ավելի ևս ճշտավորված են XVII-XVIII դդ.»<sup>33</sup> և որ «հայկական գրույցն սուրբ է, քե՛ր բանասիրական, քե՛ր գրական կյանքով»<sup>34</sup>:

Սակայն մինչև այժմ «Մանկան և աղջկա պատմության» հայկական տարբերակի ուսումնասիրությունն ընթացել է գրեթե բացառապես հայագիտական տեսանկյունից: Դեռևս ոչ մի փորձ չի արվել համեմատաբար հայերեն բարձրագույնությունը անմիջականորեն արարերեն բնագրի հետ, մինչդեռ ակնհայտ է, որ նման մի համեմատություն կարող էր նոր յուս սփռել այս հուշարձանի հետ կապված մի շարք չլուծված խնդիրների վրա և, մասնավոր, հնարավորություն կրճճուներ վերջապես պարզել, քե՛ր իրո՞ք հայերեն բարձրագույնությունը հենց արարերեն բնագրից է կատարվել: Արարերենից բացի, գոյություն ունեն նաև մի շարք լեզուներով պատմմաներ, որոնք նույնպես առ այսօր չեն համեմատվել հայերենի հետ: Երև այս ամենին ավելացնենք նաև հնագույն այս մոտիվի գրական մշակումների պատմությունը, որն ընդգրկում է ինչպես արևելյան, այնպես էլ եվրոպական գրականությունը, սպա նոր միայն պարզ կդառնա, քե՛ր դեռ որքան մեծ աշխատանք կա անելու՝ մինչև բարդ ճշտավորումների այս բավառում հայկական տարբերակի գյաժված տեղի ու դերի մասին հստակ պատկերացում կազմելը:

4642



## 2. Այլաբեր գրությունները և հայերեն քարգմանության բնագրի խնդիրը

Արդեն հիշատակված վրացականից բացի առայժմ հայրանի են «Մանկան և աղջկա պատմության» նաև հետևյալ տարբերակները՝ արարական, պարսկական, ասորական, հրեական, տաջիկական, ուզբեկական<sup>27</sup>, թուրքական:

Բացառությամբ «Մանկան և աղջկա պատմության» վրացական և արարական տարբերակների (որոնք համեմատաբար լավ են ուսումնասիրված), մասամբ նաև թուրքականի, մնացյալ այլաբեր տարբերակները կամ համարյա բոլորովին ուսումնասիրված չեն, կամ նոր են միայն սկսում գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Առևս չի պարզված, թե ո՞րն է գոյություն ունեցող տարբերակներից ամենահինը, հետևաբար և նախնականը, ե՞րբ է ստեղծվել: Այս խնդիրը հնարավոր կլինի թույլ միայն այն ժամանակ, երբ պարզվեն բոլոր լեզուներով գոյություն ունեցող տարբերակների քարգմանության աղբյուրը և ժամանակը: Պատմության ուսումնասիրությունը դժվարացնում է այն հանգամանքը, որ առ այսօր գոյություն չունեն նրա այլաբեր տարբերակների աշխարհով մեկ ցրված բնագրերի (ձևազիր և տպազիր) բնական հրատարակությունները: Հայկական տարբերակի բնական բնագրի հրատարակումը փաստորեն առաջին րայն է այդ ասպարեզում:

Ինչպես հայկական, այնպես էլ նշված տարբերակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս պատմությանը նրա բազմադարյան գոյության ընթացքում ուղեկցել է միևնույն երևույթը՝ նրա սյուժեն (ֆաբուլան) ամբողջությամբ վերցրած և նրա միջին մասը, այն է՝ «հարցմունքը», ապրել և զարգացել են միմյանցից անկախ, յուրաքանչյուրը սեփական ուղիով: Իրա հետևանքով առաջացել է պատմության երկու էթնական տարբերակ:

1. Սյուժեն ինքնին է զարգացում ապրել, ձևոր բերելով նորանոր մանրամասներ, բարդանալով և այնքան հեռանալով նախնական վիճակից, որ սկսել է ընկալվել որպես մեկ այլ, նոր պատմություն:

2. Սյուժեն պահպանվել է իր նախնական վիճակով, իսկ զարգացում ապրել է պատմության միջին մասը՝ հարցմունքը, վերածելով իսկական հարցարան-հանրագիտարանի, իր մեջ ներառելով տնեմարագմազան աղբյուրներից բաղված հարցեր: Այսպիսով «Մանկան և աղջկա պատմությանն» են սկսել առնչվել բազմաթիվ և բազմապեզու այլ ստեղծագործություններ, որոնք յուրօրինակ «հարցերի (հանելուկների) մատակարարման» աղբյուր են

ծառայել նրա համար: Յուրաքանչյուր լեզվով գոյություն ունեցող տարբերակում հարցերն ունեն ուրույն բովանդակություն, թեև մասամբ նաև կրկնվում են:

Ինչպես տեսնում ենք, «Մանկան և աղջկա պատմության» ուսումնասիրությունը «միահյուսվում է» նաև պատկանելի բով ու այլ գրական հուշարձանների հետազոտման հետ, որոնք ստեղծված են տարբեր ժամանակներում և պատկանում են տարբեր գրականությունների: Այս հանգամանքը ստիպում է հետազոտությունները ծավալել ոչ միայն խորությամբ, այլև լայնությամբ, հետևաբար բանասերներից դեռևս շատ ցանքեր ու ժամանակ կպահանջի:

«Մանկան և աղջկա պատմությանը» ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվող բազմաթիվ հարցմանց գրքերից առայժմ համեմատաբար լավ են ուսումնասիրված միայն «Թավադդուդը» և “Беседа трех Святытелей” երկը<sup>28</sup>: «Թավադդուդի» ուսումնասիրողները, մասնավորապես, համակարծիք են այն հարցում, որ նախասպես այն եղել է ինքնուրույն, «Հազար ու մի գիշերի» հետ ոչ մի կապ չունեցող ստեղծագործություն և վերջինիս մեջ ընդգրկվել նրա այսպես կոչված «բաղդադյան շերտի» կազմավորման ընթացքում (X-XII դդ.)<sup>29</sup>:

Մասնատիրապես, «Թավադդուդը» և «Մանկան և աղջկա պատմությունը» միմյանց են առնչվում ոչ միայն վերևում հիշատակված 7 համընկնող հարցերով: Դրանք նախ և առաջ իրենց կառուցվածքով և բնույթով նույնական երկեր են: Երկուսն էլ իրենցից ներկայացնում են բազմաբնույթ հարցերի ու դրանց պատասխանների յուրօրինակ ամբողջություն, որն ընդհանրված է որևէ պատմությանը, ընդ որում պատմության սյուժեն անպայման ենթադրում է գործող անձերից մեկի գիտելիքների բնում՝ առաջադրվող հանելուկների կամ հարցերի միջոցով: Երկու դեպքում էլ գործող անձերից մեկը իմաստուն աղջիկն է, որն ըստ մի տարբերակի («Թավադդուդ») իմաստունությամբ գերազանցում է բոլորին, իսկ մյուսի («Մանուկ և աղջիկ») ի վերջո իրեն պարաված է ճանաչում արքայազնից: Այլ կերպ ասած, այս երկու ստեղծագործություններն էլ պատկանում են գրական հուշարձանների այն ախպին, որոնք միջնադարում լայնորեն տարածված էին ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի երկրներում, այդ թվում և Հայաստանում, և կրում էին «գիրք հարցմանց», «հարցմունք և պատասխանիք» (Fragebücher, книги-вопросники կամ вопросы и ответы, preguntas y respuestas)<sup>30</sup> անվանումը: «Հարցմանց գրքերի» մեջ էին ընդգրկվում այլազան աղբյուրներից բաղված հարցեր, որոնք կրում էին կամ



որոշակի, միաստոր բնույթ (ասենք, գուտ կրոնական), կամ էլ ոչ միաստոր, այս դեպքում արդեն վերաբերվելով գանազան գիտությունների և այլ ասպարեզների: Որոշ դեպքերում հարցերի և որսասայտանների ամբողջությունը պարփակվում էր որևէ համապատասխան սյուժեի մեջ, որը թույլ էր տալիս դրանք տալ գործող անձանց անունից, իսկ ամենից հաճախ հարցերն ու պատասխանները ուղղակի հաջորդում էին միմյանց՝ առանց որևէ սյուժեի կամ գործող անձի միջամտության: Յուրաքանչյուր միջավայր, բնականաբար, հարցերի վրա բողոնում էր իր կրոնական ու մշակութային ստանձնահատկությունների դրոշմը, սակայն կառուցվածքային սկզբունքն ամենուր մնում էր նույնը: Ինչպես իրավամբ նկատում է Յ.Հարովիցը «Թողը այս հարցմանց գրքերը նման են միմյանց կառուցվածքով և մասամբ նույնիսկ բովանդակությամբ»<sup>22</sup>: «Երջին հանգամանքը բացատրվում է հարցերի բաղման աղբյուրների ընդհանրությամբ: Այսպես, օրինակ, ռուսական "Беседа трех Святителей" պատմության մեջ, ինչպես նաև մի շարք հունական, բասիլևական ու սլավոնական նույնատիպ ստեղծագործություններում արարունակվող բազմաթիվ հարցերի ընդհանրությունը բացատրվում է հենց դրանով<sup>23</sup>: Նույն պատկերին ենք հանդիպում նաև «Մանկան և աղջկա պատմության» և "Беседа трех Святителей" հուշարձանի մեջ ընդգրկված հարցերի բաղման աղբյուրները համեմատելիս, այսպես, այս երկու երկերում էլ հարցերի մի մասը բաղված է միևնույն աղբյուրից՝ հունարենից բարգմանված «Հարցմունք Բարսեի և պատասխանիք Գրիգորի» ստեղծագործությունից<sup>24</sup>: «Մանկան և աղջկա պատմության» և «Թավադդուդի» յոթ հարցերի համընկնելու պատճառը, ամենայն հավանականությամբ, նույնպես այդ երկույնն է:

Հարցմանց գրքերի ատիճանական հարստացումը տարբեր աղբյուրներից բաղված հարցերով կարելի է դիտել նաև «Թավադդուդի» իսպաներեն բարգմանության օրինակով, այսպես, ըստ Յ.Հարովիցի, արաբերենից բարգմանվելուց հետո «Թավադդուդի» իսպաներեն տեքստի մեջ են մտցվել «Աղբիս կայսեր գրույցը Էպիտոս մանկան հետ» երկից քրիստոնեական բնույթի հարցեր<sup>25</sup>:

Ինչպես կհամոզվենք ստորև, «Մանկան և աղջկա պատմության» կապը «Հագար ու մեկ գիշեր» ժողովածուի հետ խիստ պայմանական է, այն վերջինիս մեջ է գեանդվել ճիշտ այնպես, ինչպես «Թավադդուդը», «Պոնձե քաղաքի պատմությունը», Խիկար իմաստունի<sup>26</sup>, յոթ վեզիրների (յոթ իմաստասիրաց)<sup>27</sup> և շատ այլ ինքնակա պատմություններ: Այդ իսկ

պատճառով էլ «Մանկան և աղջկա պատմության» արարական նախօրինակը բացակայում է «Հագար ու մեկ գիշերի» գանազան լանդագրությունների մեծ մասում<sup>28</sup>: Ե՞րբ է «Մանկան և աղջկա պատմությունն» ընդգրկվել «1001 գիշերի» արարելուն բնագրի մեջ՝ դեռևս արագված չէ, մինչդեռ այդ կապով էր կաղմորոշել մեզ հայերեն բարգմանության ժամանակը ճշտելու հարցում, քանի որ «Մանկան և աղջկա պատմությունը» ևս, ինչպես և «Պոնձե քաղաքի պատմությունը»<sup>29</sup>, հայերեն է բարգմանվել ամենայն հավանականությամբ դեռևս մինչև «1001 գիշերի» բաղկացուցիչ մաս դառնալը՝ որպես ինքնակա ստեղծագործություն:

Պատմության հիմնական մտախիղճը իսրիին հանկուկներ լուծելու առաջադրանքը, որը չկատարելու դեպքում մահապատիժ է սպառնում, իսկ կատարելու դեպքում հաղթողն իրավունք է ստանում անունանալու արքայադստեր (բազուհու) հետ, չափազանց մեծ հեռություն ունի և արտացոլվել է գանազան հեագույն գրական հուշարձաններում: Այսպես, օրինակ, հունական ժողովրդական առասպելում Էդիպոսի մասին, որի կիսման վրա Մովսիկեսը գրել է իր գլխագործոցի «Էդիպոս արքան» (մոտ մ.թ.ա. 430 թ.), այս մտախիղճ հանդես է զայիս հեռեկայ կերպ, Էդիպոսը հասնում է Թերեի դարպասներին, որ նստած է Աֆինքսը՝ կես-առյուծ, կես-կին, Աֆինքսը հանկուկ էր առաջարկում բոլոր անցորդներին, որը չլուծելու դեպքում կող էր տալիս նրանց: Էդիպոսը կարողանում է լուծել Աֆինքսի հանկուկը, ոչնչացնում է նրան և բոտ հայտարարված պայմանի, որպես Թերեի ազատարար, դառնում վերջինիս բազավորը, անունանալով Իոկատոսի Թերեի բազուհու հետ:

Նման հուշարձաններից է նաև հունական «Տյուրոսի Ալայոնիսար» վեպը, որը մեզ է հասել VI դ. լատինական տարբերակով և որի համառու վերաշարադրանքը գտնում ենք "Gesta Romanorum"-ի 153-րդ գլխում "De tribulatione temporali quae in gaudium sempiternum postremo commutabitur" վերնագրով<sup>30</sup>: Նույն մտախիղճ է կրկնվում XIV դ. գերմանական մի պոեմում, որի հեղինակն է Հայնց Քլյոները, ինչպես նաև ֆրանսիական մի նովելում՝ գրված Ստեֆան Տարուրյու Գիժոնցու կողմից (մոտ. 1590 թ.)<sup>31</sup>:

Անունությունը նախորդող բանավեճի թեման գտնում ենք նաև իսպանական, ֆրանսիական և իտալական հեռեկայ երկը կառակերպություններում Մոլիերոյի "El Desdèn con el desdèn"-ում, Մոլիերի "La Princesse d'Alide"-ում և Կ.Գոցիի "La principessa filosofa"-ում<sup>32</sup>:

Ուսումնասիրողների կողմից նշվել են և մի շարք այլ գուգանեմներ<sup>33</sup>,



որոնք վկայում են նշված մտախի՛ Արևմտաքրի գրականություններում տարածված լինելու մասին:

Նույն պատկերն ենք գտնում նաև Արևելքի գրականություններում, ուր ևս հետազոտողների կողմից մասնաանշվել են գտնազան գուգահեռներ: Այսպես, բանավե՛նի կամ որևէ այլ փորձության մտախի՛ը որպես ամուսնության պայման, հանդես է գալիս հնդկական գրականությունում՝ Մոմադևայի «Ջրայցների օվկիանոս»-ում («Kathāsarisāgara», գիրք V, գլ. XXIV և գիրք XII, գլ. LXXII)<sup>42</sup>: Եվ վերջապես, մեզ հետաքրքրող մտախի՛ «ամենադասական» օրինակներից է մեր քննության առարկա «Մանկան և աղջկա պատմությունը», որի գտնազան տարրերակները կարելի է գտնել ըստ արևելյան գրականություններում:

Իր հերթին՝ հանելուկներ լուծելու աստաղդանքը՝ կապված ամուսնության հետ, իրենից ներկայացնում է հանելուկների գործնական կիրառման հնագույն և ամենատարածված ձևերից մեկը, սրբ հայտնի է գտնազան ժողովուրդների ազգագրությունից: Այսպես, ըստ հետազոտողների, մի շարք ժողովուրդների «արքունիի նվիրագործման ծեսի (ինիցիացիայի) խորհրդավոր արարողությունների ժամանակ հանելուկներն օգտագործվել են իբրև նվիրագործվողի մտավոր ունակություններն ու հասունությունը փորձելու կարևոր միջոցներ: Դրա վերապրուկներից է, օրինակ, մինչև վերջերս Լյ աարբեր ժողովուրդների մոտ հարասևող այն սովորույթը, երբ ամուսնությունից սուսջ հարսնացուն կամ փեսացուն հանելուկներով փորձում էին միմյանց մտավոր ունակությունները և փեսացուն իրավունք էր ստանում հարսնացուի կողքը նստել նրա առաջադրած հանելուկները լուծելուց հետո միայն: Նույն այդ սովորույթի մասին վկայություններ են պահպանվել նաև հրաշապատում հեքիաթներում, երբ փեսացուն նախքան ամուսնանալը պարտավոր էր լուծել հարսնացուի, երբեմն Լյ նրա հոր կողմից առաջարկված հանելուկները կամ կատարել դժվար իրագործելի պայմաններ»<sup>43</sup>:

Այս կապակցությամբ ուշագրավ է հասկանալու ժ.Պրժիլուսկու ուսումնասիրությունը նշված սովորույթի այլևայլ դրսևորումների մասին՝ Հնդկաստանի, Չինաստանի, Կամբոջայի, Մալայզիայի, Մադագասկարի և հարակից շրջանների մի շարք ժողովուրդների մոտ, որոնք արտացոլվել են նրանց բանահյուսությունում, գրականությունում և ազգագրությունում<sup>44</sup>: Զննելով, մասնավորապես, սիամական «Noothuk Pakaranam» գրական հուշարձանը, նա գալիս է հետևյալ եզրակացության. «...Շրջանակ-պատմության մեջ ներառված հեքիաթները, դրանք ավարտող հարցերով և աղջկա

պատասխաններով հանդերձ, ոչ այլ ինչ են, քան առեղծվածներով ու հանելուկներով ընդմիջարկված այն չափածո երկխոսությունների զարգացումը՝ արձակով, որոնք նախորդում են նշանոյրեքին հարավ-ասիական հասարակություններում<sup>45</sup>»: Այսպիսով, եթե ըստ նախորդ ուսումնասիրողների մի շարք պատմություններ մի որևէ ընդելուզող շրջանակ-պատմության մեջ ներառելու սկզբունքը համարվում էր միայն հնդկական գրականությանը բնորոշ<sup>46</sup>, ապա ժ.Պրժիլուսկու կարծիքով այդ երևույթը շատ ավելի լայն տարածում ունի և բնորոշ է հարավ-ասիական մի շարք մշակույթների, միաժամանակ ուղղակիորեն առնչվելով նաև ամուսնության կամ նշանոյրեքի ծեսին: Ժ.Պրժիլուսկին ցույց է տալիս, որ բացի հնդկական svayamvara-ից (որ սամսկրիտում նշանակում է «ամուսնու հրապարակային ընտրությունը արքայադուստեր կողմից՝ այդ առիթով հավաքված հավակնորդների միջից, որը սովորաբար արտահայտվում է որևէ առարկայի նետումով», օրինակ, գնդակի, ոսկե կիարոնի, վզնոցի, ծաղկեպտակի և այլն<sup>47</sup>), համանման սովորույթ տարածված է Եդել նաև «ողջ հարավ-ասիական աշխարհում»<sup>48</sup>: Ավելին, նա հարավ-ասիական ծագում է վերագրում նաև հնդկական svayamvara-ին՝ վկայակոչելով հարավ-ասիական գտնազան ժողովուրդների մոտ տարածված այն ավանդույթը, երբ svayamvara-ն ուղեկցվում է (կամ դրան նախորդում է) երգերով, երկխոսություններով՝ տղաների և աղջիկների խմբերի կամ երգչախմբերի միջև: Հիշյալ երկխոսությունները խաղի՝ հարցերի և պատասխանների, ձևով են տեղի ունենում, ընդ որում վերջիններս ամենից հաճախ իրենցից ներկայացնում են հանելուկներ և դրանց լուծումները: Այս ամենը մի յուրատեսակ հարցաքննություն է, որը հնարավորություն է բնձնում ճանաչելու քննվող անձնավորությանը<sup>49</sup>:

Վերոհիշյալ փաստերի լույսի ներքո դժվար չէ եզրակացնել, որ «Մանկան և աղջկա պատմությունը» պետք է որ ոչ միայն մեծ հնություն ունենա, այլև փաստորեն արքայադուստեր կողմից՝ ամուսնու հրապարակային ընտրության (svayamvara-ի) մի օրինակ է, որն ուղեկցվում է աղջկա և պատանու երկխոսությամբ՝ հանելուկների ամուսնական և դրանց լուծումները գտնելու ավանդույթով:

Հետազոտողներից է Ռոսսին, հանգամանորեն քննելով «Մանկան և աղջկա պատմության» հիմնական մտախի՛ի ըստ արևելյան դրսևորումներն ու գուգահեռները քե՛ Արևմտաքրի, քե՛ Արևելքի գրականություններում, գալիս է հետևյալ եզրակացության. «Այս ֆիաթը, ... որ պայմանականորեն կազմում է



Տուրանդադ, ... հասկանաբար հնդկական ծագում ունի, սակայն միաշյուսվել է ունիվերսալ ավանդական ժողովրդական տարրերի (հունկրակների) հետ, միջնադարում ստարածված է ելել Արևմուտքում և Արևելքում, Հնդկաստանում և հատկապես Պարսկաստանում...»<sup>52</sup>։ Մակայն է. Առախին, ծանօթ չլինելով Ժ.Պրծիլուսկու վերահիշյալ ուսումնասիրությանը, «Մանկան և աղջկա պատմությանը» հնդկական ծագում է վերագրում յոթ այն պատճառով, որ վերջինիս հիմնական մոտիվի՝ իրեն հայանի արևմտյան և արևելյան գուգահեռներից հնագույնը (ժամանակագրական առումով) հնդկական «Չրույցների օվկիանոս» հուշարձանն է (մտա. 1070 ք. մ.թ.)։ Հարկ է նշել, սակայն, որ այս հուշարձանում ապկա երկու գուգահեռները համեմատելի են «Մանկան և աղջկա պատմության» հետ սույլ այն առումով, որ դրանցից մեկում արքայազուտապը սրպկա իր հետ ամուսնանալու պայման պահանջում է տեսնել դժվարամատչելի ոսկի բազարը, իսկ մյուսում ամուսնության պայմանը բանափեծում հաղթելն է։ Այլ կերպ ասած, նշված երկու հնդկական գրույցները միայն չափազանց հետափոր աղբյուրներ ունեն «Մանկան և աղջկա պատմության» հետ՝ յոթ հիմնական մոտիվի («պայմանով ամուսնություն») առումով, մինչդեռ դրանց սյուժեները բոլորովին այլ են։

Այսպիսով, ուսումնասիրությանն ենթարկված վերոնշյալ կարելի է միայն ենթադրություններ անել «Մանկան և աղջկա պատմության» հնարավոր հնդկական կամ հարավ-ասիական ծագման վերաբերյալ՝ հիմնվելով Ժ.Պրծիլուսկու վերոհիշյալ ուսումնասիրության վրա, իսկ դրանք հաստատող վաստերը, այսինքն՝ պատմության հնդկական կամ հարավ-ասիական բուն մոտիվները, դեռևս սպասում են իրենց հայտնաբերողին։

Այժմ ավելի համզամտորեն կանգ առնենք «Մանկան և աղջկա պատմության» այլաբերական տարրերակներից նրանց վրա, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ հայերեն բարգմանության բնագրի հայանարժեքման հարցում։

Պատմության արարական տարրերակը մեզ է հասել մի շարք ձեռագրերում, որոնք պահվում են աշխարհի տարբեր գրադահոցներում<sup>53</sup>։ Նախկին Խորհրդային Միությունում առայժմ հայտնի միակ օրինակը, որը թվագրվում է XVIII դարով, պահվում է Ս.Պետերբուրգում, Արևելագիտության ինստիտուտում<sup>54</sup>։

Բացի այդ, Ս.Պետերբուրգի Մ.Ն.Սաչախով-Շչևոլդիի անվան Պատական Հանրային գրադարանում պահվում են հրեատառ արարերեն ձեռագրերի չորս սրատառիկներ, որոնք համադրա ամբողջությամբ

վերաբառադրում են մեզ հետաքրքրող գրույցը։ Այս ձեռագրերը թվագրված են, համապատասխանաբար, XIV դ., XV դ., XVI դ. առաջին կեսով, XVII-XVIII դարերով<sup>55</sup>։

Ռպակտի պարզ դառնալ, թե ինչ առնչություն ունեն միմյանց հետ արարական և հրեատառ արարերեն հիշյալ պատմաները, դիմենք մի համատար պատմական ակնարկի։ Հայտնի է, որ Արարական խաչիճայության ստեղծման առաջին իսկ դարերից սկսած արարերենը դարձավ Սերձավոր Արևելքի երկրներում ապրող կարախիների և ռաբբանիտների խոսակցական լեզուն, մինչդեռ նրանց կողմից օգտագործվող գիրը շարունակում էր մնալ եբրայերենը<sup>56</sup>։ Այսպիսով առաջացան եբրայատառ արարերեն գրվածքները, որոնք այժմ պահվում են աշխարհի տարբեր գրադարաններում։ Այս գրվածքներն ամենատարբեր բնույթի են, այլ թվում և գեղարվեստական-բանասիրական, վերջիններիս թվում կարելի է գտնել բազմաթիվ արարական ժողովրդական երիտարներ, գրույցներ, նովելներ, երգեր, բանաստեղծություններ և այլն, որոնք «ակնառու կերպով վկայում են Սերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի հրեաների ու կարախիների ցուցաբերած մեծ հետաքրքրության մասին դեպի արարական բանասիրությունը»<sup>57</sup>։ Հայտնի են նաև հիշյալ եբրայատառ արարերեն տեքստերի մի շարք հրատարակություններ, որոնք վերաբերում են XIX դ. վերջին – XX դ. սկզբին և լույս են տեսել աշխարհի տարբեր ժայրերում (Ալժիր, Բաղդադ, Բոմբեյ, Օրան, Թունիս, Լիվուան և այլն)<sup>58</sup>։

Ի վերջ, «Մանկան և աղջկա պատմության» հրեատառ արարերեն տարրերակը հիշատակվում է այն ստեղծագործությունների թվում, «որոնք մեծ ժողովրդականություն են վայելել հրեական միջավայրում դարեր շարունակ» և որոնք «կազմում էին ինչպես ձեռագիր, այնպես էլ սպարակիր հրեական գրքի անվանացանկի անկապտելի մասը Սերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում»<sup>59</sup>։

Այսպիսով, հրեատառ արարերեն վերոհիշյալ ձեռագրերը մեզ լրացուցիչ տեղեկություններ են քննադատում արարական տարրերակի մասին, վերաբերվելով անհամեմատ ավելի վաղ ժամանակաշրջանի, բան վերոհիշյալ արարերեն պատմուղ, դրանք արտացոլում են պատմության արարական տարրերակի ավելի նախնական միճակը և արժեքավոր են առաջին հերթին հենց դրանով։

Ցավոք սրտի մինչև այժմ հրատարակված չեն ոչ սրարական, ոչ էլ հրեատառ արարերեն պատմաների բնական բնագրերը, որոնք կարող էին



թույլ տալ ավելի ճշգրիտ նզարակացություններ անել դրանք հայերեն տեքստի հետ համեմատելիս: Իսկ ձեռագրերի տխրված լինելը աշխարհով մեկ մեզ համար անմատչելի է դարձնում դրանց ուսումնասիրությունը: Մակայն նույնիսկ մեզ մատչելի միակ արարերեն ձեռագրի, ինչպես նաև վերոհիշյալ չորս հրեատառ արարերեն ձեռագրերի հետ հայերեն տարբերակի համեմատությունը թույլ է տալիս մի շարք հետաքրքիր և նույնիսկ անսպասելի եզրակացություններ անել դրանց փոխնարարերության մասին:

«Մանկան և աղջկա պատմության» հայկական տարբերակի համեմատությունը B-1122 արարերեն ձեռագրի տեքստի հետ ցույց է տալիս դրանց բովանդակությունների նույնությունը (նույն դրվագների նույն հերթականությունը), բացառությամբ որոշ աննշան մանրամասների:

1. Արարերեն տարբերակում գլխավոր եերուտը արքայազն է և ոչ թե իշխանի որդի, ինչպես հայերենում, իսկ նրա ընտանիքի սնանկանալու պատճառը չի կիշատակվում<sup>55</sup>, մինչդեռ հայերենում որդին շոպյում-փասանում է կորունցվածքը:

2. Զիավորը, որին սրբայագնը հանդիպում է ճանապարհին, նրան է հանձնում նամակը՝ փաթարված մի թաշկինակի մեջ (*كتاب مختوم مغلوف في منديل*)<sup>56</sup>, և վերջինս, այն վերցնելիս, համարում է այն ու դնում գլխին:

(*واخذ الكتاب وبأسه وحطه على رأسه*)<sup>57</sup>, մինչդեռ հայերենում մանուկն ուղղակի նամակը դնում է իր կաշվե քսակի մեջ:

3. Երբ արքայազնը խմելու ջուր է փնտրում և չի գտնում, նկատում է, որ ձին առատորեն քրտնել է, քանդում է թաշկինակը, որի մեջ փաթարված է նամակը, դրանով սրբում ձիու քրտինքը և խմում այն:

(*واخرج المنديل الذي كان الكتاب مغلوف فيه وحله ومسه عرق الفرس وشرب*)<sup>58</sup>, մինչդեռ հայերենում մանուկը փնտրում-գտնում է մի կին ջրոտ, որից ջուր է հանում իր կաշվե քսակով, ուր գտնվում էր նամակը:

4. Արարական տարբերակում արքայադստեր՝ արքայազնին տված 37 հարցերից հայկականում կրկնվում են միայն 13-ը, իսկ մյուսները տարբեր են:

5. Արքայազնի՝ արքայադստերը առաջարկած հանելուկի վերջին մասը տարբերվում է հայկական տարբերակի համապատասխան մասից, քանի որ երկու տարբերակներում այլ են այն երկու էպիգրոֆները, որոնց մասին նա հարցնում է, այն է՝ ջրոտից կաշվե քսակով ջուր հանելու դրվագը հայկականում և նամակը գլխին դնելու, այնուհետև ձիու քրտինքով ծարավը հագնելու մասին դրվագը արարականում:

6. Հայկական տարբերակում արքայադուստրն է իրեն պարտված ճա-

նալում, մինչդեռ արարականում նրան պարտված է ճանաչում նրա հայրը<sup>62</sup>:

Իսկ այժմ անդրադառնանք հայկական<sup>63</sup> և արարական տարբերակների համընկնող հատվածներին, ավելացնելով նաև երբայատառ արարերեն պատումի համապատասխան հատվածները: Նշենք, որ երբայատառ արարերեն տեքստը մեջ ենք բերում արարական տառադարձությանը՝ վերականգնելու համար նրա նախնական տեքստը: Ուղղագրությունը թե՛ արարերեն, թե՛ երբայատառ արարերեն տեքստերի համար բողոմ ենք այնպիսին, ինչպիսին ձեռագրերում է, առանց ուղղումների:

1. <i>Ասէ աղջիկն.</i>	فقالت له ترجمانه	فقالت له عن ستي
– <i>Ի՛նչ գերեզման էր շարժում և զնայում:</i>	تقول لك ستي اخبرني	اساله اخبرني عن قبر ساير وصاحبه
<i>Ասէ մանուկն.</i>	لي عن قبر ساير	حي فرد لها الجواب
– <i>Յանան մարգարէն էր, որ ծուկն կլաւ, շարժուն և զնայուն եղև՝:</i>	وصاحبه حي فرد لها الجواب وقال لها القبر	وقال لها هو يونان النبي الذي بلعه
2. <i>Ասէ աղջիկն.</i>	الساير هو الحوت الذي بلغ يونان النبي عليه السلام. <sup>64</sup>	الحوت عليه السلام. <sup>64</sup>
– <i>Այն ի՛նչ տեղ էր, որ քանի առտուած գաշխարհս ստեղծեր էր, նա արեզակն ի վերան չէր դիպեր:</i>	فقالت له الترجمانه تقول لك ستي اخبرني عن ارض ما نظرة الشمس الا فرد مره ولحده فقال لها الشاب	عن ارض نصرت الشمس نظره ولحده وقال لها وقت ضرب النبي موسى عليه السلام بمصاته البحر فشقه
<i>Ասէ մանուկն.</i>	موسى بمصاته فشقه	بنى اسرائيل على
– <i>Շովուն յատակն էր, որ Մովսէս պատառեաց գտազանաւն, և անցոյց գիսրակն ընդ այն՝:</i>	قسمين وعبر بنى اسرائيل على ارض يابسه... <sup>65</sup>	الارض اليابسه فنضرتها الشمس مره واحدة. <sup>65</sup>
3. <i>Ասէ աղջիկն.</i>	فقالت له الترجمانه	ثم قالت له
– <i>Այն ի՛նչ ծառ էր, որ ունի աասներկու ճիւղը և սունն ճիւղը՝ երեսուն տերև, և պառոզ նորաս և ու սպիտակ էր:</i>	تقول لك ستي اخبرني عن شجرة فيها اثنا عشر غصن وفي كل غصن ثلاثين ورقة وكل ورقة نصفها ابيض	اخبرني عن شجرة لها اثني عشر غصن ثلاثين ورقة وتحتها زياتين لخدمها
<i>Ասէ մանուկն.</i>	ونصفها الآخر اسود فرد لها الجواب وقال الشجرة هي السنة والاثنا عشر غصن اثنا عشر	بيضه والآخر سودا قال هي السنة وشهورها والليالي والايام. <sup>72</sup>
– <i>Ծառն տարին, տասներկու ճիւղք՝ ամիսքն է տասներկու,</i>		







յայնորին հիսուն կանկուն,  
բարձրորին՝ երեսուն կանկուն»<sup>90</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայերեն, արաբերեն և երբայատառ արաբերեն աարերապակներում միմյանց հետ համընկնող վերոնշյալ տասներկու հարցերից ութը վերաբերում են Հին Կտակարանում հիշատակվող անձանց, առաջիկաներին և իրադարձություններին (Հունան մարգարե, Մովսես և նրա զավագանը, Ադամ և Եվա, Էնոկը և Եղյա, Դավիթ կինը, Նոյան տապան և այլն): Վերջիններս հանդես են գալիս, Հին Կտակարանից բացի, նաև Կտրանում, ուստի ծանոթ են ոչ միայն հրեաներին և քրիստոնյաներին, այլև մահմեդականներին:

Հարկ է նշել, որ նման համընկնող հատվածներ առկա են ոչ միայն հայերեն, արաբերեն և երբայատառ արաբերեն պատումների հարցերում ու պատասխաններում, այլև բուն պատմության գաղափարներում: Այսպես, օրինակ, գրույցի հայկական հինգ խմբագրություններից չորսում արքայադաստըն ունի «արտա մի բարձման», որի միջոցով է խստում մանկան հետ»<sup>91</sup>. նույն պատկերն ենք գտնում նաև արաբերեն և հրեատառ արաբերեն աարերապակներում, միայն այն աարերաբայամբ, որ հայերենում բարձմանչուռ մասին հիշատակվում է ընդամենը մի քանի անգամ, մինչդեռ վերջին երկու աարերապակներում՝ յարաբանչուր հարցը ապխ:

Ահա եւ մի օրինակ.

Ասաց աղջիկն ընդ իւր բարձմանն՝ ընդ մանկանն թէ՛ «Ողև՛ս որ տամ  
քեզ յայն կրխայն, որ քս ընկերասացդ ալի»<sup>92</sup>:

فَقَالَتْ لَهُ التَّرْجَمَاتُ تَقُولُ لَكَ سَتِي أَنْصُرُكَ إِلَى الْغَدَاءِ فَإِنْ عَلِمْتُكَ سَقَمْتُكَ كَأَسِ  
أَرْفَاقِكَ.<sup>94</sup>

ثم قالت له انصرف الى غد واعلم انك تشرب بكاس الذي شربه غيرك .<sup>95</sup>

Նշենք նաև, որ արաբերեն և հրեատառ արաբերեն տեքստերը համընկնում են հաճախ բառացիորեն, հատկապես հարցերում և պատասխաններում: Մակայն, այնուամենայնիվ, հրեատառ արաբերեն ձևազերթի որոշ հատվածներ սկնհայտորեն աարերվում են արաբերեն B-1122 ձևազերթի տեքստից: Այդ աարերաբայումները վկայում են այն մասին, որ արաբերենով եւ, ինչպես և հայերենով, գրույթում են ունեցել այս գրույցի մի քանի խմբագրություններ. նմանօրինակ այլ պատմությունների մեան, այս գրույցը եւ, դարերի ընթացքում, «էվոլյուցիա է ապրել»: Այդ են հաստատում նաև երբայատառ արաբերեն չորս ձևազերթի այն հատվածները, որանք, որոշ մանրամասներում, աարերվում են միմյանցից:

Աստ մանուկն.

— Գիշեր և գորեկն է,  
որ ոչ բաժանին  
ի միմեանց:  
Երկրորդ՝ մահ և  
կեանքն է<sup>93</sup>:

متجاحين...  
وقال اما  
المتلازمين  
الموت والحياه  
واما المتجاحين  
هم الليل  
والنهار...<sup>86</sup>  
ومتجاحين  
الجواب...  
والثنتين  
المتفتحين لليل  
والنهار والثنتين  
المتحاسنين الروح  
والجسد والثنتين  
المتباغضين الموت  
والحياة.<sup>85</sup>

10. Աստ աղջիկն.

— Այն ի՞նչ երկու սիրելիք են, որք  
ասան զմիմեանս:

Աստ մանուկն.

— Այդ հոգին և մարմին մարդոյ է,  
զի մինչ միատրեայ են ընդ  
միմեանս՝ սիրեն զիրեարս,  
բայց երբ բաժանին ի միմիանց՝  
ասան զիրեարս<sup>97</sup>:

11. Աստ աղջիկն.

— Այն ի՞նչ ծառ էր, որ  
ճիւղ ու տերև էր ու  
միս և արիւն եղև:

Աստ մանուկն.

— Այն Մովսէսի  
զառազանն էր, որ  
բանի ի ծառն էր՝  
ճիւղ ու տերև  
տնէր, երբ որ օձ դարձաւ՝  
միս և արիւն եղև<sup>98</sup>:

12. Աստ աղջիկն.

— Տապանին յայնորին  
կամ երկայնորին  
կամ բարձրորին  
որչա՞լի են:

Աստ մանուկն.

— Երկայնորին երեք-  
հարիւր կանկուն,

قالت له اخبرني عن  
شجرة كان لها فروع واعصان  
وورق قصار لها لحم ودم  
فرد لها الجواب وقال  
هي عصاة موسى النبي  
لما كانت في الشجرة  
كانت عصاه فلما  
قطعت من الشجر  
صارت حيه.<sup>88</sup>

قالت له اخبرني كم  
عرض السفينه وكم كان  
علوها وارتفاعها الى  
فوق وكم كان طولها  
قال لها كان عرضها  
اربعين ذراع وعلوها  
ثلاثين ذراع وطولها كان



Ուշագրավ է նաև այն փաստը, որ երբայտատա արարելն ձեռագրերի այն հատվածները, որոնք էապես տարբերվում են արարելն սրատույնց, երբեմն զարմանալիորեն նման են հայերեն տեքստին: Այսպես, օրինակ, արարելն տեքստում, երբ արքայազնը ներկայանում է պարսա՝ արքայազտեր հարցերին պատասխանելու, նրան նստեցնում են մետաքս բարձի վրա՝ ( «فاصرت الترجماته بان تحط له موشك ومخده من حرير وجلس...» ), մինչդեռ հայերեն և երբայտատա պատումներում նա նստում է սքրուին.

Եւ մտաւ մանուկն, <sup>98</sup> فدخل وسئم وجلس...  
 և բարև երես: <sup>99</sup> والقت له كرسي فجلس عليه.  
 Դրին արտ <sup>100</sup> فدخل وجلس على كرسي.

Բերենը եւ մի օրինակ, արարելն տարբերակում բացակայում են այն մի բանի հարցերը, որոնցով հայկական և երբայտատա տարբերակներում իր «ժարցարննորյուն» է սկսում արքայազուսարը.

Ասւ աղջիկն. <sup>101</sup> فقالت له ترجماته الملكة  
 – Ո՞վ է քո հայրն: <sup>102</sup> يقول لك ستي من اين  
 Ասւ մանուկն. <sup>103</sup> انت قال لها من اي ولي  
 – Հո՞վն և հարն <sup>104</sup> فقالت وما كانت والدتك  
 Ասւ աղջիկն. <sup>105</sup> قال الارض فقالت ومن  
 – Ո՞վ է քո մայրն: <sup>106</sup> ارضك قال الايام والليالي.  
 Ասւ մանուկն.  
 – Հո՞վն և անձրնն:

Ասւ աղջիկն.  
 – Ո՞վ է քո դայեակն:  
 Ասւ մանուկն.  
 – Այն է իմ դայեակն, որ  
 նա գիտ կու տեսնու, եւ զնա  
 չեմ տեսնուր. նա զիմ ծայնն  
 կու լսէ, և ես զնորա ծայն  
 չեմ լսել<sup>107</sup>:

Այժմ դիմենք մանկան ստաջարկած հանելուկին, վերջնականապես համոզվելու համար, այլ հայկական և երբայտատա արարելն տարբերակների միջև իբրև անվիճելի մի կապ գոյություն ունի.

Ո՞վ է այն,  
 որ հարուստ էր և աղքատացաւ,  
 և յիւր մարմնորին  
 հագաւ զիւր հայրն,  
 և հեծաւ զիւր մայրն և զնաց,  
 որ զիւր սաղաւնքն զտանէր,  
 նա մահն ի վերայ հասաւ,  
 վերոց զմահն յիւր ծիւն վրայ,  
 խնց մահովն ջուր  
 և խնցոց ծիւն այլ,  
 և ապրեցաւ ինքն և ծին այլ<sup>108</sup>:

اخبريني عن رجل كان في  
 خير وعافيه ونعمه فرهبت  
 خيره ونعمته واصابته العاقه  
 والعهد فركب ابوه ولبس امه وخرج  
 متوجهن في طلب رزقه فتاه  
 وضاع وجاع فاكل الشيء من الموت  
 ثم عطش فشرب من الموت بالموت  
 وسقا فرسه من الموت ونجى هو  
 وفرسه من الموت .<sup>104</sup>

اخبريني عن رجل كان في نعمه عظيمه فجار عليه الزمان ومسه الدهر الفجر  
 فركب ابوه ولبس امه وخرج يطلب الفرج من الله تعالى فلقاه الموت فحمله علي  
 راسه فتنجاه الجواد من الموت وشرب ماء لا من الارض ولا من السماء .<sup>105</sup>

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հանելուկի վերջին մասը, որը արարելն տարբերակում տարբերվում էր հայկականից (այդ մասին նշվել է և վերևում), համարյա բառացիորեն կրկնվում է երբայտատա արարելն պատումում. այլ կերպ ասած, հանելուկների նույնությունը հայկական և երբայտատա տարբերակներում բույլ է տալիս եզրակացնել, որ ջրհորից ջուր հանելու դրվագը ոչ միայն հայկական, այլև երբայտատա պատումում է գոյություն ունեցել, սակայն վերջինիս ձևագրերի թերի վիճակով մեզ հասած լինելու պատճառով չի պահպանվել:

Այժմ փորձենք ամփոփել վերոհիշյալ փաստերը: Դժվար չէ նկատել, որ հայկական և արարական տարբերակների ընդհանուր նմանության հետ միաժամանակ աչքի է զարնում նաև հայկական և երբայտատա խմբագրությունների անվիճելի նույնությունը: Հարց է ծագում. ինչու՞ կարելի է բացատրել հայկական և երբայտատա խմբագրությունների այդ նույնությունը: Արդյո՞ք հայերեն բարզմանության բնագիրը հանդիսացել է հենց երբայտատա արարելն տարբերակը:

Առ այսօր հայագիտությանն անձանոր են անմիջականորեն երբայերենից արված բարզմանություններ. նույնը կարելի է ասել և երբայտատա արարելն մասին: Ոչինչ հայտնի չէ նաև հայերի և կարաիմների միջև երբևէ գոյություն ունեցած գրական կապերի մասին, թեև նման կապերի հնարավորությունը չի բացառվում, հատկապես Մերձավոր Արևելքի մի շարք



հայ գաղթավայրերում և Ղրիմում, որ հայերը և կարաիմները սպրել են կողք-կողքի. համենայն դեպս մինչև այժմ հիշյալ բնագավառը մնում է բազմաթիվ չհետազոտված: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, հայերեն քարգմանության համար որպես բնագիր է ծառայել, ամենայն հավանականությամբ, արաբերեն սարքերակը, սակայն վերջինիս ոչ այն խմբագրությամբ, որը ներկայացված է B-1122 ձեռագրում: Ինչպես ցույց տրվեց վերևում, գոյություն են ունեցել արաբերեն տարբերակի մի քանի խմբագրություններ: Այդ խմբագրություններից այն, որը որպես բնագիր է ծառայել երբայասառ տարբերակի բնօրինակման համար (մասնավորապես՝ Ո 1475 և Ո 1365 ձեռագրերի), գոյություն է ունեցել առնվազն XV դարի վերջից (այսինքն՝ Ո 1475 ձեռագրի բնօրինակման ժամանակից) առաջ: Այս նախնական արաբերեն խմբագրությունն (կամ վերջինիս շատ մոտ մի այլ խմբագրություն) էլ հենց հանդիսացել է հայերեն քարգմանության բնագիրը: Հավանական է, որ հետագա որոնումների ընթացքում բացահայտվեն այլ արաբերեն (գուցե և երբայասառ արաբերեն) ձեռագրեր, որոնցում պահպանված լինի հենց այս խմբագրությունը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ արաբերեն B-1122 ձեռագիրը կրում է միաժամանակ, թե՛ մահմեդական-արաբական, թե՛ քրիստոնյա-արաբական միջավայրի դրաշխ, և դրանով իսկ մեզ հնարավորություն է տալիս պակասեցնելու, թե ինչպես է «Մանկան և աղջկա պատմության» արաբերեն տարբերակը մի միջավայրից փոխանցվել մյուսին:

Այսպես, ձեռագրում հանդիպում է *مار الیاس* արտահայտությունը<sup>106</sup>, որն ասորական ազդեցության արդյունք է և գործածվում է քրիստոնյա արաբների շրջանում: Չեռագրի հանելուկների թվում հանդիպում են որոշ հարցեր և պատասխաններ, որոնք բնորոշ են միայն քրիստոնեական ավանդույթին: Բացի այդ, ձեռագրի տեքստն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. *فسبحان من لا يموت وعليها رحمته الى ابد الامين امين* («Եվ փառք նրան, ով անմահ է, և բոլ մեզ վրա լինի՝ նրա ողորմությունը հավիայանս հավիանեից, ամեն»)՝<sup>107</sup>: Նույնպիսի քրիստոնեական բանաձևով է ավարտվում նաև հայկական տարբերակը<sup>108</sup>, որ սովորական երևոյթ է միջնադարյան նման գրական հուշարձանների համար, սակայն արդյո՞ք դա նշանակում է, որ այդ նախադասությունը ևս հայերեն է քարգմանվել արաբերենից. այն կարող էր ավելացվել նաև հայ քարգմանչի կամ բնօրինակող գրչի կողմից:

Սակայն, միևնույն ժամանակ, արաբերեն ձեռագրում հանդիպում է նաև *يوثان ائتي عليه السلام* արտահայտությունը<sup>109</sup>, որը բնորոշ է մահմեդական

սախնդույթին, ինչպես նաև մահմեդական բանահյուսական ավանդույթն արտացոլող որոշ հարցեր և պատասխաններ<sup>110</sup>:

Այդուհանդերձ, քրիստոնյա-արաբական միջավայրին բնորոշ վերոհիշյալ փաստերը բույլ են տալիս եզրակացնել, որ B-1122 ձեռագիրն բնօրինակվել է, հավանաբար, քրիստոնյա արաբի ձեռքով: Վերջինս ձգտել է իր բնօրինակած տեքստին, որի նախօրինակը պետք է ենթադրել, եղել է մահմեդական-արաբական ձեռագիր, հաղորդել «քրիստոնեական» տեսք: Քանի որ XV դարով բվագրվող երբայասառ արաբերեն տեքստում արդեն կան մահմեդական միջավայրի կենթը կրող հարցեր, ուրեմն գրույցի արաբական տարբերակը հրեական միջավայր է քափանցել, հավանաբար, մահմեդական-արաբականից. հետևաբար մահմեդական-արաբական միջավայր գրույցը մտադ է գործել դեռևս մինչ այդ: Պետք է ենթադրել, որ մահմեդական-արաբական միջավայրից գրույցն անցել է նաև քրիստոնեա-արաբական (այսինքն՝ հիմնականում արաբալեզու ասորական) միջավայր, որտեղ էլ հենց բնօրինակող գրչին ավելացրել է եզրավասկիչ քրիստոնեական բանաձևը անփոփոխ թողնելով, սակայն, մահմեդական ավանդույթն արտացոլող հարցերը: Նույնպիսի երևոյթ, ի պես, նկատվում է նաև հրեատառ արաբերեն տեքստերում, որտեղ ևս մահմեդական բնույթի հարցերը բաղմված են անփոփոխ: Այս վարկածի օգտին է խառնում, մասնավորապես, այն փաստը, որ գոյություն ունեն նաև քարշունիով տարբերակներ<sup>111</sup>. պետք է ենթադրել, որ ասորական միջավայր նույնպես գրույցը քափանցել է արաբականից: Սակայն այստեղ ևս կան որոշ հակասություններ. մի կողմից, 1883 թ. բնօրինակված մի ասորական (նեստորական) ձեռագրում գտնում ենք «Մանկան և աղջկա պատմության» ֆեղիքիով շարադրված մի տարբերակը<sup>112</sup>, մյուս կողմից, մեկ այլ ասորական (նույնպես նեստորական) ձեռագրում ի հայտ է գալիս նույն այդ տեքստի սրտքերեն քարգմանությունը՝ քարգմանչի հիշատակարանով հանդերձ, որտեղ ավում է, որ նա այդ պատմությունը քարգմանել է ֆեղիքից<sup>113</sup>: Ի դեպ, սույն սրաբերեն տեքստի սկիզբը բառացիորեն կրկնվում է այն ասորական տարբերակում, որի ռուսերեն քարգմանությունը գտնում ենք «Ալիկարից մինչև Ջանո» ժողովածուում<sup>114</sup>: Ուշագրավ է այն հանգամանքը, որ վերջինս հաճախ բառացիորեն (հատկապես հանելուկներում) համընկնում է B-1122 արաբերեն ձեռագրի տեքստի հետ. այս ասորական տարբերակում ավել 16 հարցերից 14-ը նույնությամբ կրկնվում են արաբերենի 37 հարցերի թվում, ընդ որում համընկնում է հարցերի ոչ միայն բովանդակությունը, այլև



հաջորդականությունը<sup>15</sup>: Բացի այդ, հիշյալ ասորական տարբերակում գտնում ենք արաբերեն կաղի («զատավոր») բառը, որը ևս վկայում է այն մասին, որ արաբական տարբերակը որպես բնագիր է ծառայել նաև այս ասորերեն քարգմանության համար:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, գրույցի ասորական և արաբական տարբերակները մի քանի անգամ են քարգմանվել մեկը մյուսից՝ մերք արաբերենը ասորերենից, մերք՝ հակառակը: Ի դեպ, նման օրինակներ հայտնի են բանասիրությանը:

«Մանկան և աղջկա պատմությունը» չափազանց մեծ ժողովրդականություն է վայելել հատկապես պարսկական միջավայրում: Այդ մասին են վկայում ինչպես մեզ հասած պարսկերեն ձեռագրերի մեծ քիվը<sup>16</sup>, այնպես էլ իրարից մեծ չափով տարբերվող մի շարք պատմությունների առկայությունը, որն արդյունք է բազմադարյան գոյության ընթացքում միևնույն մոտիվի շարունակ նորանոր մշակումների ու տարբերակների առաջացման:

Պարսկական տարբերակներից ենագույնը<sup>17</sup> համարվում է Նիզամի Գանջևեռ «Յոթ զեղեցկուհի» (1196 կամ 1197 թ.) պոեմում առկա Մլավոնական արքայադստեր հեքիաթը՝ չափածո մի պատում<sup>18</sup>, որի մասին կիսովի ստորև: Հայտնի են նաև Նիզամու նշված ստեղծագործության մի շարք գրական մշակումներ՝ կատարված տարբեր հեղինակների, այդ թվում՝ Խոսրու-ե Գիլկիի (1302 թ.) և Հառիֆիի (մեռ. 1520 թ.) կողմից<sup>19</sup>:

Հնագույն արձակ տարբերակը մեզ հասել է Մուհամմադ Առֆիի կազմած «Ջաուամի ու-հիբայաթ» վերնագրով պատմությունների, անեկտողների և հեքիաթների ծավալուն ժողովածուի (մոտ. 1228 թ.) կազմում<sup>20</sup>: Եթե դատելու լինենք ըստ Ֆ.Մայերի մեջբերած համառոտ բովանդակության, որը կրկնում է և է.Ռոսսին, ապա այս պատումն իրենից ներկայացնում է պարսկական տարբերակի նախնական, դեռևս չրարդացած և զուսպան նոր դրվագներով չխճողված մի խմբագրություն: Եթե նշված խմբագրությունում հարցերի թիվն ընդամենը ինն է, ապա հետագայում դրանք համալրվել են հիմնականում կրոնական բնույթի հանելուկների մի շարքով (աասնվեց ու կես Էջ ծավալով), որոնք այս պատմության համար ստեղծել է Ջամիի աշակերտ և կենսագիր Արդ ու-Ղաֆուր-ե Լարին (մեռ. 1506 թ.)<sup>21</sup>:

Այս պատմի համեմատությամբ էլ ավելի պարզեցված խմբագրություններ են ներկայացնում Օքսֆորդի Բողեյան գրադարանի Ouseley Add. 69 և Փարիզի Ազգային գրադարանի №№ 2129 և 2133 ձեռագրերը, որոնք, սակայն, ընդօրինակված են XVIII դ. կեսերին<sup>22</sup>:

Պարսկական պատմի մնացյալ բոլոր խմբագրություններն իրենցից ներկայացնում են չափազանց ընդարձակ, մանրամասնություններով և նորանոր դրվագներով ծանրաբեռնված տարբերակներ, որոնք, որոշ տարբերություններ հանդես բերելով հանդերձ, հիմնականում նույնական են: Այս խմբագրությանն են պատկանում, մասնավորապես, Օքսֆորդի Բողեյան գրադարանի № 488 պարսկերեն ձեռագրում առկա տեքստը, որը հանգամանորեն բնմված է Ֆ.Մայերի կողմից, ինչպես նաև մի շարք այլ ձեռագրեր, որոնց տարբերությունները վերջինիս հետ մատնանշել է նույն հետազոտողը: Դրանք են Ինդիա Օֆիսի գրադարանի № 2541 (թվագրված 1055/1645 թ.) և Մոսմորուի Այա Սոֆիա մզկիթի գրադարանի № 1814 ձեռագրերը (թերի, չթվագրված)<sup>23</sup>: Մասնանշվել են նաև մի շարք այլ ձեռագրեր՝ Ինդիա Օֆիսի գրադարանի № 1239-ը և Օքսֆորդի Բողեյան գրադարանի Ouseley 58-ը՝ Ֆ.Մայերի<sup>24</sup>, ինչպես նաև Բողեյան գրադարանի ևս երկու ձեռագրեր՝ №№ 797-ը և 798-ը, է.Ռոսսիի կողմից<sup>25</sup> (վերջին երկուսն անձանոթ են Ֆ.Մայերին):

Պարսկական խմբագրություններից վերջինը՝ ընդարձակը, ֆրանսերեն է քարգմանվել ֆրանսիացի արևելագետ Ֆ.Պետի դը Լա Կրուայի կողմից, պարսկական հեքիաթների «Հազար ու մեկ օր» ժողովածուի կազմում<sup>26</sup>: Վերջինիս պարսկերեն բնագիրը համարվում է կորած և, չնայած ուսումնասիրողների ջանքերին, առայժմ չի հայտնվել հայտնաբերել մի այնպիսի պարսկերեն ձեռագիր, որը լիովին համապատասխաներ Պետի դը Լա Կրուայի քարգմանությանը<sup>27</sup>:

Ուշագրավ է այն փաստը, որ ժամանակի ընթացքում «Մանկան և աղջկա պատմության» պարսկական տարբերակի զանազան խմբագրություններն ընդգրկվել են պարսկական միջնադարյան գրականության մի շարք հանրահայտ հուշարձանների մեջ, սկսելով ընկալվել որպես դրանց բաղկացուցիչ մասը: Արդեն հիշատակված՝ Նիզամու «Յոթ զեղեցկուհի» պոեմում օգտագործված Մլավոնական արքայադստեր հեքիաթից բացի, պատմության մեկ այլ տարբերակ գտնում ենք «Թաթի-նամե»-ի մի խիստ համառոտ խմբագրությունում<sup>28</sup>: Նույն մոտիվն է օգտագործված նաև «Բախադիար-նամե» (կամ «Պատմություն տաս վեզիրների մասին») հուշարձանի մի ձեռագիր պատումում<sup>29</sup>: Պարսկական հեքիաթների երկու ձեռագիր ժողովածուներում առկա երկու հեքիաթներում ևս հանդիպում ենք մեզ ծանոթ մոտիվին<sup>30</sup>: Ավելին. մեզ հետաքրքրող մոտիվի բանահյուսական ավանդույթը կենսունակ է և մեր օրերում. դրա վկայությունն են պարսիկ գրականագետ և բանահավաք Ա.Էնջավիի գրի առած և 1973 թ. Թեհրանում



հրատարակած երկու պարսկական ժողովրդական եեքիաքները<sup>131</sup>:

Այժմ ալիի հանգամանորեն կանգ առնենք պարսկական վերոհիշյալ տարբերակներից մի քանիսի վրա:

«Թուրքի-նամեն», ինչպես հայտնի է, հնդկական «Թուրակի յոթանասուն պատմվածքները» (սանսկր. Cukasaptati) գրական հուշարձանի պարսկական տարբերակն է: Ինչպես հնդկական «Շուկասապտատի»-ն, այնպես էլ պարսկական «Թուրքի-նամեն» ունեն մի շարք խմբագրություններ ու մշակումներ, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից իրենց ընդգրկած եեքիաքների թվով և բովանդակությամբ: Նույնպիսի տարբերություններ առկա են և այս հուշարձանի՝ զանազան լեզուներով գոյություն ունեցող բարձրագույնություններում<sup>132</sup>: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ընդամենը առաջ եեքիաք պարունակող մի խիստ համառոտ պարսկական տարբերակի, որի մասին հիշատակվեց վերևում<sup>133</sup>: Բնականաբար հարց է ծագում. մեզ հետաքրքրող պատմության՝ «Թուրքի-նամեն»-ի հետ ունեցած այս կապը պատահակա՞ն բնույթ է կրում, թե՞ օրինաչափ: Մեր ջանքերը զանելու «Մանկան և աղջկա պատմությունը» «Թուրքի-նամեն»-ի հնդկական և պարսկական ամենատարածված ու հիմնական պատմությունում<sup>134</sup>, ինչպես նաև վերջիններիս հետ սերտորեն առնչվող մի շարք ստեղծագործություններում<sup>135</sup>, հաջողությամբ չպսակվեցին: «Մանկան և աղջկա պատմության» պարսկական վերահիշյալ տարբերակը ակնհայտորեն չի պատկանում «Թուրակի եեքիաքների» հիմնական կորիզը կազմող պատմությունների թվին, այլ կողմնակի հավելում է<sup>136</sup>:

Ինչ վերաբերում է «Հազար ու մեկ օր» ժողովածուում տեղ զուած «Կալաֆ արքայազնի և Չինաստանի արքայադստեր պատմությանը», ապա վերջինիս սյուժեն այնքան երկարաշունչ է, ծանրաբեռնված զանազան մանրամասնություններով ու խճճված, որ ՎՇոպենն իր մատենագիտությունում այն նույնիսկ արձանագրել է որպես «Մանկան և աղջկա պատմությունից» տարբեր, միանգամայն այլ մի եեքիաք<sup>137</sup>: Գրականագիտության մեջ տեղ է գտել մի կարծիք, որի համաձայն «1001 օր» ժողովածուի մեջ գետեղված այս պատմությունն իրենից ներկայացնում է Նիզամու «Յոր գեղեցկուհի» պոեմի հերոսուհիներից մեկի՝ սլավոնական արքայադստեր պատմած եեքիաքը և որ, հետևաբար, Նիզամին է դրա հեղինակը<sup>138</sup>: Սակայն դա բյուրիմացություն է. հիշյալ երկու պատմությունների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք չափազանց տարբեր են միմյանցից՝ թե՛ ծավալով, թե՛ բովանդակությամբ՝ միևնույն եեքիաքի կրկնությունը լինելու համար:

## Կալաֆ

## Սլավոնական արքայադստեր եեքիաքը

Նողայական քարաքերի խան Թի- Ռուսաց երկրում ապրում մարթաչի որդի խնաստուն Կալաֆը խոր- էր չքնաղ ու խնաստուն մի ար- հուրդ է տալիս դիմադրություն ցույց տալ քայադուստր, որի համբավը հարկ պահանջող Խորեզմի սուլթանին: ասրածվել էր աշխարհով մեկ: Սակայն ընդհարման ժամանակ քարաք- Անթիվ կտրիճներ են գալիս ներք պարավում են, և Կալաֆն իր ծնող- նրա ձեռքը խնդրելու, սակայն ներքի հետ ստիպված է փախչել: Դանա- աղջիկը փակվել էր լեռան կա- պարեին նրանց կողոպտում են ալիազակ- տարին կառուցված մի անմտո- ները: Մեծ ղեկավարությամբ հասնում են չելի ամրոցում, ուր բախանցիկ Յայիկ քաղաքը, որանդ Կալաֆը սկզբում կարելի էր միայն գաղտնի մուտ- հաց է մտնում ծնողներին կերակրելու թով: Դեպի դղյակը տանող ճա- համար, ապա վարձվում որպես բեռնակիր: նապարեին նա կանգնեցրել էր Բախար ժպտում է Կալաֆին. նա կարո- զինվորների արձաններ, որոնք դանում է բռնել աղջի խանի փախած որսի քայիսմանի աղղեցության ուժով բազեին: Որպես պարզև խանն սկսում է հոգ քրատում էին բոլորին, ով աանել Կալաֆի ծնողների մասին և հան- հանդգնում էր մտտենալ, այն- դերձավորում է Կալաֆին, որը մեկնում է պես որ ամրոցի պարիսպներն երջանկություն որոնելու: Նա հասնում է արդեն ժամկվել էին գոհված- Պեկին, ուր էյուրբնկարվում է մի պառալի ներքի զանգերով: Մի պատանի, տանը: Պառալից նա խմանում է, որ չինա- որսի ժամանակ մտտենալով կան արքայադստար Թուրանդուխտը գե- ամբոցին, պարսպի վրա տես- դեցիկ է և խնաստուն, բայց նաև դաժան. նա նում է արքայադստեր պատկե- պայման է դրել, որ կամուսնանա միայն թը և սիրահարվում: Սակայն նրա հետ, ով կպատասխանի իր բոլոր աչքի առաջ ունենալով գոհ- հարցերին, հակառակ դեպքում ձայնողված վաճենքի փորձը, նա որոշում է փետացտին մահապատիժ է սպասում: Կա- դիմել քարանձավում ապրող մի լաֆն ականատես է լինում Մամարդանդի խնաստուն ծերունու օգնությա- արքայազնի մահապատիժն, որը սիրա- նը: Վերջինս գինում է նրան հարվել էր Թուրանդուխտին նրա դիմա- բոլոր անհրաժեշտ գիտելիքնե- նկարը տեսնելով միայն, սակայն աղ թով: Պատանին սկզբում վե- դիմանկարը սեր է արքնացնում նաև թացնում է կախարդված ար- Կալաֆի մեջ: Կալաֆը ճիշտ է պատաս- ձանների քայիսմանների ուժը, խանում Թուրանդուխտի բոլոր երեք հար- այնուհետև թմբուկ զարկելով ցերին և իր հերթին նրան է առաջարկում մի պատվում է պարսպի շուրջը, հանելուկ (իր մասին): Չկարողանալով ըստ արձագանքի կարողանում



պատասխանել, աղջիկը Լ օր ժամանակ է խնայում: Կալաֆից պատասխանը կորզելով մի գերուհու միջոցով, Թուրանդուխան այնուամենայնիվ համաձայնվում է անուանակ: Հուսանա գերուհին, որ սիրում էր Կալաֆին, ինքնասպան է լինում: Պատմությունն ավարտվում է հարսանիքի, Կալաֆի ծնողների վերադարձի, Խորեզմի սուլթանի դեմ արշավանքի նկարագրությամբ, որից Թիմուրբաշը ետ է նվաճում իր ափրույթները<sup>40</sup>:

Ինչպես տեսնում ենք, այն կարծիքը, թե այդ Նիզամու հորինած հեքիաթն է «արտատպված»<sup>41</sup> «1001 օր» ժողովածուում, սխալ է և կարիք է զգում վերանայան. ըստ այդմ հարկ է վերանայել և այն տեսակետը, թե Կարլո Գոցցին իր «Տուրանդուտ»-ը գրել է Նիզամու հորինած հեքիաթի հիման վրա.<sup>42</sup> Գոցցին օգտագործել է «1001 օր» ժողովածուի վերոհիշյալ «Կալաֆ արքայազնի և Չինաստանի արքայադստեր պատմության» սյուժեն<sup>43</sup>, որը, ինչպես համոզվեցինք, Նիզամու հետ ոչ մի կապ չունի: Վերոհիշյալ երկու հեքիաթները միմյանց հետ համատեղելի են սոսկ այն առումով, որ իրենցից ներկայացնում են միևնույն բանահյուսական մտախի (իմաստուն և գեղեցիկ, բայց դաժան արքայադստեր մասին, որի փեսացուներին մահ է սպառնում նրա խրթին գլուխկտարուկները չլուծելու դեպքում) երկու բուրբալին տարբեր մշակումներ: Հենց որպես այդպիսիք էլ դրանք, միմյանցից միանգամայն անկախ, ընդգրկվել են մեկը՝ «1001 օրվա», մյուսը՝ Նիզամու պոեմի մեջ: Փաստորեն բոլոր երեք հուշարձաններն էլ, որոնց անդրադարձանք («Յոթ գեղեցկուհի», «Թուրք-մամա», «1001 օր»), իրենցից ներկայացնում են մի ընդելուզող պատմության մեջ պարփակված զանազան հեքիաթների շարքեր. այդ հեքիաթների թիվը լրացնելու համար (յոթ, տաս կամ «հազար ու մեկ») զանազան աղբյուրներից քաղված պատմությունների թվում է հայտնվել մահ մեզ հետաքրքրող գրույցը: Նիզամին, մասնավորապես, նշված հեքիաթը քաղել է, ամենայն հավանականությամբ, պարսկական ժողովրդական բանահյուսությունից և բանաստեղծական մշակման ենթարկել այն՝ մի երևույթ, որ չափազանց բնորոշ է նրա ստեղծագործությանը<sup>44</sup>:

Այսպիսով, «Մանկան և աղջկա պատմության» պարսկական տարբերակի անցած բազմադարյան ուղին ևս զալիս է հավաստելու այն փաստը, որ այն նախապես եղել է ինքնակա մի հուշարձան, որն ուղեկցվել է զուգահեռաբար թե՛ բանահյուսական և թե՛ գրավոր ավանդույթով: Այլ կերպ ասած, արաբական «1001 գիշերը» ամենևին էլ միակ հեքիաթաշարը չէ, որի մեջ ընդգրկվել է «Մանկան և աղջկա պատմությունը», այլ ընդամենը նման հեքիական «ընդգրկումների» շրջայի օղակներից մեկը<sup>45</sup>:

Հարկ է նշել, որ պարսկական բոլոր վերոհիշյալ պատմությունների համեմատությունը հայկական տարբերակի հետ ցույց է տալիս, որ դրանցից և ոչ մեկը չէր կարող լինել հայկական թարգմանության բնագիրը: Վերոհիշյալ բոլոր ինչպես սույգահիք, այնպես էլ ձեռագիր պատմությունների գերակշռող մեծամասնությունը ներկայացնում է գրույցի ընդարձակ խմբագրությունը, որը, ինչպես ցույց կարվի սառը, չափազանց մեծ տարբերություններ է հանդես բերում հայերեն տեքստի հետ: Իսկ ինչ վերաբերում է այն փոքրաթիվ համառոտ խմբագրություններին, որոնց մասին խառվեց վերևում, սպա դրանցում ևս Լական անհամապատասխանություններ կան՝ հայկական պատմի համեմատությամբ:

Այժմ ավելորդ չենք համարում մեջ բերել պարսկական մի ուշագրավ ձեռագիր պատմի հետ հայերեն թարգմանության բաղդատման արչյունքները: Նշված պատմումն առկա է Մ.Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտի B-256 (a-275) պարսկերեն ձեռագրում (թ. 146ր-173ր)<sup>46</sup>: Հարկ է նշել, որ վերջինս, թեև պատկանում է ընդարձակ խմբագրությանը և, հետևաբար, երկարաշունչ է, ծանրաբեռնված մանրամասնություններով ու բազմաթիվ դրվագներով, այնուամենայնիվ որոշ կետերում անապասելիորեն նմանություն է հանդես բերում հայկական պատմին: Այսպես, նմանությունները հետևյալներն են.

1. Ծնողներին վաճառելիս պատանին թագավորից ստանում է 100 դինար (հայկական տարբերակում՝ 100 դեկան կամ Ֆլորի):
2. Նամակարեթից նամակն ստանալով, պատանին այն դնում է քսակի մեջ<sup>47</sup> (հմմտ. հայերենում՝ սեկե քեսա):
3. Արքայադստեր հարցերին պատասխանելիս պատանին նստում է սուկե արոտին<sup>48</sup> (նույնը՝ հայերենում):
4. Արքայադստեր տված 37 հարցերից հայերենում կլկնվում են 12-ը, որոնց թվում՝ հետևյալ հառվածը.



Աղջիկն ասաց. [.....]

Ո՞րն տղան ես և դայակդ ո՞վ է, և մայրդ ու հայրդ ովքե՞ր են:

[Տղան] պատասխանեց, որ՝

Մեկի տղան եմ. մայրս երկիրն է, հայրս՝ երկիրնքը, դայակս այն, որ ինձ տեսնում է, բայց ես նրան չեմ տեսնում, այն, որ իմ ծայնը լսում է, բայց ես նրա ծայնը չեմ լսում:

Աղջիկն ասաց.

Ճիշտ ասացիր ու դիպուկ լսե, և ես գնորա ծայն չեմ լսեք:

Արտահայտվեցիր, բայց դրանք մանկական հարցեր են, որ այսօր գրուց է, քող գայր»<sup>149</sup>: արվեցին...<sup>149</sup>

Ատ աղջիկն. «Ո՞վ է քո հայրն»:

Ատ մանուկն. «Հովն և հորն»:

Ատ աղջիկն. «Ո՞վ է քո մայրն»:

Ատ մանուկն. «Հողն և անձրեն»:

.....

Ատ աղջիկն. «Ո՞վ է քո

մանուկն. «Այն է իմ

դայեակն, որ նա գիտ կու տեսնու, ես

գնա չեմ տեսնուր. նա գիմ ծայնն կու

Ատ աղջիկն. «Այդ տղայոց

արտահայտվեցիր, բայց դրանք մանկական հարցեր են, որ այսօր գրուց է, քող գայր»<sup>149</sup>: արվեցին...<sup>149</sup>

Այժմ անցնենք տարբերություններին.

1. Պատանու ծնողների սնանկամարտ պատճառը պարսկական տարբերակում նրանց վնդվելն է իրենց երկրից՝ դժգոհ ժողովրդի կողմից:

2. Թագավորական ընտանիքը տարագրության ճանապարհին կողոպուտվում է ավագակների կողմից<sup>151</sup>:

3. Արքայազնը ստիպված մուրացկանության է դիմում՝ ծնողներին կերակրելու համար:

4. Արքայազնը գանում է տեղի քաղաքի կորած որսի բազեն (հայերենում այս դրվագը չկա):

5. Նամակաբերից նամակն<sup>152</sup> սաանալուց հետո պատանին նրան կորցնում է և մոլորվում սաստիկ փոթորկի սկսվելու պատճառով (հայերենում այս դրվագը չկա):

6. Գլխատված արքայազնների թիվը 500 է (հայերենում՝ 99):

7. Արքայադուստրն իր հարցերը տալու է ներկայանում դիմակով, 50 նաժիշտների ողեկցությամբ (հայերենում չկան ո՛չ նաժիշտներ, ո՛չ դիմակ):

8. Արքայդուստրն իր հարցերը տալիս է առանց որևէ մեկի միջնորդության (հայերենում՝ քարգմանչուհու միջոցով):

9. Արքայազնի՝ արքայադուստրն առաջարկած հանելուկն ունի հետևյալ տեսքը. «Այն ո՞ր արքայազնն է, որ դժբախտացավ և զանից տապալվեց հողին ու արքայությունից՝ մուրացկանության [մեջ], և ծնողներին վաճառեց և ապրուստ փնտրելու ու մահվանն ընդառաջ գնաց, և երևելոյան նամագից

մինչև լուսարաց մահվան հետ էր, և լիակատար մահվան ճամփին ինչ-որ բան պատուեց ու ջրիորդ գցեց [.....], մեկ այլ մահ նրան բռնեց, և այդ մահվան հետ նա շատ վեճեր ունեցավ ու վերջապես դրան ևլ հաղթեց, և կրկին անգամ բնած բախտն արքնացավ»<sup>150</sup>:

10. Արքայադուստրն հետ ամուսնանալուց հետո արքայազնը գորք է հավաքում և կոժով ետ նվաճում իր հոր կողոքած քաղաքությունը (հայկական տարբերակում այս դրվագը բացակայում է):

Այսպիսով, ակնհայտ է, որ տարբերություններն անհամեմատ ավելի շատ են, քան նմանությունները: Իսկ ինչո՞վ կարելի է բացատրել եղած նմանությունները: Պետք է ենթադրել, որ պարսկական այս պատումի հիմքում ընկած է եղել հայկականին մոտ մի խմբագրություն, որը միաժամանակ նման է և երբայատառ արաբերեն վերահիշյալ տարբերակին: Մակայն այդ նախնական հիմքի վրա պարսկական միջավայրում առաջացել է մի բովորովին այլ, անհամեմատ ավելի ընդարձակ, բազմաթիվ նոր դրվագներով ու մանրամասնություններով հագեցած մշակում, որն, իհարկե, չէր կարող հանդիսանալ հայերեն քարգմանության բնագիրը: Այնուամենայնիվ, դա մի վկայություն է այն մասին, որ պարսկերենով ևս գոյություն է ունեցել նման մի նախնական խմբագրություն (թերևս արաբերենից քարգմանված՝ առայժմ հնարավոր չէ այդ հարցին պատասխանել, քանի դեռ չեն հրատարակված արաբական և պարսկական տարբերակների բնական բնագրերը և չեն պարզված դրանց քարգմանության աղբյուրները): Այստեղ որոշ հակասություն կա. մի կողմից, արաբական տարբերակի պարզությունը՝ պարսկականի համեմատությամբ, պետք է որ պատմության ավելի նախնական վիճակի արտահայտությունը լինի, սակայն մյուս կողմից, ինչպես ցույց տրվեց վերևում, պարսկական խմբագրություններից մի քանիսն ավանդված են շատ ավելի երկն ձևերով, քան արաբականները: Այդ պատճառով առայժմ դժվար է պարզել, թե արդյոք արաբական տարբերակն է պարսկերենից քարգմանված, թե՞ հակառակը:

Ինչ վերաբերում է գրույցի բուրբական պատումին, ապա վերջինս ընդգրկված է "Hikāyetnāme" («Հեթիաթների գիրք») կամ "al-Farag ba'd ash-shiddah" («Մուրախություն աագնապից հետո») վերնագիրը կրող մի միջնադարյան ժողովածուի մեջ, որը պարունակում է 42 պատմվածք: Ուսումնասիրողները մատնանշել են այս ժողովածուի հետևյալ ձևագրերը՝ փարսիյան № 377 բուրբերեն ձևագիրը, բուրբապեշտյան (թվագրված 855/1451-52 թթ.), Բրուսսայի (թվագրված 981/1572 թ.), Վասիկանի № 140



բուրքերն ձեռագիրը (թվագրված 1228/1716 թ.)<sup>154</sup>: Թուրքական խմբագրության հետազոտողներից Է.Ռոսսին իրավացիորեն զգուշացնում է՝ չշփոթել այս ժողովածուն երկու այլ համանուն՝ ար-Թանուխի արաբական և աղ-Դահիսբանիի պարսկական ժողովածուների հետ<sup>155</sup>:

Այսպիսով, բուրքական խմբագրությունը հայտնի է XV-XVII դդ. ձեռագրերից և, ինչպես այդ կարելի է եզրակացնել Է.Ռոսսիի մեջբերած մանրամասն բովանդակությունից<sup>156</sup> (ըստ Վատիկանի № 140 բուրքերն ձեռագրի), իրենից ներկայացնում է պարսկական ընդարձակ խմբագրության մի պատմը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև այն, որ Վատիկանի բուրքերն № 140 ձեռագրում պատմվածքը կրում է «az ān-i pādshāhzāde Khalaf bā dukhtār-i Faghfir-i Ćin» պարսկերեն վերնագիրը, կարելի է ենթադրել, որ բուրքերն բարգմանությունը կատարվել է արաբներն բնագրից<sup>157</sup>: Իսկ քանի որ պարսկական նշված խմբագրությունը, ինչպես տեսանք, հայերեն բարգմանության բնագիրը լինել չէր կարող, ապա նույնը կարելի է ասել և բուրքական պատմի մասին:

Այսպիսով, ամփոփելով բաղդատության արդյունքները, մնում է եզրակացնել, որ հայերեն բարգմանությունն արված է այնուամենայնիվ արաբերենից:

Չրույցի հայերեն բարգմանության ժամանակի և բարգմանչի անձնավորության վերաբերյալ ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել: Այսպես, Ն.Ալկինյանը բարգմանության ժամանակը համարում է X դարը (950-1000 թթ.), հիմնվելով այն փաստի վրա, որ գրույցի առայժմ հայտնի հնագույն՝ Հոմի Ս.Վլասի Հայոց Հյուրանոցի № 33/24 ձեռագրի խորագրում հիշատակվում է Դավիթ Կուրապաղասի անունը, իսկ բարգմանիչներին համարում է տայեցիներ<sup>158</sup>: Ն.Անդրիկյանը բարգմանությունը թվագրում է XIV դ. առաջին կեսով, վերագրելով այն Կոստանդին Երզնկացուն. «Լեզուական մի քանի նմանություններ... փաստ մը կուտան կարծելու որ Կոստանդին Լ Հարցմունք Աղջկան վեպին բարգմանիչը»<sup>159</sup>: Պ.Մուրադյանն առարկում է Ն.Անդրիկյանին՝ զանելով, որ միայն լեզվի նմանությունը բավարար չէ Կոստանդին Երզնկացուն բարգմանիչ համարելու համար և ավելի ճիշտ է համարում բարգմանությունը վերագրել Առաքել Անեցուն: Ըստ Պ.Մուրադյանի, գոյություն ունեն գրույցի երկու բարգմանություններ՝ համառոտ և ընդարձակ խմբագրություններով, որոնցից առաջինը բարգմանված է X դ., իսկ երկրորդը՝ XIII-XIV դդ. ոչ ուշ<sup>160</sup>:

Սեր կարծիքով բարգմանության ժամանակի ճշգրտումը կապված է

երկու հիմնական խնդրի հետ, որոնք առայժմ դժվար է լուծել: Այսպես, մի կողմից ղեռ չի պարզված, թե արդյո՞ք պատմության արաբական պատմը գոյություն ուներ արդեն X դարում, իսկ մյուս կողմից՝ հայկական այսպես կոչված համառոտ խմբագրությունը փաստորեն առայժմ մեզ հայտնի չէ: Քանի ղեռ «Մանկան և աղջկա պատմության» հնագույն՝ վերոնշյալ ձեռագիրը (№ 33/24) շարունակում է ուսումնասիրողներին անմասշտի մնալ<sup>161</sup>, գրույցի նախնական կամ համառոտ խմբագրության մասին, որն առկա է այդուհե, հնարավոր չէ վերջնական և ճշգրիտ եզրակացություններ անել: Այսպիսով, ուսումնասիրությունների ներկա փուլում մեզ ավելի հավանական է թվում քարզմանությունը թվագրել XIII-XIV դդ., քանի որ արաբներն բնագրի գոյությունն այդ դարերում կասկած չի հարուցում, իսկ հայերեն ընդարձակ խմբագրությունը ներկայացված է բազմաթիվ ձեռագրերով: Թեև դրանցում առկա բնագրերը բաժանվում են, ըստ Ա.Սրապյանի, չորս խմբի (a, b, c, d), սակայն վերջիններս միմյանցից սափրելով են հիմնականում գրույցի միջին մասով՝ Հարցմունքով, ինչպես նաև որոշ կաՖաների հավելումով, այդ, սակայն, գրույցի բուն բովանդակության և էության մեջ նշանակալից փոփոխություններ չի մտցնում<sup>162</sup>: Այդ իսկ պատճառով ակնհայտ է, որ նշված հայերեն խմբագրություններն արդյունք են, ամենայն հավանականությամբ, մեկ բարգմանության, որը հետագայում ենթարկվել է տեղայնացման և որոշ մշակման: Այդ է վկայում նաև գրույցի արաբներն, երբայտառ արաբներն և հայերեն տարբերակների վերոնշյալ համեմատությունը. բնագրի հետ համընկնող հատվածներ առկա են հայերեն բարգմանության բոլոր չորս խմբերին պատկանող խմբագրություններում էլ<sup>163</sup>:

\*  
\*  
\*

Հարկ է նշել, որ ղեռն միջնադարում հայ բներկրային քաջաձանոթ «Մանկան և աղջկա պատմությունը» XIX դ. երկրորդ կեսին - XX դ. սկզբին Հայաստան է վերադարձել և մեկ անգամ, այս անգամ արդեն ոչ թե Արևելքից, այլ Արևմուտքից<sup>164</sup>:



بسم الله الذي التديم الانزلي وبه نتعين  
تدري وكتب عن المرحوم و القهر ما نزل  
والشباب من تلك المدينة ووه ولسر مسيحه  
ذكروا والله اعلم في ما نزل وتقدم وسلف من لعلمك  
الأم انه كان في مدينه روميه ملكا عظيم المشاهير  
ولجل التمام دو حزه وشان ومكان له ولد حتى يتعذر  
له ويرت الملك بعده وكان دائما يطلب سرايا  
تعالى ان يرزقه ولد فتحن الله تعالى عليه و  
رزقه ولد ذكر فراه ابوه باحسن تربيته وعلما  
بجميع العلوم وفرايض العلم والادب ونفق عليه  
مال عزيز فلما اكبر الشاب صار عالما لا يحده ولا  
لا يوصف واما ما كان من الملك ابوه جاز عليه  
واقضى قرا عظيم فبقي حيران في نفسه وما

يدري

Մանկա-Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտի արարերեն  
№ B-1122 ձևագրի 1 ր քերթ:

يدري كيف يعمل فلما رآه ابنه المبارك عاى ذلك  
الحال فقال له يا ابى اتسمع مني ما قولك فقال  
له ابوه قول لي يا ولدي المبارك ما في خاطر ك  
فقال له ولده المبارك قومها الي حتى تسبح من  
هذه المدينه ولايعلم بنا احدا الا بناقينا  
في اسوار حال وقد اظننا ان النقر الى الغايه فقال  
له ابوه نعم طرت باى ايها الولد الصالح  
فبعد ذلك قام الشاب اخذ ابوه وامه  
ليلا وما احدا علم بهم ومضوا الى مدينه  
لخره وابتها الى مكانا ونزلوا فيه ثم ان  
الشاب قام ومضار الى ملك تلك اللدينه وهفل  
الى حديثه وقال له يا سيدي الملك ان ارجل ااجر  
ومعى غلام جيد الفعايل تقى امين وجار به حسنه

Մանկա-Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտի արարերեն  
№ B-1122 ձևագրի 2 ա քերթ:















րնդօրինակված 1588 թ., այդ պատճառով ուսումնասիրողները Ա.Մրապյանը, մասնավորապես, գրում է, որ «Փահլույի գրույցը հայանի է XVI-XIX դդ. ձեռագրերից»<sup>2</sup>: Սակայն հարկ է անել հետևյալ ճշգրտումը. ձեռագրերից հնագույնը Տյուրինգենում պահվողն է՝ այն ընդօրինակված է 1432 թ., Ազուլխում, ինչպես պարզվում է Տյուրինգենի հայերեն ձեռագրերի ձեռագրացուցակից<sup>3</sup>: Այսպիսով, Փահլույի պատմության ձեռագրերը մեզ են հասել XV-XIX դդ. գրչությանը:

Հայանի են նաև «Փահլույի պատմության» տասնհինգ հրատարակություններ՝ ապագրված 1696-1911 թթ.<sup>4</sup>:

Այս գրույցը դասելով քարզմանական հուշարձանների շարքը, ուսումնասիրողները հայանել են այն կարծիքը, որ քարզմանությունն արված է արաբերենից<sup>5</sup>:

«Փահլույի» ձեռագրերից հնագույնում Տյուրինգենի վերոհիշյալ ձեռագրում, պահպանվել է հետևյալ հիշատակագրությունը. «Յանուն աստուծոյ արքրմածին և յիշումն առաջին ժամանակաց, գոր են ի գրասանս մայրկան, որ է վոխսած ի տաճիկ յեզուէ ի հայ տֆրար այսպէս, գոր արարար սկիզբն Փահլույ բագալորին պատմութեանս»<sup>6</sup>: Սա մեզ հասած միակ հիշատակությունն է՝ գրույցի ինչ յեզվից քարզմանված լինելու մասին: Հարկ է նշել, որ այս ձեռագրի նկարագրության հեղինակները՝ Ֆ. Ֆինկը և Լ. Գյանցեյանը, «Փոխած ի տաճիկ յեզուէ» արտահայտությունը մեկնաբանել են որպես «քարզմանված բուրբերենից» («aus dem Türkischen überetzt»)՝: Նման մեկնաբանությունն, անշուշտ, նույնպես չի բացառվում, քանի որ «տաճիկերեն» արտահայտությունը, որ նախապես օգտագործվել է արաբերենը բնորոշելու համար, ավելի ուշ սկսել է ըմբռնվել նաև որպես «բուրբերեն», իսկ երբեմն էլ՝ «արաբկերեն»<sup>7</sup>:

Չրույցի քարզմանության ժամանակի և քարզմանչի մասին տեղեկություններ մեզ չեն հասել: Հետազոտողներն այս կապակցությամբ տարբեր կարծիքներ են հայտնել: Այսպես, ըստ Հ. Էյուրայանի, «Փեհլույ բագալորի պատմութեան յեզուն, ոճը ու ձևը տարակոյս չեն բուրբ որ անոթ ալ քարզմանիչը եղած ըլլալու է Պղզնձէ բաղարի քարզմանիչ նկատուած արաբագետ Առաքել Անեցիին կամ Շիրակավանցիին...»<sup>8</sup>, հետևաբար, նրա կարծիքով, քարզմանությունը բվագրվում է XIII դարով: Իսկ Հ.Սիմոնյանը, ելնելով «Փահլույի պատմության» կաֆաների որոշ նմանությունից Ֆրիկի բանաստեղծություններին, գրում է. «...արդյոք Ֆրիկը չէ՞ր Փահլույի պատմության բնագրի քարզմանիչը, մանավանդ, երբ հիշում ենք, որ Ֆրիկից

հայանի են պարսկերենից կատարված քարզմանությունների որոշ փշրանքներ»<sup>9</sup>, այդպիսով քարզմանության ժամանակը համարելով XIII-XIV դարերը:

Հ.Էյուրայանը նկատում է նաև, որ պատմությունը «խոշոր գանազանութեան տարբերակներ չունի», համարելով այդ «արդիւնք միակ քարզմանութեան մը և «կաֆա»-ներու միակ խմբագրութեան մը»<sup>10</sup>: Նույնն է հավասարում նաև Ա. Մրապյանը, որը հրատարակել է «Փահլույի պատմության» գիտահամեմատական բնագիրը՝ 14 ձեռագիր և 15 տպագիր օրինակների համեմատությամբ. «Պատմութիւն վասն Փահլույ բագալորին» գրույցն ավելի գրքային է, այն տարածվել ու պատմական ողի է անցել ավելի գրավոր, քան բանավոր ճանապարհով», «գրեթէ չունի այլ խմբագրություններ, քիչ են նման գրույցի համար բնութագրական բնագրային շեղումներն ու տարբերեցումները»<sup>11</sup>: Սակայն, այնուամենայնիվ, երկու ձեռագրում ավելի են մասամբ տարբերվող բնագրեր. դրանք են՝ «Լինենայի Միսիրայանց № 671 ձեռագիրը, որ կան կրկն հավելյալ պատմություններ Փահլույի մասին»<sup>12</sup>, ինչպես նաև Տյուրինգենի ձեռագիրը, որի մասին Ն. Ալիեյանի հարանցիկ գիտողությունից պարզ է դառնում, որ վերջինս այլ խմբագրության է սրտականում, քան նրան հայանի մյուս ձեռագրերը<sup>13</sup>: Յավոր սրտի, Տյուրինգենի ձեռագրի անմատչելիության պատճառով հնարավոր չէ համեմատություն անել և վերջնականապես ճշտել այդ:

Ուսումնասիրողների մոտ մեծ տարակարծություններ են առաջացրել Փահլույի պատմության կաֆաները, քանի որ, ինչպես նկատում է Հ.Սիմոնյանը, ի տարբերություն մյուս նման պատմությունների, դրանց հեղինակների անունները չեն նշված ոչ մի ձեռագրում<sup>14</sup>: Կաֆաները ենթադրաբար վերագրվել են տարբեր հեղինակների՝ Ֆրիկին<sup>15</sup>, Առաքել Շիրակավանցուն, կամ նրան ժամանակակից մի անհայտ բանաստեղծի<sup>16</sup>, Գրիգորիս Աղբառաբոյունի<sup>17</sup>: Որոշ գուգահեռներ են մտածանշվել նաև Հովհաննես Պլուզ երգնկազու, Հովասափ Աբասազու և միջնադարյան մի շարք այլ բանաստեղծների աստղերի հետ<sup>18</sup>: Ուսումնասիրողներից Ա.Մրապյանը, մասնավորապես, գտնում է, որ «կաֆաները գրույցում կարող են և գոյս հայկական չլինել», ըստ նրա դրանք «երև ոչ ամբողջությամբ, ապա մի մասով քարզմանական են՝ որպես չափաժու հատվածներ»<sup>19</sup>:

Սակայն առ այսօր հայտնաբերված չի եղել գրույցի բնագիրը որևէ լեզվով, հետևաբար պարզված չէ և նրա ծագման հարցը՝ քիչ է՞նչ միջավայրի ծնունդ է այն: Որոշ ուսումնասիրողներ «Փահլույի» բնագիրը եւ, «Պղզնձ



բաղաբի» և «Մանկան և աղջկա» պատմությունների նմանողությամբ, ներառյալ արարական «1001 գիշեր» հեթանոսազարից<sup>27</sup>։ Իսկ Հ.Քյուրայանը մատնանշել է մեկ այլ՝ բանահյուսական աղբյուրից բխող մի ոչ անկարևոր գուգահեռ. «Հեռաքրքրական և պատմութեան վերջին մասը իր նմանութեամբ Նասրետային Հօժայի վերագրուած գուարճայի պատմութեանը նման է կան հեռ», ի նկատի ունենալով հեռայնալ դրվագը. մի մարդ Փահլույի գլխից հափշտակում է նրա «փակեղը», որից հետո Փահլույը գնում է գողին փնտրելու «ժողվարքում» (գերեզմանոցում)<sup>28</sup>։

Ինչպես ցույց կարվի ստորև, Հ.Քյուրայանի այս բուցիկ դիտողության իրավացությունը հաստատվում է նորահայտ փաստերով։

Այսպիսով, «Փահլույի պատմության» ուսումնասիրությունն առ այսօր բնթացել է սոսկ հայագիտական տեսանկյունից։ Այժմ մի շարք նորահայտ փաստեր բույլ են առիս նոր տեսանկյունից մտանալ այս գրույցին՝ պարզելով նաև, թե ինչ տեղ է գրավում այն ոչ միայն հայ, այլև մի շարք այլ ժողովուրդների գրականության և բանահյուսության մեջ։

## 2. Փահլույն ըստ արարական և այլ աղբյուրների

Ինչպես ցույց է տալիս արարական միջնադարյան գրականության ուսումնասիրությունը, Փահլույի գրույցն իրոք արարական միջավայրի ծնունդ է, քանի որ Փահլույը պատմական դեմք է. նրա լրիվ անունն է՝ Արուստայր Բահլույ (կամ Բուխլույ) իրն Ամր (առ-Սալյաֆի կամ առ-Սուֆի) ալ-Մաջնուն ալ-Բուֆի<sup>29</sup>։ Ալ-Մաջնուն և ալ-Բուֆի մակդիրները բնութագրում են նրան որպես «խենթ» և «Բուֆացի»։ Բահլույի մասին հիշատակությունները ցրված են տասնյակ արարական աղբյուրներում։

Բահլույը ծնվել է իր կյանքի մեծ մասն անց է կացրել Իրաքի Քուֆա քաղաքում՝ մահմեդական մշակույթի միջնադարյան կարևորագույն կենտրոններից մեկում։ Նրա ծննդյան տարեթիվը հայտնի չէ, իսկ մահվան տարեթիվը փնտրելի է։ Տարբեր հեղինակներ նշում են նրա մահվան հետևյալ տարեթիվը՝ 183/799, 190/805, 192/807։ Որպես կիճք նրա համար ընդունվում է այն հանգամանքը, որ Բահլույը ժամանակակից է եղել Հարուն առ-Ռաշիդ խալիֆին (իշխ. 170/786-193/809). վերջինս նրան հանդիպել է մի քանի անգամ, Բուֆայում, դեպի Մեքքա կատարած իր ամենամյա ուխտագնացությունների ճանապարհին։ Մակայն, ըստ որոշ աղբյուրների, Բահլույը կենդանի է եղել նաև խալիֆներ ալ-Լաթիկի (իշխ. 227/842-232/847թթ.) և ալ-

Սուրավաքիի (իշխ. 232/847-247/861) օրոք<sup>30</sup>։

Ուսումնասիրողներից մեկի դիպուկ բնորոշմամբ, «Ուրբան անորոշ է պատմական Բահլույի կերպարը, նույնքան հարուստ է նրա մասին լեգենդը»<sup>31</sup>։

Արարական մատենագրության մեջ արային հեղինակը, որ հիշատակում է Բահլույի մասին, ալ-Չահիբն է (մեռ. 255/868թ.). վերջինս եղել է գրեթե նրա ժամանակակիցը<sup>32</sup>։ Այնուհետև հիշատակությունները շարունակվում են հեռագա և դարերի ընթացքում. ընդգրկելով սոսա վեց տասնյակ արարական, երկու տասնյակից ավելի պարսկական և մի շարք այլ՝ բուրբական, չաղաքայներն, քյարերն և այլ լեզուներով աղբյուրներ, որոնց հիմնական մասը գրավոր է, իսկ մի քանիսը՝ բանահյուսական<sup>33</sup>։ Քանի որ բոլոր այս աղբյուրների հաղորդած անդեկությունները Բահլույի մասին ի մի են բխված և համագամանորեն քննարկված, մասնավորապես, Ու.Մարցոլիի չափազանց բարեխիղճ ուսումնասիրությունում<sup>34</sup>, չլրկնելու համար, մենք հաստատու կերպով կանդրադառնանք միայն Բահլույին բնութագրող ամենամական փաստերին։

Ինչպես հայտնի է, արարական գրականության մեջ հանդես են գալիս մի շարք խենթերի կերպարներ. նրանց մի մասը պատկանում է սիրուց խենթացածների թվին (ինչպես, օրինակ, հանրահայտ Մեջնունը), իսկ մյուսների խենթության պատճառը բոլորովին այլ է։ Բահլույը նույնպես նշանավոր խենթ է, սակայն նա այսպես կոչված «խմաստուն խենթերից» մեկն է (عقلاء المجانين, Weise Narren, fou sage)<sup>35</sup>։ Նա մարմնավորում է խմաստուն խրատողի և նախազգուշացնողի կերպարը, որը շքապատի մարդկանց շարունակ հիշեցնում է այս աշխարհի՝ անցողիկ ու սին լինելու մասին, կոչ անելով խտորեն հետևել Աստծու պատվիրաններին։ Նա վարում է սուկեաի կյանք՝ կամովին երաժարվելով իրեն առաջարկված դրամից, պարզներից կամ պաշտոնից։ Երբ խաղիքը ցանկանում է պարզեատրել նրան, նա ասում է. «Տուր այդ դրամը նրանց, ումից վերցրել ես»<sup>36</sup>։ Նա մերթ իրեն պահում է խենթի, պարզամիտի և նույնիսկ ժողրածուխի նման, որը նրան հնարավորություն է տալիս հանդգնորեն «այս աշխարհի ուժեղների», մասնավորապես՝ խաղիքի երեսին շարտել այն, ինչ ինքը մտածում է նրանց մասին, մերթ էլ՝ խորը փիլիսոփայական մտքեր է արտահայտում ամենատանուպատելի իրադրություններում, որը և սուխարում է մարդկանց խոնարհվել նրա իմաստության աօջև։ Նույնիսկ նրա խենթությունը, ըստ որոշ աղբյուրների, թվացյալ է նա դիամամբ, միանգամայն զիտակցարար է սկսում իրեն խենթ ճևացնել, որպեսզի խուսափի իրեն առաջարկված



կադիի (դատավորի) պաշտոնից<sup>37</sup>: Ու.Մարցոլիի բնորոշմամբ, «Եմաստուն խնքի խնքությունը պետք է տեսնել նրա՝ իր դավանանքի հետևողականորեն կենսագործման մեջ»<sup>38</sup>:

Շատ աղբյուրներում Բահայը հանդես է գալիս որպես մի խելագար, որը, եղեգին հեծած, արշավում է քաղաքի փողոցներով՝ իրեն ծաղրող և իր վրա քարեր նետող երևիսաների ուղեկցությամբ<sup>39</sup>: Նրա անվան հետ կապված պատմություններում հաճախ և հիշատակվում նաև գերեզմանոցը: Բահայը սովորություն ունի գերեզմանոցում քնելու և ընդհանրապես այստեղ իր ժամանակն անցկացնելու: Այն հարցին, թե ի՞նչն է դրա պատճառը, նա պատասխանում է. «Որովհետև ապրողների մեջ ես ոչ մի խոհեմ մարդու չեմ գտել»<sup>40</sup>:

Այսպիսով, միաժամանակ խնք և իմաստուն լինելու հանգամանքը Բահային դատում է համանման բազմաթիվ այլ կերպարների շարքը. նման գուգահեռներ կարելի է բերել համարյա բոլոր ժողովուրդների գրականությունից և քանակյատությունից՝ Ջոհա, Մոլլա Նասրեդդին, Պրոք Պոդի, Խորոմանի-ները ուստական իրականության մեջ, և այլն<sup>41</sup>: Այդ իսկ պատճառով էլ սրտամառկան չէ, որ Բահային վերագրվող մի շարք պատմություններ զանազան աղբյուրներում պատմված են և այլ համանման հերոսների մասին, մասնավորապես Ջոհայի և Հոջա Նասրեդդինի<sup>42</sup>: Նման կերպարների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ, ինչպես իրավացիորեն նկատում է Հ.Թ.Նորրիսը, «Մրամիտ խնքը և մարգարեն միևնույն անձնավորության սակ երկու ասպեկտներն են»<sup>43</sup>: Այս կապակցությամբ չափազանց հասկանչական է այն փաստը, որ, ըստ ավանդության, Բահայը եղել է Հարուն առ-Ռաշիդ խալիֆի պալատական ծաղրածուն: Որպես պալատական ծաղրածուներ են հանդես գալիս նաև համանման մյուս կերպարները՝ Նասրեդդինը՝ Լենկթեմուրի պալատում, ծաղրածու Տախակը՝ սուլթան Մահմուդ Ղազնևիի պալատում, Պրոք Պոդին՝ կարվածաեր Սելիպ-Շահնագարի տանը և այլն<sup>44</sup>: Այստեղ հիմնական շեշտը դրվում է հակադրության վրա՝ միմյանց են հակադրվում ամենագոր տիրակալը, որն ունի ամեն ինչ, և անպաշտպան ծաղրածուն, որը չունի ոչինչ, սակայն չի երկնչում ահեղ տիրակալին «վարանկուց»:

Բահայի մասին ասվում է նաև, որ նա զվարճախոսել է և անեկապոյներ պատմել: Նրան են վերագրվում բազմաթիվ երգիծական մանրապատումներ, բարեպաշտական ու խրատական պատմություններ և քանատաղծություններ, այդ թվում և մի քսաիդ, որը հայտնի է «Ալ-Կասիդա ալ-

Բահայիյա» անունով<sup>45</sup>: Այս քսաիդի մասին ուսումնասիրողներն արտահայտել են տարբեր կարծիքներ. ոմանք գտնում են, որ դրա հեղինակն իրոք Բահայն է, իսկ մյուսների կարծիքով այն շատ ավելի ուշ շրջանի ստեղծագործություն է և Բահային է վերագրվել քյուրիմնագրաբար<sup>46</sup>: Այսպես թե այնպես, քսաիդը գրված է Բահայի անունից և իրենից ներկայացնում է միասնիկական, խոհամիլիդիստիկական բնույթի մի ստեղծագործություն, որ չարանակ կիշատակվում է Ալլահը, նրա ամենագորությունը և կոչ է արվում այս կյանքում լինել խոհարի ու բավարարվել բշով, քանի որ Ալլահը հանդերձյալ կյանքում դրա համար փարձատրելու է բազմակի: Այլ կերպ ասած՝ քսաիդը գրված է միանգամայն Բահայի «դավանանքին» համապատասխան ոգով, և եթե իրոք ուշ շրջանի ստեղծագործություն է, ապա ակնհայտաբան միատմամբ կերպով է «նամասպատասխանեցված» Բահայի կերպարի սզուն: Տարբեր աղբյուրներում Բահային են վերագրվում նաև նույն ոգով գրված մի շարք քանատաղծություններ<sup>47</sup>:

Ըստ որոշ աղբյուրների, Բահայը եղել է նաև ավանդություններ փոխանցող (տրայիցիտներս), սակայն, հետազոտողների կարծիքով, այստեղ նրան շվտում են նույնպես Բահայ անունը կրած այլ անձանց հետ, որոնց թվում եղել են և իրական ավանդողներ: Այսպես, օրինակ, հայտնի է Բահայ իրն Ռաշիդ անունով մի ավանդող, որն սուրբ է Իֆրիկիայում և վախճանվել 183/799թ.: Ըստ ուսումնասիրողների, բերևա հենց այս անձնավորության հետ Բահայի շվտությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ Բահայը, ըստ ավանդության, համարվում է նաև Հարուն առ-Ռաշիդ խալիֆի որդին՝ նույնացվելով մահմեդական սուրբ սու-Մարքիի հետ<sup>48</sup>: Ըստ այլ աղբյուրների, Բահայը եղել է նույնիսկ Հարուն առ-Ռաշիդի եղբայր կամ գարձիկը, որը, սակայն, կասկածելի է համարվում<sup>49</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ Բաղդադը հաճախ է հիշատակվում Բահայի անվան հետ կապված պատմություններում, ըստ նորագույն ուսումնասիրությունների, վերջինիս «գտնվելը Բաղդադում» խալիֆի նստափայտում, երևի ավելի շատ լեգենդի բնագավառին է վերաբերում»<sup>50</sup>: Բաղդադում է գտնվում նաև Բահայի կարծեցյալ գերեզմանը, որը մասնանշել են դրոշ հետազոտողներ<sup>51</sup>: Այստեղ, տապանարարին, կա նույնիսկ 501/1108թ. քվազրված մի արձանագրություն, որ Բահայն անվանված է «Մաջգուրների սուլթան» և «մքսամած հոգի» («النفس المطمسة سلطان المجاهيب»): Մականջ ժողովրդական ավանդությունը Բահայի անվան հետ կապված բազմաթիվ փայլեր ու պատմություններ է մատնանշում նաև Մադրիթում, այդ թվում և մի



մզկիք, որը կրում է «Բուհյուլի մզկիք» անվանումը<sup>54</sup>։

Այսպիսով, Բահյուլի անվան շարքը ժամանակի ընթացքում հյուսվել է լեզվեղենների ու ավանդությունների մի այնպիսի խիտ ցանց, որ նրա իրական կյանքի մասին տեղեկությունները մղվել են ևսին պլան ու նույնիսկ տարբարմովել դրանց մեջ։

Բահյուլի քաղաքը խոսքերը և նրա անվան շարքը հյուսված պատմությունները ժամանակի ընթացքում այնքան մեծ տարածում են գտել, որ նա զարմել է ոչ միայն արարների, այլև Արևելյի մի շարք այլ ժողովուրդների գրականության ու բանահյուսության նույնպիսի հանրահայտ ու սիրված հերոս։

Արարական գրականությունից Բահյուլի կերպարը մուտք է գործել նաև այլ իսլամական գրականություններ, հատկապես պարսկական, ինչպես նաև քուրդական, քուրքմենական (Լամիի Չելեքի (մեռ. 933/1532թ.), Հայրաթ Խվարիզմի (մեռ. մոտ. IX/XVդ. կեսերին) և այլն<sup>55</sup>։ Բահյուլն ի հայտ է գալիս նաև քուրդական բանահյուսությունում, հատկապես արևելյան Անատոլիայի շիխական բնակչության շրջանում<sup>56</sup>։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ XVIII դարում Բահյուլի մասին 5 մանրապատմներ ֆրանսիացի արևելագետ Դեբրյույի թարգմանությամբ, թարգմելով Լամիի Չելեքիից, ընդգրկվել են նրա "Bibliothèque Orientale"-ում, այսպիսով «վախադրվելով» եվրոպա<sup>57</sup>։ Դեբրյույից այդ պատմությունները փոխառել են այլ եվրոպական հեղինակներ<sup>58</sup>, որոնցից Կ.Ֆ.Ֆյոդերը, մասնավորապես, Բահյուլին նկարագրել է որպես Հարուն առ-Ռաշիդի պարսական ծաղրածուի<sup>59</sup>։ Նույն այդ մանրապատմները, որոշ տարբերությամբ, Ժ.Մարդյուսի փոխադրությամբ ընդգրկվել են «1001 գիշերի» ֆրանսերեն թարգմանության մեջ, ընդ որում Մարդյուսը ևս Բահյուլին ներկայացրել է որպես Հարուն խալիֆի ծաղրածու<sup>60</sup>։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Բահյուլը «1001 գիշերի» հետ ոչ մի անչորյուն չի ունեցել ընդհուպ մինչև XXդ. սկիզբը (1910թ.) և այդանոց է հայտնվել փաստորեն գուտ Մարդյուսի կամքով, հետևաբար նրա մասին հայերեն գրույցի բնագիրը «1001 գիշերում» փնտրելը, ինչպես այդ առաջարկել են որոշ ուսումնասիրողներ<sup>61</sup>, անօգուտ է։

Բահյուլը որպես բարեսրտության և աստվածավախության իդեալ է հանդիսանում գալիս հատկապես ուշ շրջանի պարսկական շիխական աղբյուրներում։ Բահյուլին քաջ ծանոթ են դեռևս XII-XIIIդդ. պարսիկ բանաստեղծները՝ Ռուքիեան Բակիին (մեռ. 606/1209թ.), ինչպես նաև մյասիկներ Աբբասը (մեռ. 617/1220թ.), Ռումին (մեռ. 672/1273թ.), Սաադին (մեռ. 691/1292թ.)։

Պարսկաստանում Բահյուլի վայելած ժողովրդականությունն էլ ավելի է աճում հասակապես 907/1502 թ. հետո, այսինքն՝ երբ, Սեֆյանների օրոք, շիզմն այսանոց դառնում է պետական կրոն։ Բահյուլի կերպարի «շիխական մեկնարանության իսկական հիմնավորումը» սկիզբ է առնում աշ-Շուշտարիի (մեռ. 1019/1610թ.) կազմված կենսագրականից և շարունակվում հետագա դարերի պարսկական աղբյուրներում։ Շուշտարին, մասնավորապես, առաջինն է հիշատակում այն զավեշտական պատմությունը, որ նկարագրված է Բահյուլի բանավեճը հանաֆիաների մագհարի հիմնադիր Աբու Հանիֆայի հետ (մեռ. 150/767թ.)<sup>62</sup>։

Բահյուլը հանդես է գալիս նաև շիխական ազդեցության ոլորտի մի շարք ժողովուրդների հեքիասներում՝ ինաստուն խորհրդատուի դերում<sup>63</sup>։

Բահյուլի՝ հատկապես շիխական շրջաններում այդքան մեծ ժողովրդականություն վայելելու պատճառը այն հանգամանքն է, որ նրա մասին հիշատակող արաբական առաջին իսկ հեղինակը՝ ալ-Ջահիզը, ընդգծում է նրա՝ դեպի շիզմն ունեցած հակումը։ Այդ փաստը շեշտվում է և հետագա աղբյուրներում։ Ռիսունմասիրողներից Ու.Մարցուֆը, մասնավորապես, առանձնացնում է Բահյուլի մասին լեզվեղի զարգացման երեք աստիճան՝ 1. նախնական աղբյուրներ (մոտավորապես մինչև V/XI դ. սկիզբը), 2. բնավորության տարբեր գծերի վերագրում և զուգնագրում (մոտ.մինչև X/XVI դ. կեսը), 3. «շիխական Բահյուլ» (մոտ. XVI դ. վերջից- XVII դ. սկզբից մինչև մեր օրերը)։

Հարկ է նշել և մեկ այլ ոչ անկարևոր փաստ՝ այն, որ իսլամական գրականություններից ու բանահյուսություններից Բահյուլի կերպարը մուտք է գործել և մի շարք քրիստոնյա ժողովուրդների գրականություն ու բանահյուսություն։ Այսպես, ասորական բանահյուսության մեջ Բահյուլը հանդես է գալիս բազմաթիվ առեկներում և անեկղառներում՝ Բահյուլ-Գիվանա կամ Բահյուլ-Ղանանդա («Լենթ-Բահյուլ» կամ «Ժմաստուն-Բահյուլ» անվան տակ։ Փոքր-ինչ կերպարանափոխված՝ բարի իմաստունի տեսքով, Բահյուլն ի հայտ է գալիս և ասորական ժողովրդական հեքիասներում<sup>64</sup>։ Մեր կարծիքով, փոխաստու աղբյուրը տվյալ դեպքում եղել է պարսկական բանահյուսությունը, ինչպես կարելի է եզրակացնել պարսկերեն «ղիվանա» և «ղանանդա» մականուններից։

Համանման մյուս օրինակը Բահյուլի (ըստ հայկական պատումի՝ Փախուլ), կերպարի թափանցումն է ինչպես հայ գրականություն, այնպես էլ հայ բանահյուսություն։ Բացի խնդրո առարկա Փախուլի գրույցի միջնա-



դարյան հայերենն քարգմանությանից, Փահլույն ի հայտ է գալիս նաև մասնավորապես, Սայաթ-Նովայի խաղերում: Ինչպես նկատում է Հ.Բախչինյանը, «Երգչի խաղերում բազմիցս հիշատակված է Փահլույ բազավորը... Սայաթնովյան խաղերում Փահլույը դարձել է նաև սիրուց խենթացածի հոմանիշ», մասնանշելով հետևյալ օրինակները.

1. Դիվանա Փահլույ կու շինիս տեսնողին՝ ազա իս, ազիզ
2. Լեկազար եմ Փահլույի պես, պառկած եմ սլիտ անդի մեջ
3. Գեղեցկությունդ տեսնողը դառնում է խելագար, Փահլույի պես ման է գալիս ոտաբորիկ
4. Փահլույի պես հոգնեցի էս աշխարհից...<sup>64</sup>

Հ. Բախչինյանը գրում է, որ Սայաթ-Նովան ինչպես Փահլույի, այնպես էլ մյուս արևելյան գրույցների (Լեյլի-Մեջնուն, Ֆարիադ-Շիրին և այլն) ծանոթ է եղել «զանազան աղբյուրներից», առանց, սակայն, ճշտելու դրանք<sup>65</sup>: Մեր կարծիքով, Սայաթ-Նովան Փահլույի կերպարին կարող էր ծանոթանալ, գուցա հեռաբար, ինչպես Փահլույի գրույցի հայերեն քարգմանության միջոցով, այնպես էլ արևելյան մի շարք ժողովուրդների (հասակապես պարսիկների, ինչպես նաև բուրբերի) բանահյուսությունից և պոեզիայից (երգարվեստից): Դրա վկայությունն է, մասնավորապես, այն փաստը, որ վերոհիշյալ օրինակներից մյայն մեկը՝ առաջինն է գրված հայերենով, այնտեղ էլ Փահլույն անվանված է պարսկերեն «Դիվանա» բառով, իսկ վերջին երեքը քաղված են Սայաթ-Նովայի աղբյուրներեն խաղերից<sup>66</sup>: Այնուհայտ է, որ երգիչը Փահլույի կերպարն ավելի հաճախ է վկայակոչում հատկապես այն ունկնդրին դիմելիս, որի համար այն քաջածանոթ է: Բացի այդ, Փահլույի մասին հայերեն գրույցում ոչ մի հիշատակություն չկա այն մասին, որ նա ոտաբորիկ էր շքում, մինչդեռ վերոհիշյալ աղբյուրներեն խաղում կրկնվում է այն, ինչ հաճախ է ընդգծվում թե՛ արարական, թե՛ մյուս մահմեդական աղբյուրներում<sup>67</sup>: Հեռաբար, «Փահլույի» հայերեն գրույցն ամենևին էլ միակ աղբյուրն չէ, որից Սայաթ-Նովան ծանոթացել է այդ կերպարին:

Փահլույի մասին «նայ իրականության մեջ բանահյուսվել են նաև առանձին երիպոսներ ու գրույցներ»<sup>68</sup>:

### 3. «Փահլույի գրույցի» հայերեն քարգմանության բնագիրը և ժամանակը

Այսպիսով, մնում է ճշտել, թե հասկապես ո՞ր աղբյուրն է հանդիսացել հայերեն քարգմանության բնագիրը և ե՞րբ է կատարվել այդ քարգմանությունը:

Ինչպես արդեն պարզ դարձավ վերոհիշյալ աղբյուրների քննությունից, «Փահլույի պատմության» հայերեն քարգմանության մեջ հանդես եկող Փահլույի կերպարը միանգամայն համապատասխանում է դրանցում նկարագրված «ժմաստուն խենթ»<sup>69</sup> Բահլույի բնութագրին:

Այսպես, հայերեն տեքստում Փահլույը նկարագրված է հետևյալ կերպ. «Ապա Լամ հնարք, երբայր ի շուկայն և յինէր սուտ խև: Եւ մարդիկն ծիծաղէին գինքն, և աղայքն ի եեան երբային և նեղէին: Վայր ի մէջ մարդկան և ասլր կաֆայս. [...] Եւ եղեզն հեծնոյր և վազէր ի փողոցն ի վայր և ի վեր, և ասլր բան զարմանայի»<sup>70</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս ընդգծվում է այն հանգամանքը, որ Փահլույը ոչ թե իրական, այլ սուտ խև է և որ այդ սուտ խևությունը նրա կողմից գործադրվող հնարք է միայն: Տարբերությունը կայանում է միայն նրանում, որ վերոհիշյալ մահմեդական աղբյուրները Բահլույի թվացյալ խենթության պատճառը համարում են կաղիի պաշտոնից հրաժարվելու նպատակը, մինչդեռ այստեղ՝ իր քաղավորությունից հրաժարված Փահլույ բազավորի ապաշխարանքն է: Իսկ ինչ վերաբերում է եղեզն հեծում՝ քաղաքի շուկայում կամ փողոցներում վերուվար անող, կաֆաներ և իմսոտուն խոսքեր ասող, միշտ երեխաներով շրջապատված և նրանց ծաղրածանակին ենթարկվող սուտ խև Փահլույին, սպա թե՛ արարական, թե՛ մնացած աղբյուրները, ինչպես ցույց տրվեց վերևում, տալիս են ճիշտ և ճիշտ նույն պատկերը:

Արարական և մյուս աղբյուրներում, ինչպես տեսանք, հաճախ է հիշատակվում այն մասին, որ Բահլույը սովորություն ուներ գերեզմանոցում իր ժամանակն անց կացնելու: Նույնն է ասվում և հայերեն տեքստում.

«Եւ սովորութիւն ունէր Փահլույն, որ երբայր ի հողվարքն կենար և անդ պտտիկ»<sup>71</sup>:

Նախքան վերջնական եզրակացություններ անելը հարկ ենք համարում ընդգծել նաև «Փահլույի պատմության» հայկական պատումի մի շարք առանձնահատկություններ, որոնք էական նշանակություն ունեն հայերեն քարգմանության բնագրի հայտնաբերման համար:

ա) Հայկական պատումն սկսվում է հետևյալ դրվագով. Փահլույը «մեծ



բազադ» է և «սև արևելյան աշխարհի»: Նա սովորություն ունի աղոթելու իր ոսկե գահին նստած: Մի օր իր սովորական աղոթքի ժամանակ նա իր պալատի տանիքին նկատում է մի ուղտապանի և հարցնում, թե ո՞վ է նա: Ուղտապանը պատասխանում է, որ իր ուղտերին է փնտրում այդտեղ: Երբ Փահլուլը նկատում է, թե ի՞նչ գործ կարող է ունենալ ուղտը պալատում, ուղտապանը պատասխանում է. «Այս դու որսվ 'ս կարես զատառած գտնել ի վերայ սոկի արտոյոյ և ... ի մարգարտաշար բախախոյ: Այդ աղօթքդ չ' ընդունելի աստուծոյ, այլ արի էջ յարաշոյոյ ի վերայ մոխրին և երկիր պագ սատառոյ, և սպա գտանես ողորմութիւն»: Այս ասելով, ուղտապանն աներևոյթ է լինում: Թագավորը հասկանում է, որ դա հրեշտակ էր և վարվում է նրա պատվիրածի համաձայն. իր փոխարեն գահին է նստեցնում իր որդուն, իսկ ինքը «*գլխն սիրոյն աստուծոյ*» հրաժարվում է ամեն ինչից և հեռանում իր երկրից<sup>76</sup>:

Հարկ է նշել, որ իրենց գահից «աստուծո սիրոյն» հրաժարված մի շարք քաղաքավորներ կամ քաղաքապետներ կարելի է գտնել ինչպես արարական, այնպես էլ պարսկական գրականության մեջ՝ մանենդական սրբերի վարքագրությունների ժանրի հուշարձաններում: Վերևում արդեն խոսվեց այդ հուշարձաններից մեկի՝ Հալոուն խալիֆի սրդի աս-Մարքիի վերաբերյալ լեգենդի մասին, ուր վերջինս հրաժարվում է իր գահաժառանգությունից և իր հացը վաստակում սեփական աշխատանքով<sup>77</sup>: Նման այլ գուգահեռներից է, մասնավորապես, սուֆիական շեյխ Իբրահիմ իբն Ադհամի մասին լեգենդը, որը Բալխի քաղաքն էր, սակայն բողոքում է իր գահը, կնոջն ու որդուն և հեռանում Մոզինա, ուր ապրում է օրպես աղքատ, իր հացը վաստակելով ծանր աշխատանքով<sup>78</sup>:

Ինչ վերաբերում է ուղտապանի մասին դրվագին, ապա Իբրահիմ իբն Ադհամի մասին վերոհիշյալ պատմությունում այն ունի հետևյալ տեսքը. Իբրահիմ քաղաքը որսի ժամանակ հետապնդվող կենդանուց մի հարց է լսում արդյո՞ք ինքը նրա համար է ստեղծված, որ հետապնդի անպաշտպան կենդանիներին: Հաջորդ առավոտյան Իբրահիմն իր պալատի տանիքին տեսնում է մի խորհրդավոր բեղուիկի, որն այդտեղ փնտրում է իր կորած ուղտին: Իբրահիմի հանդիմանությանն այն մասին, թե անիմատ է նման որսնումը, բեղուիկը պատասխանում է, որ դա ավելի անիմատ չէ, քան աստուծո փնտրելը՝ գահին նստած: Իբրահիմի վրա այս ամենն այնքան ուժեղ տպավորություն է գործում, որ նա, ցնցոտիներ հագած, Բալխից գաղտնի հեռանում է Մեքքա, ուր սկսում է ասկետի կյանք վարել<sup>79</sup>:

բ) Փահլուլի մասին հայերեն տեքստում ասվում է, որ նա, Բաղդադ գալով, «*կամեցավ կենալ անդ ի կերպ աղքատի, և մուրայր*»<sup>80</sup>: Նույն պատկերն ենք գտնում քաղաքական դերվիշների մասին քաղմաթիվ պատմություններում, մասնավորապես Ադհամ-Դիվանա դերվիշի մասին լեգենդում. վերջինս ապրում է գերեզմանոցում, մի փրված հյուղակում, գոյությունը պահպանելով ստացած ողորմությամբ<sup>81</sup>:

գ) Հայկական տարբերակում Փահլուլի գոյության մյուս միջոցը ջրկիրություն անելն է, ընդ որում իր աշխատանքի դիմաց ստացած հացը և դրամը նա բաժանում է աղքատներին. «*Եւ եզև ջրկիր և ջուր կրէր ի շուկանին, և տային իրն հաց և փող: Նա գամէնն տայր աղքատաց...*»<sup>82</sup>: Այս դրվագում իր արտահայտությունն է գտել մի չափազանց կարևոր հանգամանք, որը անպայման շեշտվում է վաղ մուսուլմանական գահիզների (ասկետների), իսկ ավելի ուշ՝ և սուֆիական շեյխների վարքագրություններում, այն է՝ պատկերացումը այսպես կոչված «*ռիզկ հալաթ*»-ի («քույրատրելի համապագօրյա հացի») մասին: Ըստ այդ պատկերացման գահիզը (կամ սուֆին) այս աշխարհում իր հացը կարող է վաստակել միայն խստորեն նախորշված միջոցներով, այսինքն՝ ջուր կրելով կամ ասվաստանից չոր փշամացառներ հավաքելով և որպես փակելիք վաճառելով<sup>83</sup>: Ընդ որում նույնիսկ այդ դեպքում գահիզը պետք է իր վաստակած դրամից իրեն պահի միայն նվազագույն անհրաժեշտ մասը՝ մնացյալը բաժանելով կարիքավորներին<sup>84</sup>: Իսկ մնացած բոլոր միջոցները, այդ թվում և խալիֆից կամ այլ իշխանավորներից պարգևներ ստանալը, համարվում են հարամ («անքույրատրելի»):

Ինչպես տեսնում ենք, Փահլուլը ավյալ դեպքում հանդես է գալիս որպես խկական գահիզ, որը խստորեն ենթարկվում է վերոհիշյալ նախանշումներին: Համեմատության համար նշենք, որ սուֆիական շեյխներից, մասնավորապես, Ֆուդայլ իբն Իյադը, ըստ նրա վարքագրության, ջրկիրություն անելով էր վաստակում իր և իր բնուսանիքի օրվա հացը<sup>85</sup>, ինչպես արդեն հիշատակված Իբրահիմ իբն Ադհամի հայրը Ադհամ-Մակկան («Ադհամ-Ջրկիր»<sup>86</sup>), իսկ Իբրահիմն ինքը ապաշխարելուց հետո իր գոյությունը պահպանում է փշամացառներ վաճառելով<sup>87</sup>:

դ) Փահլուլի հանդիպումները խալիֆի հետ, որանց ժամանակ Փահլուլը, սրպես կանոն, հանդես է գալիս խալիֆին խրատողի դերում, նույնպես իրենց գուգահեռներն ունեն մուսուլմանական սրբերի վարքագրություններում: Այսպես, օրինակ, արդեն հիշատակված շեյխ Ֆուգայլ իբն Իյադի



կենսագրություններում ևս պատմվում է նրա ունեցած հանդիպումների մասին Հարուն առ-Ուաշիյ խալիֆի հետ, որոնց ընթացքում նա խալիֆի հետ խոսում է նույն խրատական-բարոյախոսական ոգով, ինչ և Փահլույը<sup>34</sup>:

«Ե՛նչպես արդեն հիշատակվել է, Փահլույը քե՛ր ըստ հայերեն գրույցի, քե՛ր ըստ արաբական արդյուրների, արաստանում է կաֆաներ, որոնք սոզորված են աշխարհիկ կյանքի մերժման, մարդկային կյանքի սին ու անցողիկ լինելու, Ասածո ամենագործության և նման այլ գաղափարներով: Արաբական գրականության մեջ նման բանաստեղծությունները ներկայացված են որպես հատուկ ժանր՝ «գուհիյաթ», որը սկզբնավորվել է դեռևս մինչխալիֆական պոեզիայում և իր կատարելությանը հասել հատկապես Աբու-լ-Արախիայի (748-825) և Աբու-լ-Ալյա սո-Մաարբիի (979-1057) սանդղագործության մեջ<sup>35</sup>: «Չուհիյաթ» ժանրը մուսր է գործել և սլարավական գրականություն, զգալի տեղ գրավելով հասկապես սուֆիզի հեռերող բանաստեղծների ստեղծագործություններում: Այսպես, օրինակ, Աբու-լ-Արախիայի նմանորոշյալ բանաստեղծություններ է գրել Մա՛նավի՛ն, իսկ Սանա՛իի «Գիվանում» (1080-1140) «գուհիյաթից» բացի տեղ են գտել նաև կաթանդարիյաթ («քափառական դերվիշ-կալանդարներին վայել») նույնատիպ ժանրի բանաստեղծություններ: Խարանին (1120-1190) ևս գրել է դար մագամմաթ-ի դունյա («այս աշխարհը պարտավող») ժանրի բանաստեղծություններ<sup>36</sup>:

Ուսումնասիրողների կարծիքով, «Ինչպես «գուհիյաթ» ժանրը, այնպես էլ միասիկական-ասկետական ուղղությունը խալսմում (սուֆիզմ) ի հայտ է եկել ոչ առանց հունական կրոնա-փիլիսոփայական ուսմունքների, քրիստոնեական ասկետիզմի, իսկ հնարավոր է՝ և հնդկական հավատալիքների ազդեցության»<sup>37</sup>:

Ինչպես հայտնի է, հայ միջնադարյան պոեզիայում ևս հաճախ է արժարծվել «աշխարհիս անցաորութեան և եզեղոր բարիքի հախտենականութեան» թեման՝ Հովհաննես Երզնկացու, Ֆրիկի, Մլրտիչ Նադաչի, Նահապետ Քուչակի, Գրիգորիս Աղբամարցու, Հովասափ Մերասուսցու և այլոց բանաստեղծություններում<sup>38</sup>:

Հարկ է նշել, որ արաբական գանազան արդյուրներում ավերա Բահլույին վերագրվող մեծ երկու տասնյակ չափածո հատվածների, ինչպես նաև «ալ-Կասիդա սո Բահլույիյա»-ի համեմատությունը հայերեն գրույցի կաֆաների հետ գույց է տալիս հետևյալը. համընկնում են դրանց ընդհանուր իմաստն ու ոգին, իսկ երբեմն՝ առանձին պատկերներ ու սողեր, սակայն լրիվ

համապատասխանության մասին խոսել չի կարելի: Այդ երկու տասնյակի մոտ չափածո հատվածներից հայերեն կաֆաներին ամենից ավելի մոտենում են ընդամենը հեռակալ երկուսը.

1. **مع الحرص على الدنيا وفي العيش فلا تطمع**  
**ولا تجمع من المال**  
**فان الرزق مقسوم**  
**فغير كان ذي حرص**  
**عني كل من يتنع**

(Հրածարվի՛ր այս աշխարհի ծարավից և կյանք մի՛ գանկացիր, Մի՛ ժողովիր ունեցվածք, բանզի չգիտես՝ ում համար ես ժողովում, Երբ վիճակն արդեն զցված է, անօգուտ է դրան չհավատալը, Չբավոր է նա, ով ծարավի էր, հարուստ է նա, ով քշով է բավարարվում):

Հմմտ. *Թէ շատ և քէ քիչ գրիէ մարդ՝ ի հետ իւր տանել շկարէ, Մարդըն պիտի հանց ջանայ, որ ի յայն կեանքն չամայէ, Որ ի հոս առջ՝ հոն առնու, ստեղծօղէն սլարզն գտանէ, Որ տեղս գրկանք առնէ, նա ի յայն կեանքն վճարէ*<sup>39</sup>:

2. **فمنك قد ملكت الارض طرًا**  
**ولان لك العباد فكان ماذا**  
**لست تموت في قبر ويحوي**  
**ترائك بعد هذا ثم هذا**

(Կարծում ես քե՛ր տիրացել ես ողջ աշխարհին, Եվ քեզ են ենթարկվել ստրուկները, և ի՛նչ՝ Մի՛ քե՛ր դու չես մտնելու, իսկ դրանից հետո Մի՛ գերեզմանում կանդավորվի քեզից մնացած ժառանգությունը):

Կամ նույնը՝ որոշ տարբերություններով.

**هب لك قد ملكت الارض طرًا**  
**ولان لك العباد فكان ماذا**  
**الست تصير في قبر ويحوي**  
**عليك ترابه هذا وهذا**

(Ենթադրենք քե՛ր տիրացել ես ողջ աշխարհին, Եվ քեզ են ենթարկվել ստրուկները, և ի՛նչ՝ Մի՛ քե՛ր դու գերեզման չես մտնելու Եվ քեզ չի ծածկվելու նրա հողը:)



Հմնա. *Է՛ մարդ, որ փառաց հասար, տեր երկրի եղար ' արտոյ,  
 Դու հանց մեծացար ի քեզ, որ չես ապ մարդորիս մարդոյ.  
 Ան ի մահուանէ չունիս, չես ճարեր պաշար զմարդ,  
 Պահ մ'այլ դու բողոս զամենն և լինես տեր ափ մի հոյսո՞ւ:*

Ինչ վերաբերում է արարերեն մյուս չափածո հատվածներին, ապա դրանք, իրենց արտահայտած հիմնական գաղափարով ու ոգով համահնչյուն լինելով հանդերձ հայերեն կաֆաներին, ինչպես արդեն ասվել է, միևնույն ժամանակ փաստորեն անհամեմատելի են դրանց հետ (կարելի է ասել, իրենցից ներկայացնում են «վարիացիաներ» նույն քննայով): Համոզվելու համար մեջ բերենք մի քանի օրինակ.

3. *يا من تمتع بالنديا وزينتها  
 ولا تنام عن اللذات عيناه  
 شغلت نفسه فيما تست تدركه  
 تقول لله ماذا حين تلقاه*  
 (Ո՛վ մարդ, որ ախորժանք ես զգում այս աշխարհից և  
 նրա զարդարանքից,  
 Եվ ու՛ն աչքերը հրապույրները չեն քամահյում,  
 Դու ինքդ քեզ զբաղեցրել ես նրանով, ինչը քեզ համար անմատչելի է,  
 Ի՞նչ ես ասելու Ալլահին այնժամ, երբ հանդիպես նրան: )

Հմնա. *Թ՛ւ շատ և բ՛լ քիչ գրկես ու վայրես գերկիր խնդարով,  
 Ըտտով ես յասկից ի զնազ և մարմինդ ծածկի հողով,  
 Դարձիր ու բարիս գործել, գիտ բժիշկ ու դեղ քեզ շատով,  
 Որ յահեղ ու մեծ առեանն չլինիս սեռով ' ամօրով՞:*

4. *تناديك أحداث ومن صعوت  
 وارباجها تحت التراب حفوت  
 فيما جامع الدنيا حريصا لغيره  
 لمن تجمع الدنيا وانت تموت*  
 (Քեզ անխառ կանչում են ճակատագրի հանկարծավախությունները,  
 Մինչ դրանց տերերը հողի տակ են, անմտունչ.  
 Ո՛վ մարդ, որ ազահարբար այս աշխարհն ևս ժողովում ուրիշի համար՝  
 Ո՞ւմ համար ես ժողովում այն, եթե դու մեռնելու ես):

Հմնա. *Չամէ գե՛մ այս կեանքս քամոյ, որ վերնայ շատ մարդոյ վազ,  
 Է՛ր կամիս սիրել զայն իրքրն, որ կենայ հետ քեզ գե՛տ ի վազ,  
 Ժողվէ դու զանանց բարին և արա գինքն քեզ ի սազ,  
 Որ յօրն ի մահուն հոգիդ ու մարմինդ շատնուն մազ ի մազ՞:*

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ՝ ա) եթե արարերեն տեքստում եղել են նման կաֆաներ, ապա հայ բարգմանիչը դրանք բարգմանել է բավական ազատ, հետևելով լոկ ընդհանուր սզուն ու իմաստին. բ) եթե արարերեն տեքստում կաֆաներ չեն եղել, ուրեմն դրանք ավելացվել են արդեն հայկական միջավայրում որևէ հայ բանաստեղծի (կամ բանաստեղծների) կողմից՝ «Փահլույի պատմության» ոգուն համապատասխանեցվելով (նման օրինակներ հայտնի են և այլ բարգմանական գրույցներից՝ Պղնձե քաղաքի, Աղեքսանդրի պատմություններից և այլն):

Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել վերոհիշյալ փաստերի յույսի ներքո:

«Փահլույի գրույցի» հայերեն բարգմանության՝ մահմեդական գահիդների և հատկապես սուֆիական շեյխերի վարքերի հետ ունեցած անվիճելի աղերսները ցույց են ապիս, որ դրա բնագիրը պետք է վնասել հենց այդ շրջանակի հուշարձանների քվում և ոչ թե Բահլույի մասին հիշատակող այն արաբական և մյուս 97 աղբյուրներում, որոնցից քաղված են Ու.Մարցոյի ի մի բերած 153 պատմությունները և որոնց հետ, ինչպես տեսանք, հայերեն տեքստը սուկ Բահլույի կերպարի ամենաընդհանուր գծերին վերաբերող աղերսներ ունի: Այդ 97 աղբյուրներից և ոչ մեկում Բահլույը հանդես չի գալիս ոչ որպես թագավոր, որը հրաժարվում է իր թագավորությունից՝ ուղտապանի տեսքով հրեշտակի պատվիրանի համաձայն, ոչ էլ որպես ջրկիր, որն իր վատտակած «ն»-ին դրամը բաժանում է աղբատների: Ակնհայտ է, որ հայերեն տեքստի բնագիրը արարերենով (կամ պարսկերենով) կազմված է եղել մահմեդական վարքագրության «կանոններին» համապատասխան, Բահլույի ավանդական կերպարի հիմնական գծերին ավելացնելով որոշ այնպիսի նոր մանրամասներ, որոնք էլ այժմի են ընդգծում նրա՝ «սուրբ ճգնալյաց» վանկու հանգամանքը: Այսինքն, այլ կերպ ասած, Բահլույը ճգնալյաց սյրի լուսապատկով է զարդարված եղել դեռևս մահմեդական միջավայրում, նախքան քրիստոնեական-հայկական մուսը գործելը, իսկ քրիստոնեական միջավայրում վերածվել է քրիստոնյա սրբի, որը գրույցի ախարսում «փոխվում է ի Զրիստոս»՝ հայ գրականության համար շատ հազվագյուտ մի երևույթ:

Այսպիսով, «Փահլույի պատմության» հայերեն բարգմանությունը մի նոր էջ է բացում իսլամական գրականություններում արտացոլված Բահլույի կերպարի ուսումնասիրության ասպարեզում, վկայելով այն մասին, որ նրա անվան շուրջը հյուսված լեզենդի զարգացման փուլերից մեկն էլ պետք է



համարել նրա՝ սուֆիական վարքագրության ոլորտում հայտնվելը:

Վերջին ասպեկտը բոլորովին դուրս է մնացել ուսումնասիրողների, այդ բովանակում և Ու.Մարցոպի տեսողաշափոց: Ու.Մարցոպի, ինչպես արդեն նշվել է, շարունակ շեշտում է Բահյուլի կերպարի մեծ ժողովրդականության վայելելու փաստը շիրտական աղբյուրներում, իսկ սուֆիական աղբյուրների մասին ամուսն է ընդամենը մի չափազանց բուռնիկ դիտողություն, որ վերաբերում է պարսկական միտոլիկ բանաստեղծների հիշատակությաններին Բահյուլի վերաբերյալ<sup>66</sup>: Մինչդեռ, ինչպես ցույց տրվեց վերևում, սուֆիական վարքագրության մեջ Բահյուլը հանդես է գալիս որպես Փիրի, շեյխի կամ դերվիշ-դիվանայի դասական կերպար: Այդ հաստատելու են գալիս և մի շարք այլ փաստեր:

Այսպես, սուֆիզմի ջատագով, եգիպտացի ալ-Մուսաաֆին (մ.ա. 1031 թ.), որը հեղինակ է սուֆիզմի նշանավոր հեռերդների կենսագրությունների երկու ժողովածուի, սուֆիների շարքն է դասել ոչ միայն առաջին չորս բարեպաշտ խաղիֆներին, Հասան իբն Ալիին և Օմար իբն Արդ-ալ-Ազիզին, այլև այնպիսի «մուդյար»<sup>67</sup> խաղիֆների, ինչպիսիք են Աբու Յուսուֆ ալ-Բիսաամին և Ահմադ իբն Հարուն առ-Ռաշիդ առ-Մաբրին (ընդգծումը մերն է) Հ.Մ.)<sup>68</sup>: Այս կապակցությամբ Կ.Ֆոլերզն անում է հետևյալ ուշագրավ դիտողությունը. «... Ես ենթադրում եմ, որ դա (ի նկատի անի առ-Մաբրին – Հ.Մ.) Սուֆիի մի նույնպիսի լեգենդար կերպար է, ինչպես օրինակ, Կահիրեի բանահյուսության մեջ հայտնի Բահյուլ իբն Հարուն առ-Ռաշիդը»<sup>69</sup>:

Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, Բահյուլի տապանարարի վրայի արձանագրությունում (501/1108 թ.) նա անվանված է «մաջաբների սուլթան», որ համապատասխանում է սուֆիզմի երրորդ աստիճանին, իսկ որոշ ուշ շրջանի աղբյուրներում նրա մականուններից մեկն է առ-Սուֆի («սուֆիզմի հետևորդ»)՝<sup>70</sup>:

Ինչպես տեսնում ենք, Բահյուլի «դասման» ավանդույթը սուֆիզմի հեռերդների շարքը սկիզբ է առնում XI դ. առաջին քառորդից և շարունակվում հետագա դարերում<sup>71</sup>:

Այսպիսով, չնայած այն փաստին, որ պատմական Բահյուլն ապրել է մի ժամանակաշրջանում, երբ սուֆիզմը նոր էր սկսել ի հայտ գալ և որպես այդպիսին դեռևս վերջնականապես չէր ձևավորվել (մոտ. VIII դ. երկրորդ կես – IX դ. սկիզբ), նրա՝ աստվածաբանական գահիդ (ասկեա) լինելու հանգամանքը (որ միանգամայն համապատասխանում է հետագայի սուֆիական շեյխների կամ դերվիշների կենսավիճակագրությանը) հիմք է ծառայել,

որ նա սկսի դիտվել որպես իսկական սուֆի:

Այժմ դիմենք «Փահյուլի պատմության» հայերեն բարձրագույն մեջ տեղ գրած՝ Փահյուլի մասին մանրապատմություններին: Բացառությամբ միայն մեկ՝ Վլեննայի Մյսիբարյանց № 671 ձեռագրի, որ կան երեք հավելյալ պատմություններ<sup>72</sup>, մնացյալ բոլոր ձեռագրերում այդ մանրապատմությունը յարմ են<sup>73</sup>: Դրանք հետևյալներն են.

1. Մի օր շուկայում ինչ-որ մարդ Փահյուլի գլխից խլում է նրա գլխարկն ու փախչում: Փահյուլը գնում է նրան փնտրելու գերեզմանոցում: Այն հարցին, թե ինչու՞ է նա գողին հենց այդտեղ փնտրում, պատասխանում է. «Լսող թե ոչ այդ մարդն այստեղ է գալու»:

2. Մի մարդ Փահյուլին հանձնարարում է գնած միսը տանել իր տուն, սակայն երբ տուն է գալիս, տեսնում է, որ միսը չկա: Երբ նա Փահյուլից բացատրություն է պահանջում, վերջինս ասում է, որ միսը տարել է ոչ թե նրա ժամանակավոր՝ այժմյան տունը, այլ մշտական կացարանը, որ նա հետո պիտի գա՝ առաջնորդելով նրան գերեզմանոց:

3. Մի օր խալիֆն իր հեծյալներով գերեզմանոցով անցնելիս տեսնում է Փահյուլին և հարցնում, թե նա ի՞նչ է անում այդտեղ: Վերջինս պատասխանում է, որ նկզվում է բոլոր մեղայիտներին, քանի որ այս աշխարհից ոչ որ ոչինչ իր հետ տանել չի կարող:

4. Խալիֆը Փահյուլին տեսնում է գերեզմանոցում և հարցնում, թե ի՞նչ է անում նա այդտեղ: Փահյուլը պատասխանում է, որ չավում է իր և խալիֆի գերեզմանները. պարզվում է, որ սղրսու մուրացիկի և խալիֆի գերեզմանները նույն չափն ունեն:

5. Մի անգամ Փահյուլը նստում է խալիֆի գահին, որի համար ծառայները նրան ձեռնում ու անարգում են: Փահյուլը դիմում է խալիֆին. «Եթե ինձ մի պահ այս գահին նստելու համար այսպես ծեծեցին, ապա թե՞ ինչ սխալ անեմ, որ ամեն օր ես նստում»:

6. Խալիֆը հարցնում է Փահյուլին, թե ի՞նչ է անում Աստված այս ժամին: Փահյուլը նախքան պատասխանելու առաջարկում է վախկ իր և խալիֆի տեղերը՝ ինքը նստում է խալիֆի գահին, իսկ խալիֆը՝ Փահյուլի ավանակին: Այնուհետև պատասխանում է. «Ահա թե ինչ է անում Աստված այժմ. թե՞ որ խալիֆ ես, նստեցրեց իմ էշին, իսկ ինձ՝ որ Փահյուլ եմ, քո գահին»:

7. Խալիֆը հարցնում է Փահյուլին, թե քանի՞ աստղ կա երկնքում: Փահյուլը պատասխանում է՝ այնքան, որքան մազ կա իր ավանակի վրա, եթե խալիֆը չի հավատում, բող համոյի:



Մնացած 3 հավելյալ մանրապատումները, որոնց մասին նշվեց վերևում, հեռակալներն են.

8. Փահլույր տեսնում է մի հարուստի որդու, որ մսխել էր հոր ունեցվածքը և, «խոսմ ու կոկ» հագնված, նստած ոտում էր հաց, աղխ և աղ: Նա ասում է վերջինիս, որ եթև առաջ էլ այդպես պարկեշտությամբ ոտեր, այժմ անուշ կերակուր կճաշակեր:

9. Փահլույին հյուր են տանում և ոսկե գավաթով զինի մատուցում: Տանտիրոջը շնորհակարություն հայտնելուց հետո Փահլույր զինին քավում է զետնին, ասելով. «Եթև խան, զինին ինձ պիտի գետնով տա, դրա համար էլ ե՛ս նրան գետնով տվի»:

10. Փահլույր հյուր է գնում մի հարուստի տուն: Հանկարծ նրա մոտ խորխից ազատվելու ցանկություն է առաջանում, սակայն որ կողմ էլ մայրում է, տեսնում է ծածկոցներով զարդարված սրասեր, գորգապարտ հատակ և այլն, տեղ չի գտնում բեթոլ: Այդ ժամանակ նա բքում է տանտիրոջ երեսին, ասելով. «Այլ տեղ չգտա, քան քո անձը, քանի որ այնտեղը բողել ևս և այստեղի տունն ես զարդարել, այնտեղի սիրելիներին բողել ես և այստեղի սիրելիներին ես սրասվի արժանացրել»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայերեն «Փահլույր քաղաքորի մասին պատմությունը», սկսվելով որպես սրբի «Կարք և ճգնորխն», ավարտվում է, սակայն, գավեշտական բնույթի մանրապատումների մի շարքով, ուր, արդեն նշված պատճառներով, իրար են հակադրված հիմնականում Փահլույի և խալիֆի կերպարները:

Ինչ վերաբերում է Փահլույի մասին առաջին յոթ մանրապատումներին, ապա արդեն հիշատակված՝ 97 գտնագան աղբյուրներից քաղված այն 153 պատմությունների քվում, որոնք հայանի են Բահլույի մասին, առկա են դրանցից միայն երկուսի նախորինակները՝ № 1-ի (զողին զերեզմանոցում փնտրելու մասին)<sup>106</sup> և № 5-ի (խալիֆի գահին նստելու մասին)<sup>107</sup>: № 2 պատմության (միսը զերեզման տանելու մասին) երկու տարբերակներ գրի են առնվել քրդական<sup>108</sup> և աղբրեջանական<sup>109</sup> բանահյուսությունից, ընդ որում քրդական տարբերակը հայկականի ճիշտ կրկնօրինակն է և հենց *Բալույի Չանայի* մասին է, մինչդեռ աղբրեջանականում Փահլույի փոխարեն հանդես է գալիս Մոլլա Նասրեդդինը, խալիֆի փոխարեն՝ Եփնուրը, իսկ միսը փոխարինված է դեղձերով:

№ 3 և № 4 պատմությունների մասին կարելի է ասել հետևյալը. քև դրանց արարերեն կամ այլ լեզուներով զուգահեռներ առայժմ հայանի չեն,

սակայն դրանցում արժարժված հիմնական միտքը, այն է՝ այս աշխարհից մարդն իր հետ ոչինչ տանել չի կարող, իսկ խալիֆի և աղբատ մտրացիկի զերեզմանները նույն չափն ունեն, քազմիցս կրկնվում է Բահլույի քև՝ արարերեն բանաստեղծություններում, քև՝ նրա մասին պատմությունների մեծ մասում<sup>110</sup>: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այդ պատմությունները, քերև, մահմեդական բանավոր ավանդություն գոյություն են ունեցել, սակայն գրավոր ավանդություն չեն արտացոլվել: Ինչպես տեսանք մյուս համանման պատմությունների օրինակով, քանի որ դրանց գոյությունն ողկկցվել է զուգահեռաբար քև՝ գրավոր, քև՝ բանավոր ավանդությով, ապա միևնույն պատմությունը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ձևով է ի հայտ գալիս՝ ոմանց մոտ գրավոր աղբյուրներում, մյուսների՝ բանահյուսական, ուրիշների մոտ էլ ընդհանրապես քացակայում է կամ պատմվում որևէ այլ հերոսի մասին:

Մնացած պատմություններից № 7-ի («Քանի՞ տատղ կա երկնքում») արարերեն նախօրինակը մեզ հաջողվեց հայտնաբերել Ջուհայի վերաբերյալ արաբական պատմությունների քվում<sup>111</sup>, իսկ վերջինիս բուրբերեն մի տարբերակ՝ Հոջա Նասրեդդինի մասին մանրապատումների շարքում<sup>112</sup>: Այս կապակցությամբ հարկ ենք համարում մատնանշել մի կարևոր հանգամանք. ինչպես նշված № 7, այնպես էլ № 6 («Ի՞նչ է անում Ատված այժմ») մանրապատումներում (հայերեն տեքստում) ստվում է, որ Փահլույր խալիֆի պալատն է ներկայանում իր ավանակին հեծած<sup>113</sup>: Ինչպես արդեն նշվեց վերևում, արաբական, պարսկական և մյուս աղբյուրներում Բահլույը հանդես է գալիս միայն և միայն եղեգին հեծած, իսկ ավանակ ունենալու մասին ընդհանրապես խոսք չկա: Մինչդեռ արևելյան մի շարք ժողովուրդների բանահյուսությունից հայտնի է, որ ավանակը Մոլլա Նասրեդդինի կամ նրա «եղբայրակից» Ջուհայի անբաժան ողեկիցն է, նույնիսկ՝ ասրիբուտներից մեկը: Այսպիսով, ակնհայտ է, որ այս երկու պատմությունները, ամենայն հավանականությամբ, նախասպես պատկանել են «նասրեդդինյան» կամ Ջուհայի մասին մանրապատումների շարքին և միայն հետո են վերագրվել Փահլույին, ընդ որում նման վերագրման համար որոշիչ դեր է կատարել այն հանգամանքը, որ գլխավոր հերոսը հանդես է գալիս խալիֆին (կամ որևէ ուրիշ մեկին) խրատողի դերում:

Վերջին երեք (№ 8, 9, 10) պատմությունների կապակցությամբ Ա.Մրտալյանը խորհրդածում է. «... Եթև ոչ նույն քաղվածքը, արդյ՞ր որևէ բան իբր չի պակասում «Փահլույի» մյուս բնագրերի այս պարբերությունում...»<sup>114</sup>: Հարկ է



նշել, որ վերոհիշյալ 97 աղբյուրներից բաղված՝ Բահլուլի մասին 153 պատմությունների բովանդակում<sup>15</sup> չկա այս երեք մանրապատումներից և ոչ մեկը: Մեր կարծիքով, այստեղից կարելի է անել երկու հնարավոր եզրակացություն.

ա) կամ այդ 3 պատմություններն առկա են եղել արաբերեն բնագրում, սակայն բաղված են եղել ոչ թե գրավոր, այլ, հավանաբար, բանավոր աղբյուրից՝ այս դեպքում պետք է ընդունել, որ հայերեն մնացած բոլոր բնագրերն իրոք թերի են և միայն մի՝ Վիեննայի Մխիթարյանց № 671 ձեռագրի տեքստն է լրիվ (որը, մեր կարծիքով, քիչ հավանական է).

բ) կամ դրանք արաբերեն բնագրում առկա չեն եղել և ավելացվել են արդեն հայերեն թարգմանվելուց հետո՝ բաղվելով որևէ այլ աղբյուրից (գրավոր կամ բանահյուսական). այս դեպքում այդ պատմությունները կարող են պարզապես վերագրված լինել Փահլուլին՝ նախապես որպես գլխավոր հերոս ունենալով որևէ այլ համանման կերպար (օրինակ, Նասրեդդինին կամ նման որևէ այլ մեկին<sup>16</sup>): Այս դեպքում պետք է ընդունել, որ նման հավելում կատարվել է միայն մեկ՝ հիշյալ № 671 ձեռագրում, իսկ մնացյալ ձեռագրերով ավանդված հայերեն բնագիրն ամենևին էլ թերի չէ:

Հօգուտ վերջին վարկածի է խոսուս, մասնավորապես, № 9 պատմությունը (գինի խմելու մասին): Նույն այս մանրապատումը («Խմաստասեր ի սեղան բազավորի»<sup>17</sup>), ի թիվս հայ միջնադարյան սրճակի այլ մտուշների (առակներ, գրույցներ և այլն) ավանդված է XIII-XVII դդ. մի շարք ձեռագրերով, որ այն պատմվում է ռժն խմաստասերի կամ, երբեմն, Գիողինես խմաստասերի մասին<sup>18</sup>: Համեմատության համար մեջ բերենք համապատասխան հատվածները.

**ԲԱՄԱՏԱՍԵՐ Ի ՍԵՂԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ**

*Խմաստասեր մի կոչելին ի սեղան բազավորին ի ճաշակել: Եւ նա թագնեցավ ընդ իշխանան: Եւ մատրոռակ մի սակի թածակաւ մատառցին մնա գինի: Եւ նա կկաց յտուն և աս.*

*– Ով բարի թագատը, գգինս ի փառքոս քնպեմ. և եհեղ գգինին յերկիր:*

*Եւ իշխանքն ծիծաղելով ասացին.*

*– Յիմարեցա՞ր, ով խմաստասեր:*

*Եւ նա աս.*

**«ՓԱՀԼՈՒ»**

*Այր մի գնաց ի տեղի մի, տարտ իր հեա ի գինարքունսն ի տուն մեծատան, և լցին ասկի գաւարն գինի և առին ի ՓՀիլուլ, քէ՛ ծեմէլ: Եւ ստաւ գգաւարն ի ձեռն, շնորհակալեքցաւ տանախրոչն և ամենուն, և գգինին եհեղ ի գետինն:*

*Եւ ասացին. «Զի՞նչ տոնես»:*

*Եւ ասէ.*

*– Ըանց որ խմանեմ, որ*

*– Դուք էր ծիծաղելոյ արժանի. գրա յեղաւ յերկիր, քէ արբեալ էի ինքն գիս հեղայր յերկիր:*

*գինին գիս աի հեղու, ես գնա հեղեցի, նա գիմ երեսին ջարսն աի վաքէր, ես գնա վաքեցի՞»:*

Այսպիսով, ակնհայտ է, որ «Փահլուլի» գրույցը հայերեն թարգմանվելուց հետո համարվել է այլ (այդ բովանդակում և հայկական) աղբյուրներից բաղված որոշ մանրապատումներով, ընդ որում դրանցից առնվազն մեկը նախապես վերաբերվել է մեկ ուրիշ համանման կերպարի՝ «խմաստասերի» և հետո միայն վերագրվել Փահլուլին:

Այժմ, ամփոփելով վերևում ասվածը, փարձենք ճշտել հայերեն թարգմանության ժամանակը: Բանի որ «Փահլուլի պատմության» հայերեն հնագույն ձեռագիրն ընդօրինակված է 1432 թ., նշանակում է թարգմանությունն արվել է դեռևս մինչ այդ, գրույցի լեզուն միջին հայերենն է և ինչպես նաև է XIII-XIV դդ. արված մյուս նման թարգմանությունների լեզուն: Հիմնվելով այս փաստերի վրա, թարգմանությունը կարելի է բխարել մոտավորապես XIII դարից մինչև XV դ. առաջին քառորդն ընկած ժամանակահատվածով: Հայերեն հնագույն (Տյուրքինգենի) ձեռագրում առկա է ևս մի ուշագրավ համեմատանք. այստեղ գրույցը կրում է «Պատմութիւն Փիր Փահլուլին» (ընդգծումը մերն է – Հ.Մ.) վերնագիրը<sup>19</sup>: Մեկ այլ ձեռագրում, որը Ա.Սրսույանը բնագրում է առնվազն XVII դարով<sup>20</sup>, գրույցը կոչվում է «Պատմութիւն թագաւորի միայ, որ կալի Պէիլուլ Տիւանայ» (ընդգծումը մերն է – Հ.Մ.)<sup>21</sup>: Արդյո՞ք այս Փիր և Տիւանայ պարսկերեն բառերի ավելադրումը պետք է համարել այն բանի արագույց, որ հայերեն թարգմանությունն արված է պարսկերեն բնագրից՝ ստույժն դժվար է ասել, չնայած թագստված չէ: Այդ դեպքում Տյուրքինգենի ձեռագրում առկա «փոխած ի տանիկ լեզուն» արտահայտությունը պետք է հասկանալ որպես «թարգմանված պարսկերենից»: Այսպես թե այնպես, Բահլուլի կերպարը նախապես արաբական միջավայրի, գրականության և բանահյուսության ծնունդ է և հետո է միայն հայտնվել պարսկական գրական և բանահյուսական ավանդույթում, այդ իսկ պատճառով «Փահլուլի գրույցի» հայերեն թարգմանությունը հանդիսանում է արաբա-հայկական երե ոչ ուղղակի, ապա առնվազն միջնորդավորված կապերի արդյունք:



ماذا في علم الله فالخيرة في الواقع  
 تدبيرك ما يسواش من تدبيرك دعني  
 انا مالي فتاش ويش عليا متي  
 بتقدير مولاك كن راضيا ولا تترع ابراهيم حرج  
 جرت عادة الله في خلقه اذا ضاق امر ابي بالفرج  
 يا قلبي لا تهتم واتركهم الباطن  
 فالمقدور محتم سوف ترى وتعاين  
 سلم تسلم واعلم ان المقضى كالمين  
 من فوق قلبه عاش في الدنيا متهمتي  
 انا مالي فتاش ويش عليا متي  
 كد ليلة بت في كربة يكاد الرضيع لها ان يشيب  
 فما اصبح الصبح حتى اتى نصر من الله وفتح قريب  
 ايات الله تشرح نقرأ التشرح بيالي  
 ويحمد الله تشرح ونحق الفرحالي  
 يا قلبي امسي واصبح هم الدنيا سالي  
 واقنع بالشي وبلاش من يقنع يستغني  
 انا مالي فتاش ويش عليا متي

Երևանի Մասնադարանի № 1536 արարերին ձեռագրի I ր քերթը:

ولا زال سترى به دائما فسبحانه من حكيم عليم  
 ولا في حول ولا قوة سوى بالاله العلي العظيم  
 طارت الاعراب ما اعرف ذا من ذا  
 ستر الله المشان وجعل للروح غذا  
 لبنا بجرى بامان وشرائبا منتغذا  
 وجعل الارض فراش والسماء سقفا مبني  
 انا مالي فتاش ويش عليا متي  
 ولا زال سترى به دائما فسبحانه من حكيم عليم  
 نسبحان من عننا فضله عينا له الحمد والشكر فرض  
 يجود علينا باحسانه ويرزقنا من سماء وارض  
 الارض بساط الله وانا في ملك الله  
 والمخلق عبدا لله وانا من خلق الله  
 والادراق على الله ناكل من رزق الله  
 ما نتخير من وش ونصيبى بحققي  
 انا مالي فتاش ويش عليا متي  
 تحولت بالفكر في هل اتى وقلت لقلبي كفاك الخليل  
 مدمر امري ولا علم لي هو الله جسبي ونعم الوكيل  
 يا قلبي ثوب بالله فهو المعطي المساع  
 وارض بقضاء الله انك لله راجع

Երևանի Մասնադարանի № 1536 արարերին ձեռագրի I ր քերթը:



حکایت بهلول بالام خیفه

نفت کرد و روز بهلول عاقل دیوانه نالرزیکد زیر میگذشت در شهر بغداد بود  
که ابو خیفه لغت بندش کردان خود لادرس میگوید و در اثنای درس این مطلب  
استدلال میکند که طایفورا فقیه میگویند که شیطان از دروغ با آتش  
عذاب خواهد کرد این غلط محض است زیرا که شیطان ناریت و از آتش خنق  
شده است جنسش نفس تاثیر نمیکند و اینکه گویند شیطان با او در آخرت  
ستواید شد این هم غلط و لغو است بکلمه ایند چیزی وجود باشد باید بچشم  
و دیگر که ظن و حکان راضی چنان است که خیر از خدا و شر از نفس آدمیزاد  
نمایش شود این هم محض امر است و دروغ زیرا که خیر و شر هر دو از خداوند  
است چه در حال چون بهلول این حرف زنت و ناهمیهات لادوشند  
در لزرده از زمین پاره کلوز سر دشت چنان بدین نامید است آن چون  
لزل و لیدزد که خون لزرده منشر چار شد که در پیش بهلول لگرفته و شکایت  
بزرگ خلیفه بر دین خلیفه بهلول گفت لزر دیوانه چرا ادا این نسبت با نام کرد  
در جواب گفت چه کرده ام گفت چرا او بر لزرده گفت لولاس من زده ام بگو  
خند زده است گفت چه طور بهلول گفت لولاس کردان میگفت که خیر و شر خدا

ن

است پس نابراین عقلا او این شر که با در سیده خدا از دست من جا رکوت  
من چه نصیر کرده ام و اینکه میگوید من در در میگذرد و میگوید بجهت آنکه  
اعتقاد او چنانست هر چه که موجود است باید چشم دیده شود اگر در در وجود  
است کجاست که لولا نمینم و اینکه گوید از خلق متاثر شده ام این هم محض  
دروغ است بسینه که عقلا او است که جنسش نفس تاثیر نمیکند و یکس  
یعنی بشر از خاک آفریده شده است و تحقیق خاکند من لولاس با  
زده ام یقینا دروغ میگوید باید با اعتقاد خودش متاثر نشوید یک کلوز  
اندک چیز جواب میدهد اول گفت و برفت بر آن چیز نگوید  
حکایت ز نضال به خیفه گفت کرد و ز ابو خیفه ملعون در دفتر گفت  
سلوا فبقران تقییدونی پس لولاس عمار دون العرش در آینه لزلون  
به محبت خاندان رسول بخوایست گفت بالام مسند دارم که بجهت ندانستن  
قلب من زنجور سینه من بتنگ آمده است باید بر صاحب خداوند عالمیان  
جواب مسند حمز بگوئی و مرا ازین غم و فکر خلاص فرما ز ابو خیفه گفت ای  
ضعیفه نمونی پیرس از هر چه خواهرت جواب بیا از تن گفت بالام  
بفرما که آیا سمان فارسی در کجی فوت شد و او چه طور مرد بود گفت سمان



«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԳՆՉԷ ՔԱՂԱՔԻՆ»

1. Հայկական պատամը

«Պղնձն քաղաքի պատմությունը» պատկանում է այն զարմանալի ժո-րեն կենսունակ գրական հուշարձանների թվին, որոնք, ամենալայն ժո-ղովրդականություն վայելելով միջնադարյան Հայաստանում, շարունակել են գրավել հայ ընթերցողի ուշադրությունն ընդհուպ մինչև XX դարի սկիզբը: Այդ են վկայում, մասնավորապես, «Պղնձն քաղաքի պատմության»՝ աշխարհի տարբեր գրապահոցներում հանգրվանած վեց տասնյակից ավելի ձեռագիր ընդօրինակությունները, որոնք թվագրվում են XIV-XIX դդ.<sup>1</sup>, և մտա երկու տասնյակ հրատարակությունները (XVIII- XX դդ.):

Պատմությունն ունի հետևյալ բովանդակությունը.

*Շատ դարեր առաջ Մողանն Իմաստունը պղնձն կժերի մեջ է գնդանել անհնազանդ դեերին և կժերը կնրել իր կնիքով, որի կախարդական ուժի առջև անգոր են շար ոգիները: Այդ ժամանակից վեր, երբ որևէ մեկը ծովի հատակից քարծրացնում է այդ անոթներից մեկն ու բացում այն, բանտարկ-ված դեր, բարձր աղաղակելով, գորս է փայլում:*

*Լսելով այն մասին, որ նման պղնձն կժեր կարելի է ձեռք բերել հեռավոր ու առեղծվածային Պղնձն քաղաքի մոտ, խալիֆը մի «արշավախումբ» է ուղարկում այնտեղ: Մակայն չափազանց դժխար է ու վասնզավոր Պղնձն քաղաք տանող ճանապարհը: «Արշավախումբն» առաջնորդում է մի խնաս-տան ձերուհի: Վերջապես ճամփորդները հասնում են Պղնձն քաղաքին, բայց սրբազան է, որ այն շրջապատված է անմտաչելի պարսպով և ոչ մի դարպաս չունի: Պարսպի վրայով անցնելու բոլոր փորձերը ողբերգական վախճան են տնենում, քանի որ քաղաքը կախարդված է: Վերջապես խնաս-տան ձերուհին քալիսմանի օգնությամբ կարողանում է խումբը ներս տանել լաղաք: Պղնձն քաղաքը գեղեցիկ է և չափազանց հարուստ, սակայն ոչ մի կենդանի չունի չկա այնտեղ, բոլոր բնակիչները մեռած են, այդ թվում և քաղաքի չքնաղ ախրոտիին: Մանի առջև անգոր է ամեն ինչ՝ թե՛ անասնման իշխանությունը, թե՛ բոլոր գանձերը, թե՛ գեղեցկությունը, երիտասարդու-թյունն ու երջանկությունը: Ունայն է մարդկային կյանքը, ունայնություն*

*ունայնությունը...*

*«Արշավախումբը» վերադառնում է՝ բերելով կժերը, և խալիֆին պատմում Պղնձն քաղաքում տեսածի մասին: Խալիֆը չափազանց հուզվում է, համակվում աշխարհուրացության գաղափարով, աղբատներին բաժանում իր բոլոր գանձերը, հրաժարվում գանից և նվիրվում ապաշխարության, քանի որ համոզվում է, որ անցողիկ ու անօգուտ են իր և՛ փառքը, և՛ իշխանությունը, և՛ հարստությունը:*

Ինչպես անեմում ենք, «Պղնձն քաղաքի պատմությունը» հիմնականում տոգորված է աշխարհի ու մարդկային կյանքի ունայնության գաղափարով, բարոյախոսական-խրատական ոգով: Այնուհանդերձ, որ հենց թվարկված հատկանիշներն են որոշիչ դեր կատարել արարական այս հեքիաթի՝ հայերեն թարգմանվելու հարցում, հնարավորություն տալով միջնադարյան հայ թարգմանչին ժամանակի հայ գրականությունը հարստացնելու աշխարհուրացության «քրիստոնեական» ոգով շնչող ևս մի երկով: Ինչպես ցույց արվեց վերևում «Փափուլի պատմության» կապակցությամբ, աշխարհ-ուրացության գաղափարը, խրատա-բարոյախոսական ոգին, հոռետեսա-կան արամադրությունը ոչ միայն խորք չեն, այլև բնորոշ են նաև արարական միջնադարյան գրականության մի շարք հուշարձանների, որտեղից էլ հենց, որպես քրիստոնեական միջնադարյան աշխարհընկալմանը համահնչյուն ստեղծագործություններ, դրանք անփոփոխ կերպով «որդեգրվել» են ու շարունակել իրենց գոյությունը արդեն որպես քրիստոնեական «հոգեշահ» երկեր<sup>2</sup>:

«Պղնձն քաղաքի պատմության» հայկական պատմի ուսումնասիրու-թյամբ գրադվել են մի շարք բանասերներ, սակայն առ այսօր դրա հետ կապված որոշ խնդիրներ մնում են դեռևս չլուծված: Նշված խնդիրների լուծմանը մեծ չափով կարող էր նպաստել քննական քննադրի հրատարա-կությունը, որը, սակայն, դեռևս չի իրականացված<sup>3</sup>:

«Պղնձն քաղաքի պատմության» վերաբերյալ առաջին բանասիրական դիտողություններն արվել են դեռևս XIX դ. վերջին, Ա.Տեկանցի<sup>4</sup>, այնուհետև Հ.Տաշյանի կողմից: Հ.Տաշյանը ենթադրաբար թարգմանությունը վերագրել է Արաբել Անեցուն կամ Ժիրակավանցուն (XIII դ.), որն արաբերենից թարգմանել է «Աղէլախոս» կոչվող երագահանը: Հ.Տաշյանը միաժամանակ նշում է նաև, որ թարգմանությունն արված է «արաբական «Հազար ու մեկ գիշեր» վեպի վրեն»: Հարկ է նշել, որ թարգմանչի անձնավորության և թարգ-մանության ժամանակի հարցը տարակարծություններ են առաջացրել նաև



հետագա ուսումնասիրողների մեջ: Այսպես, քարգմանությունն Առաքել Անեցուն է վերագրել մահ Ղ.Հովնանյանը, հիմնվելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 88 ձեռագրում պահպանված հետևյալ հիշատակարանի վրա. «Պատմություն Պղնձե քաղաքին, գոր քարքմանեալ է Առաքել վարդապետն ի տաճիկ լեզուէ ի Հայոց լեզուս» (թ. 251ա): Նրա կարծիքով և, ինչպես Հ.Տաշյանի, հիշյալ Առաքել վարդապետը մույն այն Առաքել Անեցին է, որ «յարարելնն քարգմանած է մահս զԵրագահան» և որ «ի նախաշաղին զինքն լոյ Առաքել արեղայ կ'անուանէ»: Որպես իր ենթադրությունը հաստատող փաստ նա նշում է, որ միևնույն № 88 ձեռագրում է գտնվում մահ հիշյալ Երագահանի ընդօրինակությունը<sup>6</sup>:

Առաքել Անեցուն «Պղնձե քաղաքի» քարգմանիչ են համարում մահ մի շարք այլ հետազոտողներ<sup>7</sup>:

Սակայն ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ «Պղնձե քաղաքը» քարգմանած Առաքել վարդապետին չի կարելի նույնացնել «Աղէկախօսը» քարգմանած Առաքել Անեցու հետ՝ համարելով նրանց աարբեր անձինք<sup>8</sup>:

Ն.Ալիևյանը գրում է, որ իրեն ծանոթ են «Պղնձե քաղաքի պատմության» ավելի քան երեսուն ձեռագրեր, որոնք միարեւմտ հաստատում են, քն քարգմանությունը կատարված է արարելեռնից, սակայն դրանցից միայն մեկն է անվանում քարգմանչին՝ «Առաքել վարդապետ» (Վիեննայի Մխիթարյանց № 88 արդեն հիշատակված ձեռագիրը): Նրա եզրակացությունը հետևյալն է. «Թարգմանությունը հին է, հասանօրէն 1250-1350 շրջանէն», սակայն քանի որ «30 ձեռագիրը լուսն են քարգմանչին անունը», վերոհիշյալ միակ վկայությունը կորցնում է իր արժանահավատությունը<sup>9</sup>:

Եղել են և այնպիսի հետազոտողներ, որ քարգմանությունը վերագրել են առղասաց Գրիգորիս Աղքամարցուն<sup>10</sup>: Սակայն, ինչպես ցույց է արվել հետագա ուսումնասիրություններում, Գրիգորիս Աղքամարցին միայն լուսածել է քարգմանության տեքստը՝ վերաձևակելով կամ նոր կաֆաներով հարստացնելով այն<sup>11</sup>:

Այսպիսով, մնում է վերջնականապես պարզել, քն արդյա՞ր Առաքել Անեցին և Առաքել վարդապետը միևնույն անձն են, այլ կերպ ասած, ո՞վ է, ի վերջո, «Պղնձե քաղաքի պատմության» քարգմանիչը:

Նախքան հետագա դատադրություններին անցնելը ավելորդ չենք համարում կանգ առնել այն հարցի վրա, քն ի՞նչ է մեզ հայտնի Առաքել Անեցու մասին:

Մեզ հասած չափազանց սուղ տեղեկությունների միակ աղբյուրը ձեռագրերի հիշատակարաններն են, մասնավորապես այն, որ պահպանվել է Առաքել Անեցու՝ արարելեռնից քարգմանած վերջ հիշատակված Երագահանում. «Չայս Երագահանս ի տաճիկ յարսայ գրէ ի հայ գիր մեկնեալ Առաքել իմաստասէր արեղայն, որ մականունն Վատ ասեն, և Մխիթար Կղեկանց և Շերանն, ի յԱնի քաղաքին դրան ի վերս բերդ և անունն Մաղաբերդ և բերդին անունն Ծարբար: Ի յայն բերդին գրնտանն մեծ մարդ մի կայր տաճկաց, և այս գիրքս ի հետ յայն գնտանին յայս Գ հոգիս փոխել են ՌՀԱ (1222) թվին ի հայ լեզու, ի սահմի ամսոյ Գ ամսուն, որ արեռնեալ անգրատ յախանանրս, ամեն»<sup>12</sup>:

Այսպիսով, այս հիշատակարանից տեղեկանում ենք, որ Առաքելը եղել է արեղա, իմաստասեր և տիրապետել է արարելեռնին, ունեցել է Վատ մականունը, ապրել է XIII դարում և եղել է անեցի:

Նույն երագահանի մեկ այլ ընդօրինակությունում գտնում ենք Առաքելին վերաբերող մահ հետևյալ մանրամասնությունները. «...յարեղան յԱնցի, որ անուամբ Առաքել ասեն... և Շիրակվանեցի ի յԱնի քաղաքի մատն»<sup>13</sup>: Շիրակվանը (կամ Երագավորսը), ինչպես հայտնի է, գտնվել է Անի քաղաքից հյուսիս-արևելք, Ախուրյան գետի աջ ափին: Անեցի-Շիրակվանեցի կրկնակի անունը, պետք է ենթադրել, պայմանավորված է նրանով, որ այդ երկու բնակավայրերից մեկը եղել է Առաքելի ծննդավայրը, իսկ մյուսը՝ նրա մշտական բնակության վայրը:

Առաքել Անեցու ապրած ժամանակաշրջանը համապատասխանում է մտավարսպես XII դ. վերջից - XIII դ. սկզբից մինչև XIII դարի կեսերն ընկած հատվածին: Ինչպես հայտնի է, այդ շրջանում (1199-1204 թթ.) սմիրսարսաղար Չարարե Բ Անիին միացրեց Հայաստանի հյուսիսային նահանգներից մի քանիսը և վերածեց այն վարչական կենտրոնի: Չարարյանների տիրապետության օրոք Անին ծաղկում ապրեց. հայտնի է, որ այդ շրջանում կառուցվել են ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ շինություններ, նորոգվել են բերդապարիսպները, կամուրջները: Ամենայն հավանականությամբ այդ քաղաքական-ամտեսական վերելքն ուղեկցվել է և մշակութային կյանքի վերելքով, քանի որ ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Բացի այդ, Չարարյաններն իրենք, հատկապես Իվանեն, պետք է որ հովանավորած ու նպաստած լինեն գիտության ու մշակույթի զարգացմանը, քանի որ եղել են, ըստ աղբյուրների, ժամանակի կրթված ու իմաստասեր մարդկանցից: Սակայն Անիի այս շրջանի մշակութային կյանքի մասին մեզ հասած փաստերը կցկտուր են և սակավաթիվ<sup>14</sup>: Մասնավորապես, Անիում XII դարի վերջին-XIII դ. սկզբին կատարված



քարգմանությունների մասին մեզ հասած տեղեկությունները սահմանափակվում են լոկ երկու աշխարհիկ բնույթի երկերով. դրանցից առաջինը մոտավորապես 1187թ. պարսկերենից Մխիթար Անեցու քարգմանած աստղագիտական երկն է Արեգակի և Լուսնի խավարումների մասին<sup>17</sup>, իսկ երկրորդը՝ վերահիշյալ արաբական երագահանը, որը 1222 թ. քարգմանել է Առաքել Անեցին:

Վերադառնալով «Պղնձե քաղաքի պատմությանը», նշենք, որ, մեր կարծիքով, մի շարք փաստեր խոսում են հոգուտ այն վարկածի, որ այնուամենայնիվ Առաքել Անեցին է դրա քարգմանիչը, քանի որ.

1. Ինչպես հայտնի է, Հովհան Ռոսանեցին (1314-1388թթ.) իր աշխատություններից մեկում հիշատակում է «Պղնձե քաղաքի պատմությունը» որպես հանրածանոթ «առասպելական գիրք»<sup>18</sup>. հետևաբար, վերջինիս քարգմանությունը պետք է որ առնվազն XIII դարում կատարված լիներ:

2. Ինչպես հավաստում է Ա.Լորանսին, Փարիզի Ազգային գրադարանում պահվող հինգ հայերեն ձեռագրերում առկա «Պղնձե քաղաքի պատմության», բոլոր հինգ ընդօրինակություններն էլ որպես քարգմանիչ անվանում են Յովհաննես Առաքել Շիրակվանցուն<sup>19</sup>. այսպիսով, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 88 ձեռագիրը ամենևին էլ միակը չէ, որտեղ հիշատակվում է այդ անունը: Հետևաբար, Ն.Ալիևյանի կասկածը այդ վկայության ոչ արժանահավատ լինելու վերաբերյալ անհիմն է:

3. Թարգմանության ժամանակը ճշգրտելու համար կարևոր է, մեր կարծիքով, մի հանգամանք ևս. «Աղէկախօս» երագահանի հիշատակարանում Առաքելի մասին խոսվում է որպես արեղայի, մինչդեռ «Պղնձե քաղաքի պատմության» հիշատակարանում՝ որպես վարդապետա: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Առաքելը հավանաբար վարդապետ է ձեռնադրվել երագահանի քարգմանությունից, այսինքն՝ 1222 թվականից հետո, և «Պղնձե քաղաքը» քարգմանել է արդեն վարդապետ եղած ժամանակ: Հավանական է, որ դա տեղի ունեցած լինի 1222-1236 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, քանի որ 1236-ին Անին, ինչպես և Շիրակավանը, պաշարվեց ու զրավվեց ճոճողական զորքերի կողմից, որով էլ ընդհատվեց Չաքարյանների սիրապետության ծաղկուն շրջանն Անիում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Առաքել Անեցի-Շիրակվանեցին XIIIդ. առաջին կեսում արաբերենից հայերեն է քարգմանել առնվազն երկու աշխարհիկ երկ, այդպիսով իր լուսնան ներդրելով արաբա-հայկական գրական կապերի ասպարեզում<sup>20</sup>, և որ Անիում XI-XIII դդ. կատարված

մինչև այժմ հայանի երկու քարգմանությունների բլին կարելի է ավելացնել ևս մեկը՝ «Պղնձե քաղաքի պատմությունը»:

«Պղնձե քաղաքի պատմության» կաՖաները նույնպես զբավել են մի շարք ուսումնասիրողների ուշադրությունը, իսկ Հ.Միմոնյանը առանձին առումնասիրության նյութ է դարձրել դրանը<sup>21</sup>:

Ինչպես արդեն ասվեց, Գրիգորիս Աղբամալցին XVI դարում «լուսածել» է «Պղնձե քաղաքի պատմությունը». այդպիսով նա էլ ինք է դրել վերջինիս այսպես կոչված «գրիգորիսյան» խմբագրությանը: Ըստ այդմ պատմության նախնին՝ «չլուսածված» տարբերակը ուսումնասիրողների կողմից ստացել է «նախագրիգորիսյան» անվանումը: Բացի «գրիգորիսյան» և «նախագրիգորիսյան» խմբագրություններից, հայագիտությանը ներկայումս հայանի է ևս մեկը՝ այսպես կոչված նախնական կամ համառոտ խմբագրությունը, որը գոյություն ունեցողներից ենագույնն է: Վերջինիս առայժմ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել և երաստարակվել է 1958 թ. Ն.Ալիևյանի կողմից<sup>22</sup>: Ըստ Ն.Ալիևյանի նկարագրության, նրա գտած ձեռագիրը կրում է հետևյալ խորագիրը. «Ձրոց եւ խաոսք առաջի քագատրացն եւ իշխանացն, գոր քարքմանեցին Գառիք Կորապաղատին ի հայ լեզու ի տանիկ լիգվլ»: Հիմնվելով Գառիք Կորապաղատի անվան հիշատակության վատտի վրա, Ն.Ալիևյանը քարգմանության այս խմբագրությունը թվագրում է X դարի վերջով: Քանի որ Կորապաղատը «վախճանված է 1000, մարտ 31», Ալիևյանը գտնում է, որ քարգմանությունը կատարվել է հովհանաբար 950-1000թթ. Տայոց նահանգում և որ քարգմանիչները «ուայեցի քլլալու ևն»<sup>23</sup>: Նշելով, որ ձեռագիրը «չունի յիշատակարան, վասն զի վերջին բողբեր ինկած են, այս պատճառով այլ անյայտ են գրչին անունը, գրութան սևղն ու տարին», Ն.Ալիևյանն այն թվագրում է XIV դարով<sup>24</sup>:

Համեմատելով X և XIII դդ. քարգմանությունները, Պ.Մորաղյանը ցույց է տվել, որ դրանք իրոք «Պղնձե քաղաքի պատմության» տարբեր խմբագրություններ են, մասնավորապես, դրանցից առաջինում հանդես են գալիս երկու վեզիրներ՝ Դմեռախ և Քարիմատին անուններով, իսկ երկրորդում՝ միայն մի վեզիր՝ Ամիրաք անունով: Այսպիսով, նա եզրակացնում է, որ նույն հեքիաքը հայերեն է քարգմանվել երկու անգամ, տարբեր արաբական բնագրերից: Զննելով նաև «Պղնձե քաղաքի» վրացական պատմը, Պ.Մորաղյանը եզրակացնում է, որ «պատմությունը հայ և վրաց գրականության մեջ հայտնի է երկու պատմմաներով՝ համառոտ և ընդարձակ, քստ որում վրացերեն ընդարձակ խմբագրությունը քարգմանված է XVIII դարի



հայկական հնատախա հրատարակություններից, իսկ համառոտը՝ X դարում, նույն սկզբնաղբյուրից կամ Դավիթ Կուրապատյանի պատվերով «ի հայ լեզու» քարզմանվածի միջնորդությամբ»<sup>27</sup>:

Ի դեպ, «Պղնձե քաղաքի սրտամտության» հայկական տարբերակը որպես բնագիր է ծառայել ոչ միայն վրացերեն, այլև հայաստան քուրքերեն քարզմանության համար, որ կատարել է, 1706թ., Լադոսյ գառն Յովհաննիսը<sup>28</sup>: Հայանի է նաև պատմության վրացատառ հայերեն մի ընդօրինակություն, 1865թ., որը պահվում է Մատենադարանում<sup>29</sup>:

Ուշագրավ է այն փաստը, որ Պղնձե քաղաքը հիշատակվում է նաև հայ միջնադարյան գրականության և բանահյուսության մի շարք հուշարձաններում, մասնավորապես «Աղեքսանդրի պատմությունում» և «Մասնա ծոեր» էպոսում: Այսպես, ըստ «Աղեքսանդրի պատմության» հայկական պատմի որոշ ապրերակների, Աղեքսանդրն այցելում է Պղնձե քաղաքի քաղառնի Կամրակին<sup>30</sup>: Ինչպես նկատում է ուսումնասիրողներից Հ.Սիմոնյանը, Կամրակի պարստի և գարդերի նկարագրությունը «գարմանայի նմանություն են ցուցաբերում «Պղնձե քաղաքի մեծած քաղառնու աղալուարդի և ապարանքի պատկերների հետ, նշելով նաև, որ «ընդհանրությունները երկուստեք արտահայտվել են և համապատասխան կախաներում, որոնցում ընդհանուր է անգամ լեզվառճակյան ատաղձը, հանգելով հաճախ նման ձևակերպումների ու դարձվածների»<sup>31</sup>: Սեկ այլ առիթով Հ.Սիմոնյանը գրում է. «...նմանությունների հետքեր կարելի է գտնել Պղնձե քաղաքի քաղառնու, Աղեքսանդրի պատմության՝ Կամրակե-Քանդակինն տիրուհու և էպոսի Խանդուր Խաթունի արքայանիստ քաղաքի, գտնույթի և պարսպապատ պալատի նկարագրությունների մի շարք մանրամասների մեջ: Արդյոք այս ընդհանրությունների ակտնը Պղնձե քաղաքի սրտամտությունը չէ<sup>32</sup>, որի հետավոր արձագանքները միջնորդ օղակների միջոցով հասել են էպոսին»<sup>33</sup>: Այսպիսով, Հ.Սիմոնյանը նման փաստերը դիտում է, մեր կարծիքով, իրավացիորեն, որպես «միջնադարյան գրույցների փոխներքախանցումների» օրինակ<sup>34</sup>:

Հ.Սիմոնյանը նաև մտանանշում է, թե ինչպես XIV դ. Խաչատուր Կեչառեցու ձեռքով «Աղեքսանդրի պատմություն» է ներմուծվել Պղնձե քաղաք անվանումը՝ նույնացնելով այն այստեղ հիշատակվող Արեգ քաղաքի հետ<sup>35</sup>:

Ինչ վերաբերում է «Մասնա ծոերում» հանդես եկող Պղնձե քաղաքին, ապա Մ.Արեղյանն այդ կապակցությամբ անում է հետևյալ դիտողությունը.

«Արվանձայանը («Գրոց ու բրոց», Եր.111) «Լարազա դաշտի մեջ դնում է Պղնձե քաղաք, երևի ավերակի անուն: Անշուշա այս է վեպի մեջ հիշված Պղնձե քաղաքը, որի քաղաքի աղջկան առնում է Մամասարը կամ իր եղբայրը: Մի պատմումով, սակայն, Խանդուրի հայերենից է Պղնձե քաղաքը»<sup>36</sup>: Սեկ այլ առիթով, սակայն, Մ.Արեղյանն այլ կերպ է մեկնաբանում Պղնձե քաղաքի առկայությունը Լարսում. «Այս պատմությունը պարզապես անպրոպային կովի մի առասպել է: Ինչրան էլ Վանա մոտ ցույց էին տալիս Պղնձե քաղաքը, բայց դա մի վիպական անուն է, որ և իր մեջ փակված աղջկանով դառն է գալիս նաև այլ ազգերի վեպերի մեջ: Երկինքն իբրև քաղաք սրբաբավ պատած և անդուն կամ պղնձի դրնեքով, շինած պղնձից կամ ուրիշ մետաղներից՝ հաստիկ է շատ հին ժողովուրդների հասկացության: Այրտեղ փակված աղջիկը նույն ինքն արեգակն է, որ ծովային վիշապը հափշտակել է: Ակնունք թե մատանի, խելապես մատանու ակն, վիշապի բերանին, դա միևնույն «ակն ու արեգակ» աղջիկն է, որ և մի սրտամտով դարձել է «ճրագի պես վառվող ոսկի խնձոր»: Արդ՝ այդ ակն ու արեգակը գերի է վիշապի ձեռքին, ուստի և երկինքը մրնել է, կամ պատկերավոր խոսքով, աղջկա ապարանքը սև ու սուրն է, սև վարազուրով ծածկված է: Գալիս է ծովային երկղեն դիցազն Մամասարը, ազատում է վիշապի բերանից ակը և լուսավորում է քաղաքը, այսինքն՝ արեգակն երևում է»<sup>37</sup>:

Նախքան հեռագա դատողություններին անցնելը դիմենք Լյուսին. վերջինիս որոշ պատմություններում Պղնձե քաղաքը հանդես է գալիս որպես Քառասն-ճյուղձամի հոր՝ Քաջանց քաղաքի քաղաք: Այստեղ նկարագրվում է, թե ինչպես Մամասարը

... Էդ ժամանակ դարձավ, Էկավ քաղքի մոտ.  
Քառիկ Չալալինի սանձ օրրեց,

Սեկնն թռավ, անցավ թզպղրնձե պարիսպ,  
Իչավ, մտավ քաղքի մեջ:-  
Չէ՞ Էդ քաղաք բաց դուռ չուներ,  
Տի թոներ, անցներ գպարիսպ...»<sup>38</sup>

Մ.Արեղյանի վերոհիշյալ մեկնաբանությունը՝ ամպրոպային առասպելի կապակցությամբ, անշուշտ համոզիչ է. Քաջանց քաղաքի կերպարը կապված է քաջերի մասին ժողովրդական հավատալիքների հետ և գալիս է հնագույն ժամանակներից<sup>39</sup>: Հատկանշական է և այն, որ այս կերպարը երևան է գալիս Լյուսի հենց հնագույն՝ «Մամասար և Քաղաասար» ճյուղում:



Մակայն, այնուամենայնիվ, հարց է ծագում. ինչո՞վ է բացատրվում այս Պղնձե քաղաքի նմանությունը մյուս՝ արաբական ավանդույթից եկող Պղնձե քաղաքին, որը ևս շրջապատված է պղնձե պարսպով, դուռ չունի և նույնպես զեղեցկուհի-բազուխի անի իր ներսում փակված: Արդյո՞ք այդ նմանության պատճառը պետք է փնտրել նրանում, որ արաբական Պղնձե քաղաքի առասպելը ևս իր նախնական փիճակով իրենից ներկայացրել է ամպրոպային առասպելի մի դրսևորում, թե՞, ընդհակառակն, այդ արաբական ավանդույթից եկող Պղնձե քաղաքի նկարագրությունն է, որ նույնացվել է հայկական հին ամպրոպային առասպելի երկինք-պղնձե քաղաքի հետ: Իսկ, միզուցե, այս նմանությունը պատահակա՞ն բնույթ է կրում: Մեր կարծիքով, սուկ պատահական նմանությամբ բացատրել այդքան մեծ նմանությունը, բերես, ճիշտ չէր լինի: Էպոսի զանազան պատասնների քննությունը ցույց է ապիս, որ այն տարբերակներում, ուր Պղնձե քաղաքի փոխարեն կանդես է գալիս Չինմաչինա կամ Արգրոմ քաղաքը, չկա ոչ մի անդուռ պղնձե պարիսպ, որի վրայով ստիպված է ձխով բռնել-անցնել Մանսուրը<sup>10</sup>: Եվ, ընդհակառակն, Էպոսի Պղնձե քաղաքի նկարագիրը նման է արաբական ավանդույթի Պղնձե քաղաքի նկարագրությանը «Մասնա ծոերի» հենց այն պատումում, ուր այդ քաղաքը հասկապես պղնձե է:

Պղնձե քաղաքի հիշատակության կամ նույնիսկ այն տեղայնացնելու փորձեր կարելի է գտնել նաև հայ մատենագրության մեջ, մասնավորապես Վարդան Արևելցու մոտ<sup>11</sup>:

Պղնձե քաղաքը տարբեր առիթներով հիշատակվում է նաև Մայսր-Նովայի (մոտ. 1722-1795) բանաստեղծություններում. այդ վկայում է, որ, ի թիվս նման այլ գրույցների, «Մայսր-Նովան ծանոթ է եղել նաև այս գյուցավային...»<sup>12</sup>:

Այսպիսով, հայկական ավանդույթում (բանավոր կամ գրավոր) Պղնձե քաղաք անվանումը «նկատի չունի պատմաաշխարհագրական կոնկրետ իրողություն», ինչպես իրավամբ նկատում է Հ.Սիմոնյանը<sup>13</sup>: «Աղբսանդրի պատմությունում» այն նույնացվում է մերք Արեգ քաղաքի, մերք Կանդակե քազուհու նստավայրի հետ, Էպոսում՝ Զաչանց քազավորի քաղաքի, մերք էլ՝ Կարագա դաշտում գտնվող ինչ-որ ավերակների հետ և այլն: Ինչպես ցույց կարվի ստորև, արաբական ավանդույթում ևս դիտվում է նույն երևույթը: «Պղնձե քաղաքն» այստեղ ևս առասպելական, մտացածին մի քաղաք է, որը տարբեր աղբյուրներում տարբեր կերպ է տեղայնացվում:

## 2. «Պղնձե քաղաքի պատմության» արաբերեն բնագիրը

Արաբական «Պղնձե քաղաքի հերիաքը» այժմ առավելապես հայանի է որպես «1001 զիշեր» ժողովածուի բաղկացուցիչ տարրերից մեկը: Մակայն, ինչպես ցույց է ապիս արաբերեն բնագրի ուսումնասիրությունը, վերջինս այդ հերիաքաշարի մեջ է ամփոփել միայն XV-XVI դդ., Եգիպտոսում<sup>14</sup>. հերիաքաշարի նախնական խմբագրությունն արասացույող ձևազերբում այն բացակայում է: Դրանց թվին է պատկանում, օրինակ, XIV դ. երկրորդ կեսով քվազրվող այն արաբերեն ձևագիրը, որից իր ֆրանսերեն քաղգմա-նությունն է արկ Ա.Ղալանը<sup>15</sup>: Նախքան «1001 զիշերի» մեջ ընդգրկվելը հերիաքը եղել է ինքնուրույն, առանձին երկ<sup>16</sup>, որը գետերված է եղել կամ առանձին ձևազերբի, կամ խրատա-քարոյախոսական բնույթի ժողովածու-ների մեջ<sup>17</sup>:

Ինչպես հայանի է, «1001 զիշեր» ժողովածուի մեջ ընդգրկված հերիաքները մասամբ արաբական ծագում ունեն, մասամբ էլ փոխ են առնված այլ ժողովուրդներից՝ հնդիկներից, պարսիկներից, երևաններից, հայներից և այլն: «Պղնձե քաղաքի հերիաքը» («حكاية مدينة النحاس») պատկա-նում է արաբական ծագում ունեցող հերիաքների թվին: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, այն ձևավորվել է ստաիճանաբար, մաս առ մաս իր մեջ ներառելով զանազան նոր տարրեր, որոնք ավելացվել կամ միաձուլվել են Պղնձե քաղաքի մասին պատմող արաբական հինավուրց լեզվերին:

Արաբական մատենագրության մեջ պղնձե քաղաքի մասին լեզվերի հնագույն հիշատակությունը պահպանվել է իսլամա-արաբական պատմիչ Արդ ալ-Մալիք իբն Հաբիբի (IX դ. առաջին կես) երկում<sup>18</sup>: Նույն լեզվերի զանազան տարբերակները կարելի է գտնել նաև ադ-Դիճավարիի (մեռ. 895 թ.), Իբն ալ-Ֆակիհի (մեռ. 903 թ. հետո), առ-Տարաբիի (մեռ. 923 թ.), ալ-Մա՛ուդիի (մեռ. 956 թ.), Արո Համիդ ալ-Անդալուսիի (մեռ. 1170 թ.), Յակուաի (մեռ. 1229 թ.), ալ-Նազվիհիի (մեռ. 1283 թ.), ալ-Մուսթաուֆիի (մեռ. 1340 թ.), ալ-Բարսովիի (մեռ. 1403 թ.), Իբն Խադդունի (մեռ. 1406 թ.), ալ-Ուզլեսիի (XVI դ.) և մի շարք այլ հեղինակների աշխատություններում<sup>19</sup>:

Այսպես, հնագույն՝ Իբն Հաբիբի տարբերակում լեզվերն ունի հետևյալ տեսքը. Մուսա իբն Նուսայրի<sup>20</sup> մաղրիբյան արշավանքի ժամանակ նրա զինվորներից մի քանիսը սպանվում են նետածիգի պղնձե արձանի արձակված նետերից: Այնուհետև Մուսան սրաշարում է մի պղնձե սանրոց,



տակայն սրբազան է, որ այն լի է ջիններով, և լճիքը հրաժարվում է այն գրավելու մտքից: Նույն արշավանքի ժամանակ Մուսան գտնում է պղնձե սնդուկներ, որոնցում, ինչպես պարզվում է, Սողոմոն արքան բանտարկել էր շարբերին. սնդուկը բացելիս դրանք դուրս են նետվում և փախչում:

Ըստ ադ-Գինավարիի, Պղնձե քաղաքը կառուցել է Սողոմոն բազավորը, իսկ Մուսա իբն Նուսայրը խալիֆ Աբդ ալ-Մալիք իբն Մարվանին<sup>68</sup> նամակ-հաշվետվություն է գրել իր արշավանքի և Պղնձե քաղաքի մասին<sup>69</sup>: Ի դեպ, նույն՝ Մուսայի նամակ-հաշվետվության տեսքով է շարադրված և ալ-Ուվեյսիի մոտ առկա աարբերակը<sup>70</sup>: Պղնձե քաղաքի մասին Մուսայի նամակի տեսքով և նրա անունից է պատմվում նաև Իբն ալ-Ֆակիհի երկում. ըստ այս աարբերակի Մուսան և նրա ուղեկիցները քաղաքի պարսպի դրսի կողմում հայտնաբերում են մի արարերեն արձանագրություն, ուր ասվում է հետևյալը. Սողոմոն արքայի հրամանով ջինները պղնձից ձուլել են քաղաքի պարիսպը, ուր նա սրահել է աշխարհի բոլոր գանձերը: Սակայն նույնիսկ հզար և խնաստան Սողոմոնն անմահ չի եղել. ամենագոր է միայն Ալլահը: Իսկ քաղաքի մոտ գտնվող լճից Մուսայի հրամանով սուգորդները հանում են մի կոժ, որը բացելիս դուրս է գալիս պղնձե նիզակով մի մարդ (Սողոմոնի բանտարկված ջիններից մեկը) և քույր-հեռանում: Լճի ափին կանգնած մեկ այլ ջինն Մուսային և նրա ուղեկիցներին պատմում է, որ ալ-Խիդր մարգարեն լճի ափին մշտապես բարձրածայն աղոթում է սաաժման: Սակայն Իբն ալ-Ֆակիհի միաժամանակ գրում է նաև, որ Մադրիբում *բախթ* կոչվող առասպելական քարից քաղաք է կառուցել Ալեքսանդր Մակեդոնացին, փաստորեն նույնացնելով այդ քաղաքը Պղնձե քաղաքի հետ<sup>71</sup>:

Վկայակոչելով Իբն ալ-Ֆակիհին, Յակուար և ալ-Կազվինին ևս քաղաքի կառուցումը վերագրում են Ալեքսանդրին, որն, իբր, այդտեղ է պահել իր գանձերը և «իր գիտության պտուղները», սակայն, միաժամանակ, մեջ են բերում և Սողոմոնի մասին պատմող արձանագրությունը, ինչպես և լճի մասին դրվագը<sup>72</sup>:

Ըստ ալ-Բարուվիի, ասում են, քե Պղնձե քաղաքը կառուցել է Ալեքսանդրը, սակայն իրականում կառուցողը եղել է Սողոմոն արքան<sup>73</sup>: Ալ-Անդալուսին կրկնում է նույնը, ինչ և ալ-Բարուվին<sup>74</sup>:

Ալ-Մաաուդին, չափազանց հակիրճ, գրում է, որ Աբդ ալ-Մալիք իբն Մարվան խալիֆի օրոք Մուսա իբն Նուսայրը գնացել և տեսել է Պղնձե քաղաքի բոլոր հրաշայիքները, որոնք նա նկարագրել է «բոլորին հայանի գրքում»<sup>75</sup>: Ուշագրավ է աս-Տարսիի մոտ առկա աարբերակը. այստեղ ևս Պղնձե

քաղաքի կառուցող է համարվում Սողոմոնը, ընդ որում բացատրվում է, որ Աստված նրան է տվել եկողի պղնձի արդյուր և իշխանություն ջինների վրա, որոնց արքան ստիպել է իր համար կառուցել այդ քաղաքը, որպեսզի այնտեղ պահի իր գանձերն ու գրքերը: Տարսիին մեջ է բերում նաև Սողոմոնի արդեն հիշատակված արձանագրությունը, որն այստեղ գրված է նրա անունից, ինչպես նաև կրկնում է Մուսա իբն Նուսայրի և նրա գորքի՝ Պղնձե քաղաք մտնելու անհաջող փորձի մասին հիշված պատմությունը<sup>76</sup>:

Ըստ «Պղնձե քաղաքի հեքիասի» մեկ այլ՝ հրեաստաբարբերեն աարբերակի<sup>77</sup>, Պղնձե քաղաքն «այն է, որը նվաճեց Ալեքսանդրը» (وهي الذي استفتحها الاسكندر)<sup>78</sup>:

Այսպիսով, ի՞նչ եզրակացության կարելի է հանգել վերոհիշյալ աարբերակները բաղդատելիս: Այնպես է, որ վերոհիշյալ բոլոր պատմությունների հիմքում ընկած են Պղնձե քաղաքի մասին լեգենդի 3 էփեմական աարբերակ, այն է՝ 1. Պղնձե քաղաքը կառուցել է Սողոմոն արքան, որին աստված շնորհել է գերբնական հատկություններ՝ ջիններին իրեն ծառայեցնելու և նրանց պատժելու հատկություն, ինչպես նաև եկողի պղնձի արդյուր<sup>79</sup>, Սողոմոնի հրամանով ջինները նրա համար կառուցել են Պղնձե քաղաքը, որպեսզի նա այնտեղ պահի իր գանձերն ու գորքերը: Պղնձե քաղաք մտնելն անհնար է, քանի որ այն լի է պահապան ջիններով, ինչպես նաև կախարդված է քալիմանների ուժով: 2. Պղնձե քաղաքը կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացին<sup>80</sup> նույն նպատակով, ինչ և Սողոմոնը, ընդ որում բախթ կոչվող արաստվոր քարից, որը մարդկանց մագնիսի նման ձգում է դեպի իրեն և այլևս բաց չի բողոմ. բացի այդ, այդ քարին նայող մարդիկ սկսում են անգուսպ քրքշալ: Ըստ որոշ սուրբագրությունների, Ալեքսանդրի կառուցած քաղաքը հենց այդպես էլ կոչվում է՝ ալ-Բախթ, մյուսներում ալ-Բախթը նույնացվում է Պղնձե քաղաքի հետ: 3. Ալեքսանդրը ոչ քե կառուցել, այլ միայն նվաճել է Պղնձե քաղաքը<sup>81</sup>:

Ինչպես կարելի է նկատել վերոհիշյալ աղբյուրների քննությունից, մեզ հետաքրքրող հեքիասում շարունակ կրկնվում է պղնձի ստիվը (պղնձե քաղաք, պղնձե կժեր կամ սնդուկներ, պղնձե հեծյալի, նետաձիգի արձաններ և այլն): Ինչն էլ բացատրվում այդ: Ուսումնասիրողներից ամանք փորձել են պտուռախանել այս հարցին: Այսպես, Ա.Ջ.Վենսինկը գտնում է, որ դա բացատրվում է հրեաների և արաբների հնագույն հավատալիքներին քնորոշ մի աիեղբրագրական առանձնահատկությամբ, այն է՝ օվկիանոսի մասին նրանց ունեցած պատկերացումներով: Նա վկայակոչում է «ավանդու-



քյունների այն շարքը, որ պատմվում է ինչ-որ սեղ հեռու արևմուտքում կամ հեռու արևելքում գտնվող քանդակի, աշտարակի, դղյակի կամ լեռան մասին»<sup>62</sup>: Հիշեցնելով Հերկուլեսյան սյունների, ինչպես նաև պղնձե արձանների ու քաղաքների վերաբերյալ քաղմաթիվ նկարագրությունների մասին, Վենսինը գրում է. «Այս ավանդություններում, որոնք կապված են Ալեքսանդրի մասին լեգենդների հետ, պղնձե արձանի և պղնձե քաղաքի մասին խոսվում է որպես արևմտքի սահմանների նշանների: Գմբեթներով և փայտատակաղ աշտարակներով քաղաքը մի վայր է, որը լի է ամեն տեսակ գանձերով, սակայն այդտեղ մտնելն անհնար է: Տվյալ դեպքում մենք գործ ունենք առասպելական մի քաղաքի հետ, որը խորհրդանշում է ցամաքի վերջը և օվկանոսի սկիզբը»<sup>63</sup>: Ա.Վենսինը նշված հավատալիքների արտահայտություններից մեկն է համարում, մասնավորապես, արարական փիլիսոփայությունում առկա այն ուղղությունը, որն օվկանոսը պատկերում է որպես մահաբեր ու չար: Այն կարող է սպանել, նրանից նեխահոտ է վշում, այն նշանակում է ցամաքի վերջը և խավարի ու տանգրամեաի սկիզբը<sup>64</sup>: Այդպիսով, «ծայր արևմուտքում գտնվող քաղաքը, որը հանդիսանում է Օվկիանոսի սահմանը, մտնելն անհնար է՝ նրան բնորոշ են նույն այն գծերը, ինչ և օվկանոսին: Եվ ինչպես և սանդաղամեղք, այն ևս լի է գանձերով»<sup>65</sup>: Ռ.Հեննիցը հաստատում է Ա.Վենսինի այս վարկածը մի շարք վաստեղով և համանման օրինակներով<sup>66</sup>: Այսպիսով, «...Պղնձե քաղաքի մասին պատմությունը, ըստ էության, իրենից ներկայացնում է առասպել օվկանոսի մասին... Մակայն հեթաբքը այժմ ունեցած իր տեսքով, իհարկե, չի կարելի նույնացնել առասպելի հետ, որից այն արդեն շատ է հեռացել», - եզրակացնում է Մ.Գերհարդը<sup>67</sup>:

Պղնձի մտախփից բացի, «Պղնձե քաղաքի հեթաբքում» շարունակ կրկնվում է ևս մի մտախփ, այն է՝ այն քաղմաթիվ տապանագրերն ու արձանագրությունները, որոնցում պատմվում է կրեթմնի գոյություն ունեցած հզոր քաղաքների ու քաղաքությունների, նրանց ունեցած անթիվ գանձերի ու գործերի, կառուցած բերդերի ու քաղաքների մասին և որոնք, որպես կանոն, եզրափակվում են միևնույն խորհրդածությամբ. «Իր է այժմ այդ բոլորը»<sup>68</sup> այս աշխարհում ամեն ինչ անցողիկ է և սին, ոչ ոք և ոչինչ հավերժական չէ, հետևաբար մահկանացուն պետք է միշտ հիշի այդ մասին և մտածի նաև մյուս՝ անդրշիրիմյան կյանքի մասին: Հարկ է նշել, որ այս մտախփը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, տարածված է եղել դեռևս արարական միջնադարյան պոեզիայում, իսկ ավելի ուշ, VIII-IX դդ., կազմավորվել է

որպես ինքնուրույն ժանր, որը ստացել է «գուիդիյաք» անվանումը<sup>69</sup>: Արարների մոտ տարածում էր գտել նաև մի ավանդույթ, որի համաձայն ճարտարապետական կառույցների վրա արվում էին արձանագրություններ՝ Դուրանից կամ նշված ժանրի բանաստեղծություններից արված մեջբերումներով<sup>70</sup>: Ուսումնասիրողներից Մ.Բ.Պիտարովսկին, մասնավորապես, անդրադառնալով Դուրանում հիշյալ մտախփի մի շարք դրսևորումներին (որ խոսվում է անցյալում գոյություն ունեցած և կործանված մի շարք ժողովուրդների ու քաղաքների մասին, որոնք այստեղ ներկայացվում են որպես ամենագոր Ալլահի ողորկած պատժի օրինակներ<sup>71</sup>), գրում է, որ նման ավանդությունները դեռևս մինչիսլամական Արաբիայում ստացել էին որոշակի պատմա-փիլիսոփայական իմաստավորում և վկայակոչվում էին որպես ակնառու ապացույցներ այն բանի, թե ճակատագիրն ամենագոր է, իսկ երկրային բարօրությունը՝ անցավոր: Դրանով է նա բացատրում նման ավանդություններում գերիշխող «հոռետեսական ֆատալիզմի» ոգին, նշելով նաև, որ նորաստեղծ իսլամը այնուհետև ամենագոր «ֆատում-ճակատագիրը» փոխարինել է ամենագոր Ալլահով<sup>72</sup>: Վ.Վ.Լեբեդևի կարծիքով ևս, երկրային կյանքի անցավորության մասին հիշեցնող արձանագրությունների հաճախակի հիշատակումը բնորոշ է հարավ-արաբական ավանդույթին<sup>73</sup>:

Նույն հարավ-արաբական ավանդույթի ազդեցության արտահայտություններից է նաև վերոհիշյալ արձանագրություններում այլևայլ քաղաքների կողքին Շադդադ իրն՝ Աղ կամ Քուշ իրն՝ Քանան իրն՝ Շադդադ իրն՝ Աղ քաղաքների անվան հիշատակումը, բանի որ վերջինս «եմենյան բանահյուսության մեծ ժողովրդականություն վայելող հերոս է»<sup>74</sup>. Նրա անվան հետ է կապված, մասնավորապես, արաբական բանահյուսությունում և գրականությունում լայն տարածում ունեցող լեգենդը այդ քաղաքների պալատի մասին<sup>75</sup>, որը նույնպես ընդգրկվել է «Պղնձե քաղաքի հեթաբքի» մեջ՝ որպես դրա բաղկացուցիչ մասերից մեկը:

Քննելով «Պղնձե քաղաքի հեթաբքը», Վ.Վ.Լեբեդևը գալիս է այն եզրակացության, որ այդտեղ «միահյուսվել են մի քանի սյուժեներ՝ Սողոմոն քաղաքների (Մուլեյման իրն՝ Դա'ուդի) կողմից պղնձե կժերի մեջ բանաված ջինների մասին պատմությունը, այդ կժերը ձեռք բերելու նպատակով խալիֆ Արդ ալ-Մալիք իրն՝ Մարվանի հրամանով կազմակերպված արշավի մասին պատմությունը, պալատի նկարագրությունը, որն ինչ-որ ժամանակ պատկանել է մի հզոր քաղաքի. Մուլեյման իրն՝ Դա'ուդի՝ ջինների դեմ մղած



պատերազմի պատմությունը և, վերջապես, բուն լեզենդը պղծն քաղաքի մասին»<sup>66</sup>։ Այս սյուժեներից երեքը (լեզենդները պղծն քաղաքի, Շաղղաղ իրն Արի պարսպի և Սողոմոն արքայի հաշվեհարդարի մասին անհնազանդ ջինների հետ), ինչպես ցույց է տալիս ուսումնասիրողը, սերտորեն կապված են հարավ-արարական բանահյուսական ավանդույթի հետ։ Մասնավորապես, Սողոմոն արքայի կողմից պատժված ջինների մասին լեզենդը, Վ.Վ.Լ.Երեղևի ենթադրությամբ, «ծագել է Հարավային Արաբիայում Սողոմոն քաղաքի մասին երեական լեզենդների հիման վրա», քանի որ «ոչ երեական, ոչ հյուսիս-արարական աղբյուրներում... վկայված չէ», և արարական գրականություն է փոխադրվել եմենյան ավանդույթներ Բաբ ալ-Ալբարի (մեռ. 34/654թ.) և Վահբ իբն Մունաբրիի (մեռ. 114/732թ.) միջոցով, որոնք կապված էին, միաժամանակ, և՛ երեական, և՛ հարավ-արարական ավանդույթների հետ<sup>67</sup>։ Հարավ-արարական ազդեցության այլ դրսևորումներից են «գաղափարական, կառուցվածքային և ոճական» առանձնահատկությունները՝ հեքիաթի տեսքով մեծ մեծ թվով արձանագրությունների ներմուծումը, պղծն հեծյալների արձանների առկայությունը և այլն<sup>68</sup>։

Այսպիսով, Վ.Վ.Լ.Երեղևի եզրակացնում է, որ «Պղծն քաղաքի հեքիաթը» կազմավորվել է հարավ-արարական հնագույն քաղաքակրթությունների արձագանքը հանդիսացող լեզենդների հիման վրա<sup>69</sup>, որոնք յուրօրինակ մի հուշ են Եմենի, Օմանի, Հադրասմաթի հիմնավոր, Երբեմնի ժողովուրդ քաղաքների կործանման մասին։ Այդ է պատճառը, որ «Պղծն քաղաքի հեքիաթը», ինչպես և մյուս նման հեքիաթները, առգործված են հոռետեսական արամադրությամբ, աշխարհի ու մարդկային կյանքի ունայնության գաղափարով, բարոյախոսական-խրատական ոգով<sup>70</sup>։

Համանման կարծիք են արտահայտել և մի շարք այլ հետազոտողներ։ Այսպես, Մ.Գոդֆրուա-Դըմոսիինը «Պղծն քաղաքը» բնութաշում է որպես «մի իսկական սեմական պատմություն՝ կապված սողոմոնյան շարքի հետ», որը պիտի որ մեծ հնություն ունենա<sup>71</sup>։ Կ.Ա.Բոյկովն ընդգծում է այն վաստը, որ մուսուլմանական Իսլամիայի վաղ շրջանի պատմությունն արտացոլող աղբյուրներում մեծ տեղ են գրավում զանազան ֆանտաստիկ պատմություններ, «որոնցում ուժեղ են Հարավային Արաբիայի Լաիլական ավանդույթների արձագանքները, լայնորեն օգտագործված են հարավ-արարական մեծ ժողովրդակրթություն վայելող սյուժեներ, այդ թվում և լեզենդները Սողոմոն քաղաքի մասին...», ինչպես նաև Պղծն քաղաքի լեզենդը և այլն<sup>72</sup>։ Նշված մտախմբերը միահյուսվել են Տարիկ իբն Ձիյադի և Մուսա իբն Նուսայրի

ջոկատների կողմից Իսլամիայի նվաճման մասին այն «կիսալեզենդար սյուժեներին», որոնք տարածված էին, VIII դ. առաջին կեսում, արարականության միջավայրում։ Այս պատմությունների տիպարանական կապը Հարավային Արաբիայի հիմնավոր ավանդույթների հետ ուսումնասիրողը բացատրում է այն հանգամանքով, որ հիշյալ նվաճողները պատկանում էին հարավ-արարական կառույցի ցեղախմբին<sup>73</sup>։

Հարկ է նշել, որ Պղծն քաղաքը հանդես է գալիս նաև արարական միջնադարյան գեղարվեստական գրականության զանազան հուշարձաններում։ Դրանց թվին են պատկանում, օրինակ, ժողովրդական վեպերը, որոնց ամենատեսքով կապը արարական հնագույն առասպելների և ընդհանրապես բանահյուսության հետ իրավացիորեն ընդգծել են մի շարք հետազոտողներ<sup>74</sup>։ Այսպես, օրինակ, Պղծն քաղաքին հանդիպում ենք «Միրաբ Ալի ազ-Չիբակ» ժողովրդական վեպում, որի գլխավոր հերոսը սպանում է այդ քաղաքում ահ ու սարսափ տարածող առյուծի տեսքով շար ոգուն<sup>75</sup>։ Պղծն քաղաքի նկարագրություններին կարելի է հանդիպել նաև «1001 գիշերի» մի շարք հեքիաթներում («Պղծն քաղաքի» բուն հեքիաթից բացի), որտեղ դրանք կրում են Լաիլադիկ բնույթ<sup>76</sup> և այլն։ Իգուր չլ, որ հետազոտողներից մեկը Պղծն քաղաքն անվանում է «հեքիաթային քաղաք, ուր, արարական բանահյուսության համաձայն, տեղի են ունենում ամենաֆանտաստիկ իրադարձությունները»<sup>77</sup>։

«Պղծն քաղաքի հեքիաթը», ինչպես և արարական բանահյուսության և «ժողովրդական» գրականության նման շատ այլ նմուշներ, արարական միջավայրից քափանցել է նաև երեական (ինչպես և կարաիմների ու սամարացիների) միջավայր<sup>78</sup>։ Վերևում արդեն հիշատակվեց «Պղծն քաղաքի հեքիաթի» կրթայտատ արարելուն մի ձեռագրի մասին<sup>79</sup>։ Եթե այդ դեպքում խոսքը վերաբերում էր արարելուն տեսքով պարզապես երբայական առաջարկությանը, ապա հայտնի են դեպքեր, երբ նշված հեքիաթը մերձավորարևելյան երեանների միջավայրում ենթարկվել է վերամշակման։ Այսպես, օրինակ, երեական մի տարբերակում<sup>80</sup> հեքիաթի գլխավոր հերոսներից մեկի՝ Էմիր Մուսա իբն Նուսայրի փոխարեն հանդես է գալիս երեական նշանավոր փիլիսոփա, բժիշկ և հասարակական գործիչ Մուսա իբն Մայմունը (Մովսես Մայմունիդը, 1135-1204 թթ.)<sup>81</sup>։

Պղծն քաղաքի հեքիաթը, ինչպես և արարական բանահյուսության և «ժողովրդական» գրականության նման շատ այլ նմուշներ, արարական միջավայրից քափանցել է նաև երեական (ինչպես և կարաիմների ու սամարացիների) միջավայր<sup>82</sup>։ Վերևում արդեն հիշատակվեց «Պղծն քաղաքի հեքիաթի» կրթայտատ արարելուն մի ձեռագրի մասին<sup>83</sup>։ Եթե այդ դեպքում խոսքը վերաբերում էր արարելուն տեսքով պարզապես երբայական առաջարկությանը, ապա հայտնի են դեպքեր, երբ նշված հեքիաթը մերձավորարևելյան երեանների միջավայրում ենթարկվել է վերամշակման։ Այսպես, օրինակ, երեական մի տարբերակում<sup>84</sup> հեքիաթի գլխավոր հերոսներից մեկի՝ Էմիր Մուսա իբն Նուսայրի փոխարեն հանդես է գալիս երեական նշանավոր փիլիսոփա, բժիշկ և հասարակական գործիչ Մուսա իբն Մայմունը (Մովսես Մայմունիդը, 1135-1204 թթ.)<sup>85</sup>։



### 3. Հայկական և արարական պատումների համեմատության արդյունքները

«Պղնձե քաղաքի պատմության» արարական և հայկական պատումների համեմատությունը բավական մեծ դժվարությունների հետ է կապված, քանի որ ինչպես առաջինի, այնպես էլ երկրորդի բնական բնագրերն առ այսօր հրատարակված չեն:

Պատումների համեմատության առաջին փորձն արել է Ա.Լորանսին, 1921թ.<sup>22</sup>: Նա համառոտ կերպով, ընդհանուր գծերով ներկայացրել է այն արդյունքները, որ սաացել է Փարիզի Ազգային գրադարանի հինգ հայերեն ձեռագրերի<sup>23</sup> և արարերն բնագրի համեմատությունից<sup>24</sup>: Ըստ Ա.Լորանսիի, համեմատության արդյունքները հաստատում են հայկական պատումի՝ արարերնից թարգմանված լինելու փաստը, քանի որ հայկական և արարական պատումների նույնությունն ակնհայտ է. ինչպես դավազները, այնպես էլ դրանց հերքականությունը երկու դեպքում էլ նույնն են: Նրա կարծիքով, այդ են վկայում նաև մի շարք այլ նմանություններ՝ որոշ համընկնող արտահայտություններ, որոնք կարելի է գտնել երկու պատումների միևնույն հատվածներում<sup>25</sup>, գործող անձանց անունների տառադարձությունը, ինչպես նաև այն փաստը, որ բոլոր ձեռագրերն էլ որպես թարգմանիչ անվանում են **Յավհաննես Առաքել Շիրակավանցուն**:

Ա.Լորանսին մատնանշում է նաև մի շարք տարբերություններ, ինչպիսիք են, օրինակ, իսլամական բանաձևերի և Ալլահին բնորոշող մակդիրների բացակայությունը հայերական տարբերակում, ծովային ազդիկների մասին գրված բացակայությունը և, ընդհակառակն, Ալանացվոց երկրի մասին դրված առկայությունը, նկարագրությունների չորությունը՝ ի տարբերություն արարական տարբերակի: Անդրադառնալով հայկական տարբերակի ողբերին (կաֆաներին), նա ընդգծում է դրանց՝ ազատ կերպով թարգմանված լինելը: Նշելով, որ հայերեն ձեռագրերի թվում կան և՛ «գալատարարառով», և՛ գրաբարով գրված տարբերակներ, նա կանգ է առնում հատկապես դրանցից մեկի՝ № 309 ձեռագրի վրա, որը, նրա վկայությամբ, ամենից ավելի է մոտենում արարերն բնագրին և շարադրված է գրաբարով: Նա գրում է, որ միայն այս ձեռագրում է, որ հիշվում են արարերն բնագրում անվա **Քուշ իրն Քանաանի** և **Արդեսամեղի** անունները, պահպանվել են իսլամական բանաձևերի մնացորդներ, բացի այդ, առկա են մի քանի դրվագներ, որոնք բացակայում են մյուս հայերեն ձեռագրերում՝ Եգիպտոսի թագավորի

միջամտության և Պղնձե քաղաք մեկնողների՝ Եգիպտոսում պարենավորվելու մասին, ինչպես և Տալիբի թաղման մասին<sup>26</sup>:

Ա.Լորանսիի հաղորդած տեղեկություններն այս ձևազարդի մասին, անկասկած, չափազանց հետաքրքրական են. պետք է ենթադրել, որ այն ընդօրինակված է մի այնպիսի նախատիպից, որը դեռ չի հասցրել փոփոխությունների ու վերամշակումների ենթարկվել հայկական միջավայրում, հետևաբար ժամանակով մոտ է եղել Առաքել Անեցու թարգմանությանը<sup>27</sup>: Ցավոք սրտի, նշված ձեռագրի անմատչելիությունը թույլ չի տալիս անմիջականորեն ծանոթանալ նրա հետ և ավելի կոնկրետ եզրակացություններ անել այդ մասին:

Լորանսին նաև առաջ է քաշում մի վարկած, ըստ որի Առաքելը կարող էր թարգմանած լինել որևէ շրջիկ եփեսոսացի մոտ եղած արարերն տեքստը, «որոնք, հրաշալի պատմություններ պատմելով, շրջում էին Արևելքի բոլոր իշխանատներով»<sup>28</sup>:

Այժմ ավելի հանգամանորեն կանգ առնենք այն մի շարք կարևոր դիտողությունների վրա, որ Լորանսին անում է արարական բնագրի հասուկ անունների վերարտադրության կապակցությամբ՝ հայերեն թարգմանություններում: Այսպես, նա իրավամբ նկատում է, որ հայերենում արարական անունները կրճատված են: Ավելորդ չենք համարում մեջբերել նրա նշած համապատասխանությունների ցուցակը (տառադարձությունը բողոմ ներ այնպես, ինչպես նրա մոտ է).

#### Հայկական տարբերակ

#### Արարական տարբերակ

*Արդու-մկիբ*

*Արդ Էլ-Մալեք բեն Մերվան*

*Տալիս<sup>29</sup>*

*Տալեք բեն Սաեկ*

*Մոսե*

*Մոսա բեն Նոսայր*

*Ալազ*

*Էլ-Ազիզ բեն Մարրա*

*Արդեսմեղ*

*Արդ էսամեղ էլ Մոսամոցի*

*Քուշ որդի Գաղատա թագավորի,*

*Քուշ Ա՛նաշ*

*որդի Շաաատ թագավորի*

*Գամրիլատ*

*Ամիրաբ<sup>30</sup>*

*Թաղմոր դուստր Քուշի, դուստր*

*Չմրոխտ կամ Չմրոք*

*Քանաանի*

*Կատկուտ ծով*

*Կերկեր*



Հարկ է նշել, որ Ա.Լորանսիի վերոհիշյալ դիտողությունները հիմնականում ճիշտ են արտացոլում երկու պատումների համեմատության արդյունքների ընդհանուր պատկերը: Սեզ մնում է դրանց թվին ավելացնել մեր սեփական պրպտումների արդյունքները, որոնք, սակայն, նույնպես հավանություն չունեն սպասել կամ համապարփակ բնույթ կրելու: վերջնական և ճշգրիտ եզրահանգումներ անել ուսումնասիրությունների ներկա փուլում առայժմ հնարավոր չէ, բանի որ, ինչպես արդեն ասվել է, դրան խանգարում է երկու պատումների բնական բնագրերի բացակայությունը:

Երկու պատումները բաղրատելիս օգտագործել ենք հետևյալ արարերն բնագրերը՝ Մ.Հարիլիսի հրատարակությունը<sup>102</sup>, «1001 գիշեր» Մանկո-Պեանբերդյան ձեռագիրը<sup>103</sup>, «1001 գիշերի» եգիպտական հրատարակությունը<sup>104</sup>: Հայկական պատումի մասին հնարավորին չափ ամբողջական պատկերացում կազմելու համար օգտագործել ենք Ն.Ալիյանի հրատարակած ձեռագրի տեքստը<sup>105</sup> (նախնական խմբագրություն), Տիֆլիսում լույս տեսած 1908 թ. հրատարակությունը<sup>106</sup> (նախագրիգորիսյան խմբագրություն) և Հ.Քյուրտյանի հրատարակած ձեռագիրը<sup>107</sup> (գրիգորիսյան խմբագրություն):

Ինչպես ցույց է տալիս երկու պատումների համեմատությունը, հայկական միջավայրում, արարերենից թարգմանվելուց հետո, գրույցի տեքստը կրել է որոշ փոփոխություններ: Այսպես, գրույցի հայերեն բոլոր խմբագրություններն սկսվում են հետևյալ նախադասությամբ. «Կայր խալիֆա մի ի Պաղատո քաղաք...»<sup>108</sup>: Մինչդեռ արարերեն բնագրում որպես խալիֆի նստավայր հիշատակվում է Կամասկոսը (الشام، دمشق الشام)<sup>109</sup>, քանի որ խալիֆի դերում հանդես է գալիս Աբդ ալ-Մալիկ իբն Մարվանը՝ Օմայանների դինաստիայից (685-705), որանց օրոք Բաղդադը ոչ միայն դեռևս չէր դարձել խալիֆի նստավայրը, այլև դեռ չէր էլ հիմնվել<sup>110</sup>: Հետևաբար, նման ժամանակավրեպ հիշատակությունը արարերեն բնագրից չէր կարող գալ. այն ավելացվել է հայկական միջավայրում, հավանաբար այն պատճառով, որ այն շրջանում, երբ կատարվել է հայերեն թարգմանությունը, խալիֆի նստավայրն արդեն տեղափոխվել էր Բաղդադ: Եթե հայկական միջավայրում կատարված՝ նշված փոփոխությունն արտացոլվել է հայկական բոլոր խմբագրություններում, ապա կան և այնպիսի օրինակներ, կոր նման անհամապատասխանությունները տեղ են գտել միայն հայկական խմբագրություններից որևէ մեկում: Նման օրինակներից է խալիֆի անվան

Արդումլիք (Արդումլիք) ձևը նախագրիգորիսյան և գրիգորիսյան խմբագրություններում, որը միանգամայն համապատասխանում է արարերեն բնագրում ասկա عبد الملك بن مروان ձևին, և, ընդհակառակը, Աստու Ազիզ տարրերակի առկայությունը նախնական խմբագրությունում<sup>111</sup>: Արարական անխտիր բոլոր խմբագրություններում խալիֆի անունն է Աբդ ալ-Մալիք իբն Մարվան, իսկ Աբդ ալ-Ազիզ իբն Մարվան անունով հանդես է գալիս մի բոլորովին այլ գործող անձ՝ Եգիպտոսի կառավարիչը, որը Աբդ ալ-Մալիքի եղբայրն է<sup>112</sup>: Ալեհայտ է, որ այս դեպքում ևս նման շփոթությունը տեղի է ունեցել միայն հայկական միջավայրում՝ արտացոլվելով լոկ խմբագրություններից մեկում:

Նման օրինակներից է նաև Ալանուցոց (Ալանուցիոց) քաղաքի<sup>113</sup> երկիրն այցելելու մասին դրվագը. նախնական և նախագրիգորիսյան խմբագրություններում ասկա այս անվանումը գրիգորիսյան խմբագրությունում, աղավաղվելով, վերածվել է երկիր կանաց և նույնիսկ աշխարհն Ամազոնաց ձևի, որից հետո ավելացվել է և հետևյալ բացատրությունը՝ «և կին էր քաղաքը նոցա»<sup>114</sup>: Իսկ քանի որ արարերեն բնագրում այս դրվագն ընդհանրապես բացակայում է, ապա հարց է ծագում, արդյո՞ք այն գույություն է ունեցել արարական որևէ նախնական խմբագրությունում, թե՞ այդ հավելումը կատարվել է հայկական միջավայրում:

Ինչ վերաբերում է ծովի դուստրերի կամ մարդակերպ ձկների մասին դրվագին, ապա այդտեղ հարկ է ճշգրտում մտցնել. ըստ Լորանսիի, այս դրվագը հայկական տարրերակում ընդհանրապես բացակայում է, սակայն դա ճիշտ է միայն նախնական խմբագրության վերաբերմամբ, մինչդեռ, նախագրիգորիսյան և գրիգորիսյան խմբագրություններում այն առկա է, թեև շատ հակիրճ ձևով: Համոզվելու համար մեջ բերենք համապատասխան հատվածը. «Որսացին քաղամ ձկունք և դիզան դրին և այլ քաղունք կենդանիք ի ծովէն մարդայգէն գազանք և անասունք որ ոչ լինի այլ երկիր...»<sup>115</sup>: (Հմնտ. արարերեն բնագիրը. (وملك السودان اهدى للامير موسى حنينة من عجائب البحر صفة الحميين)<sup>116</sup>): Քանի որ արարերեն բնագրի որոշ տարրերակներում նույնպես այս դրվագը բացակայում է<sup>117</sup>, ապա կարելի է ենթադրել, որ հայերեն նախնական խմբագրությունը թարգմանվել է հենց այդպիսի մի խմբագրությունից: Այդ դեպքում մնում է ընդունել, որ իրոք նախագրիգորիսյան և գրիգորիսյան խմբագրությունների համար որպես բնագիր է ծառայել մեկ այլ արարերեն տարրերակ, այլ կերպ ասած, «Պղնձե քաղաքի պատմությունն» իրոք պետք է որ կրկնակի անգամ թարգմանված լինի արարերենից, տարբեր բնագրերից:



Ուշագրավ է մեկ այլ՝ մահմեդական տարբ ալ-Խիդր մարգարեի մասին դրվագի առկայությունը հայերեն քարգմանությունում: Արարական տարրերակում ալ-Խիդրը հանդես է գալիս որպես ալ-Քարթար ծովի ափին բնակվող սևամորթների մեջ իսլամ տարածող, նա ամեն ուրբաք զիշեր լուսեղեն սյան տեսքով հայտնվում է ծովի մակերևութին, քայլում ջրի երեսին և կոչ է անում սևամորթներին հավատալ Ալլահին ու Մուհամմադի մարգարեությանը<sup>118</sup>: Հայկական տարրերակում ալ-Խիդրի անունը հանված է, բայց մնացածը բողմված է նույնը, պարզապես Ալլահի փոխարեն լուսեղեն մարդը կոչ է անում հավատալ միակ Աստծուն<sup>119</sup>: Հետաքրքիր է, որ այս դրվագը ևս տարբերակումներ է հանդես բերում հայերեն նախամական և մյուս խմբագրություններում: այսպես, նախնականում ուրբաք օրվա մասին հիշատակությունը հանված է, իսկ լուսեղեն մարդու քարոզը քաղկացած է ընդամենը մի քանի առդից, մինչդեռ մյուս երկու խմբագրություններում ուրբաք օրը հիշատակվում է, իսկ քարոզը բավական երկարաշունչ է<sup>120</sup>: Ինչպես հայտնի է, ուրբաքօրյա աղոթքը<sup>121</sup> մահմեդականների համար ունի նույն նշանակությունը, ինչ կիրակնօրյա պատարագը քրիստոնյաների համար, այդ պատճառով զարմանալի է, որ հայերեն տեքստում այնուամենայնիվ պահպանվել է ակնհայտորեն իսլամական այս հիշատակությունը:

Պետք է նշել, որ տարակուսանքի առիթ է ամսյա Մողոմնի երկու վեզիրների Դեմեալոսի և Քարիմատինի անունների առկայությունը հայերեն նախնական խմբագրությունում և միայն մի վեզիրի՝ Ամիրասի անվան հիշատակությունը մյուս երկու խմբագրություններում: Արաբերեն բնագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր տարրերակներում այստեղ հանդես են գալիս երկու վեզիրներ՝ ադ-Դամրիյասա և Ասաֆ իրն Քարալիսա անուններով<sup>122</sup>, մինչդեռ Քարիմատին կամ Ամիրաս անուններով վեզիրներ ընդհանրապես չկան: Եթե հայկական Ամիրաս ձևը կարելի է բացատրել Դամրիյասի աղավաղումով, ինչպես այդ առաջարկում է Ադրամսին, քանի որ այդ երկու կերպարները միանգամայն նույնական են քն հայկական, քն արարական պատմներում, ապա նույնը չի կարելի ասել Քարիմատին-Ասաֆ իրն Քարալիսա անհամապատասխանության մասին: Մնում է հոստայ, որ այստեղ, վերջապես, կարող է սբարգություն մտցնել արաբերեն տեքստի բնական բնագիրը, որը, ցավոք, դեռ հրատարակի վրա չկա:

Ուշագրավ է նաև հայերեն նախնական խմբագրության ավարտը: այստեղ նկարագրվում է, քն ինչպես խալիֆը, տարված աշխարհորացության

գաղափարով, իր գանձերը բաժանում է աղքատներին, զերիններին և բանտարկյալներին ազատություն շնորհում, իր վախարեն «այ խալիֆայ» դնում, յոթ տարի անցկացնում աղոթելով և ապա մեռնում<sup>123</sup>: Նախագրի-գործիչյան և գրիգորիչյան խմբագրություններում խալիֆի օրինակին է հետևում նաև Ամիր Մուսեմ<sup>124</sup>: Արաբերեն բնագրում այս դրվագը առավել ուշագրավ է, քանի որ այստեղ խալիֆը միայն բաժանում է ունեցվածքը, մինչդեռ Ամիր Մուսան ապաշխարում է, իր իշխանությունը հանձնում որդուն, իսկ ինքը մեկնում Երուսաղեմ, ուր և վախճանվում է<sup>125</sup>: Այնհայտ է, որ Երուսաղեմի մասին հիշատակությունը արաբերեն տեքստի մեջ է մտցվել XIII դարից հետո միայն, այսինքն՝ այն ժամանակվանից հետո, երբ գրույցը քարգմանվել է հայերեն, քանի որ հայկական խմբագրություններից և ոչ մեկում Երուսաղեմի մասին չի խոսվում: Եթե հայերեն քարգմանության բնագրում Երուսաղեմը լինեք, ապա ոչ միայն չէր հսկվի տեքստից, այլև ավելի ևս կշեշտվեք՝ ցույց տալու համար, քն ինչպես մահմեդական խալիֆը կամ էմիրը հավատալիս են լինում, ընդունելով քրիստոնեության առավելությունը: Իսկ ինչո՞վ կարելի է բացատրել Երուսաղեմի հիշատակությունը մահմեդական-արարական տեքստում: Դժա պատճառն այն է, որ մահմեդական սալանդություն ևս Երուսաղեմը համարվում է տարբ քաղաք՝ որպես հին մարգարեների և սրբերի քաղաք, ինչպես նաև Մուհամմադի միջնադի տեղի ունենալու վայր (բոտ Գուրանի), բացի այդ, մահմեդականները հավատում են, որ Երուսաղեմն է լինելու Ահեդ Դատաստանի «քաղերարներ»<sup>126</sup>:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Պղնձե քաղաքի պատմությունը» հայկական միջավայր է մուտք գործել, ամենայն հավանականությամբ, մահմեդական-արարականից, ընդ որում սուանց Լական փոփոխությունների ենթարկվելու, նույնիսկ պահպանելով որոշ իսլամական վերապրակներ:

Ինչ վերաբերում է «Պղնձե քաղաքի պատմության» հայկական խմբագրությունների կաֆաներին, ապա, ինչպես արդեն նշվել է, դրանց ուսումնասիրությանն անդրադարձել են մի շարք բանասերներ՝ էիմնականում հայագիտական տեսանկյունից: Առաջին անգամ գրույցի հայերեն կաֆաները դրանց արաբերեն նախօրինակների հետ համեմատելու փորձ է արել Ա.Ադրամսին: Նա իրավամբ նկատում է, որ քն արաբերեն, քն հայերեն ձևագրերում չափաժող հատվածները, նույնական չեն, երկու դեպքում էլ տարրերվում են իրենց բովի և բովանդակությամբ: Նա չափազանց հսկիրճ ներկայացնում է հայերեն և արաբերեն կաֆաների իր



կատարած համեմատության արդյունքները, մեջ բերելով, սակայն, ընդամենը մեկ օրինակ, այն էլ բարգմանաբար (ֆրանսերենով): Նրա եզրակացությունը հայերեն կաֆաների մասին հետևյալն է. հայ «բարգմանիչը ցանկացել է հորինել նույն բնույթի, սակայն ձևով յուրօրինակ ողբեր»<sup>127</sup>:

Հ.Միմոնյանը, հանգամանորեն քննելով հայկական երեք խմբագրություններում առկա մոտ 100 կաֆաները, գալիս է այն եզրակացության, որ դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. բնագրից եկող կաֆաներ և 2. հայ հեղինակների ստեղծած կաֆաներ, ընդ որում երկրորդ խմբի կաֆաներից հինգը պատկանում են Մխիթարի (XIII դ.), մեկը՝ Հովսեփ Աղբամարցու (XVI դ.), քսաներեքը՝ Գրիգորիս Աղբամարցու գրչին, իսկ մնացածների հեղինակների անունները չեն պահպանվել: Պատմության հայերեն թարգմանությունը աստիճանաբար է համարվել նորանոր կաֆաներով. նախնական խմբագրությունում առկա 24 կաֆաների փվը նախագրի-գորիսյան խմբագրությունում հասել է 50-ի, իսկ գրիգորիսյանում՝ 65-75-ի: Հ.Միմոնյանը ևս փորձել է միմյանց հետ բաղդատել հայերեն կաֆաները և դրանց արարելն նախօրինակները, հանգելով հետևյալ եզրակացության. «...պատմության հայկական օրինակներում եղած կաֆաներից առնվազն .... տասն իրենց հիմքում ունեն արաբական համանման երգեր», ընդ որում «Բնագրային կաֆաների հետ ունեցած առնչությամբ վերոհիշյալ երգերը հավասարաթեք չեն. նրանց մի մասը հարազատ թարգմանություն է, մյուսներում առկա են փոփոխություններ, մնացածներն էլ փոխադրություն են հիշեցնում»<sup>128</sup>:

Քանի որ Հ.Միմոնյանի նշված եզրահանգումները ճիշտ են արտացոլում «Պղնձե քաղաքի պատմության» կաֆաների ընդհանուր պատկերը, ապա մեզ մնում է միայն դրանց ավելացնել մեր սեփական դիտարկումների արդյունքները:

Մեր ձեռքի տակ եղած 3 արարերն տեքստերի համեմատությունը միմյանց և հայերեն խմբագրությունների հետ ցույց է տալիս հետևյալը.

ա) Մանկու-Պետերբուրգյան արարերն ձեռագրում առկա են 14 չափածո հատվածներ, որոնցից 11-ն իրենցից ներկայացնում են գուեղիյաթ ժանրի ողբեր, իսկ մնացած 3-ը՝ երկտողանի չափածո ընդմիջարկություններ են, որ ասվում են բանաստեղծ ան-Նարիդա ազ-Չուրյանիի, անանուն թագավորի և նրան ծառայող չիննի կողմից: Քանի որ հայերեն թարգմանությունում վերջին երեքը բացակայում են, այդ պատճառով դրանք մի կողմ ենք

բողնում և քննում միայն ողբերը:

բ) Մ.Հարիխտի հրատարակությունում կա 13 չափածո հատված, որոնք բոլորն էլ գուեղիյաթ ժանրի են:

գ) Եգիպտական հրատարակությունում կա նույնպես 13 չափածո հատված, որոնցից 10-ն են ողբեր, իսկ մնացած երեքը նույն երկտողանի ընդմիջարկություններն են, ինչ և սանկու-պետերբուրգյան ձեռագրում եղածները:

Այսպիսով, արարերն բնագրում առկա են 10-13 կաֆաներ, որոնք բոլորն էլ, որպես կանոն, իրենցից ներկայացնում են ասպանաբարերի, դրների, սպերի կամ սեղանի վրա գրված արձանագրություններ և որոնցից ոչ մեկը չի ասվում Ամիր Մուսայի, Խալիֆի կամ որևէ այլ գործող անձի կողմից: Մինչդեռ հայերեն խմբագրություններում հիշյալ արձանագրություններից բացի կան նաև ողբեր, որ ասվում են ամենից հաճախ Ամիր Մուսայի, իսկ երբեմն էլ՝ մյուս հերոսների կողմից (կամ նրանց անունից)՝ խալիֆի, մեծած բագուեռ և այլն: Ուշագրավ է այն, որ նման ողբերի փվը, նախնական խմբագրությունում համեմատաբար փոքր լինելով, աստիճանաբար աճում և նախագրիգորիսյան և գրիգորիսյան խմբագրություններում: Համոզվելու համար դիմենք կաֆաներին: Այսպես, նախնական խմբագրությունում առկա 24 կաֆաներից 8-ը ասում է Ամիր Մուսան, մեկին նախորդում է «Եւ ասաց» անորոշ արտահայտությունը, ևս մեկն ասում է խալիֆը. ընդհանուր առմամբ գործող անձինք ասում են 9 կաֆա, որոնցից և ոչ մեկը արարերն բնագրից չի գալիս: Հետևաբար, մնում է եզրակացնել, որ հենց այդ կաֆաներն են ավելացվել հայկական միջավայրում՝ համապատասխանեցվելով գրույցի ընդհանուր ոգուն: Այս վարկածի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Հ.Միմոնյանի մատնանշած՝ հայերեն թարգմանության և արարերն բնագրի կաֆաների միջև առկա համապատասխանությունների բվում, որպես կանոն, չկա նշված հավելյալ կաֆաներից և ոչ մեկը և, ընդհակառակն, համընկնում են հենց այն հատվածները, որոնք արձանագրություն-ողբեր են, այլ ոչ թե հերոսների կողմից ասվող: Այսպես, նախնական խմբագրությունում առկա հավելյալ կաֆաներն են.

1. Ոչ ով չունի իշխանություն
2. Աւաղ զեղեցիկ կուպայ
3. Գնաց ժամանակ սոցա
4. Ո՞ր են տէրքն եւ ծառայքն
5. Ո՞ր են իրենց տէրքն (այս կաֆաները ասում է Ամիր Մուսան)
6. Էկէք արմացք տեսէք



7. Անգին ու աննման գուհար
8. Խրատ մն ավի ես թեզ
9. Առդ գրեզ, աղվար քաղաք (այս կաֆան հայտնի չէ ով է ասում)
10. Առդ տամ հազար բերան (այս կաֆան խալիֆն է ասում):

Նախագրի գործիսյան խմբագրության հովելյալ կաֆաները հետևյալներն են.

1. Պարիսպ ես դու աննման
2. Անգին աննման գուհար
3. Եղբարք սիրելիք որ կայք
4. Ինչ մարդ որ այ գայս տեսնու
5. Գէրի Աղամայ որդի,  
     է՛ր դատիս գամէն հեա մերաց (այս կաֆաներն ասում է Ամիր Մուսան)
6. Այ իմ պատուական դրշտոյ
7. Ասանունորիս այս քարիքն
8. Ըզբարոզն գոր դու գրեցեր...
9. Չխրատն գոր տուի ես թեզ
10. Էնզ փառք արարիչ Աստծուած
11. Աստուած արարիչ քարի
12. Առդ տամ հազար բերան (այս կաֆան խալիֆն է ասում):

Այսպիսով, ակնհայտ է, որ նախագրի գործիսյան խմբագրությունում առկա են նախնական խմբագրությունից եկող ընդամենը 3 հավելյալ կաֆա (Անգին աննման գուհար, Չխրատն գոր տուի ես թեզ, Առդ տամ հազար բերան), իսկ մնացյալները նոր են, ընդ որում դրանցից մեկի հեղինակը հայտնի է Հովսեփ Արքամարցի (*Գէրի Աղամայ որդի...*):

Շատ ավելի բարդ խնդիր է գրի գործիսյան խմբագրության հավելյալ կաֆաներն առանձնացնելը, քանի որ այստեղ, բացի Ամիր Մուսայի, խալիֆի և մի շարք այլ հերոսների ասած կաֆաներից, կան հավելումներ նաև արձանագրություն-ողբերի թվում, որոնց մեծ մասի հեղինակային պատկանելությունն անորոշ է: Բացառված չէ, որ որոշ արձանագրություն-ողբեր ավելացված լինեն նաև նախագրի գործիսյան խմբագրությունում:

Ամփոփելով ստվածը, կարող ենք եզրակացնել, որ «Պղնձն քաղաքի պատմության» արարելեն բնագրում եղած համեմատաբար փոքր թիվ կազմող մոտ մեկ տասնյակ կաֆաներին հայկական միջավայրում

ավելացվել են բազմաթիվ նոր կաֆաներ, ընդ որում նման հավելումներ կատարվել են դեռևս նախնական խմբագրությունում: Այսպիսով, հաստատվում է Հ.Սիմոնյանի հետևյալ վարկածը. «Բացառված չէ, որ նրանում (իմա՝ նախնական խմբագրությունում – Մ.Հ.) առկա 24 կաֆաների մի մասը հայ հեղինակների կողմից բնագրի թարգմանությանը զուգահեռ կամ նրանից անմիջապես հետո մտցված նոր կաֆաներ լինեն»<sup>129</sup>:



«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԳԼ ԴԱՖԱՐ ՄԱՆԿԱՆ ԵՎ ԴԵՄԻԼԱՅ ԱՂԶԿԱՆ, ՈՐՔ ԱՌԻՆ ԶԻՐԱՐ»

«Արդյ ճաֆարի և Դեմիլայի» պատմությունն առանձնակի տեղ է զբաղում մեր ըննության առարկա գրույցների շարքում: Ի հակադրություն «Պղնձե քաղաքի» և «Փահլույի» պատմությունների, որոնք, ինչպես արդեն նշվել է, ամբողջովին ներթմված են աշխարհիկ կյանքի ունայնության և մերժման գաղափարով, խրատա-ուսուցողական և կրոնական ոգով, այս գրույցն աչքի է ընկնում «իր կենսական գորեղ շեշտերով, աշխարհիկ անթարույց ոգով, ... սիրո բացահայտ և անվարան փառաբանումով...»<sup>1</sup>:

Զրույցն ունի հետևյալ բովանդակությունը.

Բաղդադում ապրում է մի անհայտ բազավոր, որը, սակայն, անգավակ է: Բազում աղաչանքներից հետո Ատաված նրան մի որդի է պարգևում, որին կոչում են Արդյ ճաֆար: Երբ Արդյ ճաֆարը մեծանում է, «չարկամ» մարդիկ, հորից գաղտնի, նրան պատմում են ինչ-որ հեռու երկրում ապրող մի չքնաղ արաքայադատեր մասին: Պատանին ծպտված փախչում է տանից՝ արքայադատերը որոնելու: Նա գտնում է արքայադատեր պալատը և երկու տարի շարունակ ջրկիրություն անում նրա պալատի մոտ: Վերջապես մի օր աղջիկը տեսնում է նրան և նույնպես սիրահարվում, սակայն աղջկա վերակացու չար պառավը նրանց արգելում է նույնիսկ խոսել միմյանց հետ: Ի վերջո սիրահարները խորամանկությամբ կարողանում են տեսակցել, սակայն պառավն այդ մասին հայտնում է աղջկա հորը: Վերջինս դահիճներին հրամայում է սպանել Արդյ ճաֆարին: Իմանալով, որ Արդյ ճաֆարը «Պաղտատայ ամիրի» միակ որդին է, դահիճները խղճում են և ազատ են արձակում նրան՝ պայմանով, որ նա հեռանա քաղաքից: Արդյ ճաֆարը գնում է մի այլ քաղաք և ծառայության մտնում ավագանիների մոտ որպես այգեպան: Մինչ այդ նրան ազատ արձակած դահիճները լուր են ուղարկում նրա հորը՝ հարցնելով, թե արդյոք վերջինիս որդին տուն հասնո՞ւ է: Արդյ ճաֆարի հայրը, իմանալով, որ որդուն ցանկացել են սպանել, գայտանում է, գոբը հավաքում և հրամայում վրեժ լուծել Դեմիլայի հորից: Նրա գորքը ավերում է Դեմիլայի հոր երկիրը, իսկ Դեմիլայի հայրը ընտանիքի հետ միասին դիմում է փախուստի: Փախչելիս Դեմիլային և

վերակացու պառավին նստեցնում են սնդուկների մեջ և բարձում միևնույն ուղտին: Փախուստի ճանապարհին բազավորական ընտանիքը ենթարկվում է այն ավագանիների հարձակմանը և կողոպուտին, որոնց մոտ ծառայում էր Արդյ ճաֆարը: Ավագանիները որոշում են իրենց սվարից Արդյ ճաֆարին բաժին հանել ուղտին բեռնված երկու սնդուկները՝ անանդյակ դրանց պարունակությամբ: Սակայն տունդարձի ճանապարհին ավագանիների վրա են հարձակվում Արդյ ճաֆարի հոր հեծյակները, սպանում նրանց և խլում ավարը: Երբ սնդուկները բացում են, դուրս են գալիս Դեմիլան և վերակացու պառավը: Վերջինիս Արդյ ճաֆարի հրամանով սպանում են: Զրույցը ավարտվում է հարսանիքով և հոր մահից հետո Արդյ ճաֆարի երջանիկ բազավորությամբ՝ մինչև իր մահը:

Ի տարբերություն նախորդ երեք գրույցների, որոնց զրչագրերը հաշվվում էին, ինչպես տեսանք, տասնյակներով, «Արդյ ճաֆարի և Դեմիլայի պատմությունը» մեզ է հասել ընդամենը երկու ընդօրինակությամբ: Թերևս այդ է պատճառը, որ, անմատչելի մնալով բանասերների համար, այն անհամեմատ ավելի քիչ է ուսումնասիրել, քան նախորդները:

Ընդօրինակություններից առաջինը պահպանվել է Վլեննյայի Մխիթարյան մատենադարանի № 671 ձեռագրում (թ. 128ա-135բ)<sup>2</sup>, որի մասին դեռևս 1958 թ. հիշատակել է, թեև շատ հպանցիկ, Ն.Ալիյանը<sup>3</sup>: Երկրորդ ընդօրինակությունը փաստորեն անհայտ էր մնում մինչև 1988 թ., երբ այն հայանաբերեց բանասեր Հ.Սիմոնյանը՝ Պոլսի Պալատ Ս.Հրեշտակապետաց եկեղեցու № 30 ձեռագրում<sup>4</sup>: Այս երկու զրչագրերի հիման վրա Հ.Սիմոնյանը հրատարակեց գրույցի գիտա-համեմատական բնագիրը՝ կից համատոտ ուսումնասիրությամբ<sup>5</sup>:

Ինչպես հավաստում է Հ.Սիմոնյանը, «Զրույցի մեզ հայտնի երկու օրինակներն էլ նույն խմբագրությանն են պատկանում. տիպարանորեն և կառուցվածքային հատկանիշներով նույնական են»<sup>6</sup>: Նույնը վերաբերում է նաև գրույցում առկա 14 կախաներին, որոնց բնարկմանը համատոտ ձևով անդրադարձել է հետազոտողը<sup>7</sup>:

Տեղեկություններ գրույցի բարգմանչի, բարգմանության ժամանակի, ինչպես նաև ինչ լեզվից բարգմանված լինելու մասին մեզ փաստորեն չեն հասել: Ն.Ալիյանը, որ ուսումնասիրողներից առաջինն է ուշադրություն դարձրել այս գրույցին, առաջինն է հանդիսացել նաև վերջինս արաբերենից արված բարգմանությունների շարքը դասելու հարցում: Այսպես, խոսելով Պղնձե քաղաքի, Մանկան և աղջկա, Ֆարման մանկան պատմությունների



մասին, որոնք նա համարում է «տողակի կամ միջնորդարար արարելեն բարգմանուած գրոյցներ», նա գրում է. «Այս Զրոյցներու շարքէն են նաև Արդլ-Ճաֆարի, Փիր Փահլույի պատմութիւնները, որոնք պատուած են տաղաբաններու մէջ»<sup>5</sup>: Իսկ բարգմանութեան ժամանակի մասին Ն.Ալիինյանն անում է հետևյալ բուռցիկ դիտողութեանը, նույնպէս խոսելով Պղնձե քաղաքի պատմութեան բարգմանութեան մասին. «Թարգմանութիւնը հին է, հատուօրէն 1250-1350 շրջանէն, երբ ծաղկեցան Ֆրիկ եւ Յովհաննէս եւ Կոստանդին Երզնկացիք եւ բարգմանուեցան Խարանի Ամանի, Փահլու քաղաքորի, Աղքատ քաղաքորի եւ Արդլ Ճաֆարի եւ Դեմիլայի պատմութիւնները»<sup>6</sup>: Այսպիսով, նա բարգմանութեան ժամանակը համարում է XIII-XIV դդ.:

Հ.Միմոնյանը «Արդլ Ճաֆարի եւ Դեմիլայի» գրույցի՝ արարելենից բարգմանված լինելու ապացոյց է համարում այն հանգամանքը, որ վերջինիս՝ Վիեննայի Մխիթարեանց վերոհիշյալ ձեռագրում առկա ընդօրինակութեանը կրում է հետևյալ խորագիրը. «Յատաչին քաղաքորացն է, Արդլ Ճաֆարին եւ Դեմիլային պատմութիւն», որը, նրա կարծիքով, «ու պատահականօրէն», մասամբ կրկնում է Ն.Ալիինյանի հայտնաբերած (Հոմի Հայոց Հյուրանոցի № 33/24 ձեռագրում առկա) հետևյալ խորագիրը. «Զբուց եւ խոսք առաջի քաղաքորացն եւ իշխանացն, գոք բարբնանցին Ղաիք Կորուպապաիւն ի հայ լեզու ի տարձիկ լիզվէ»: Ըստ Հ.Միմոնյանի, «Այս խորագիրը փաստաբէն նույն շարքի մեջ է գտնուում բոլոր այս գրույցները՝ իբրև գրական նույն միջավայրի եւ բարգմանական միաժամանակեայ ընթացքի արտադրանք»<sup>7</sup>: Հ.Միմոնյանը իրավացիորեն նկատում է նաև, որ գրույցը չափազանց նման է հստակապէս «1001 գիշերի» հեքիաթներին:

Զրույցի արարելեն բնագիրը, սակայն, առ այսօր մնում է անհայտ, ինչպէս և վերջինիս գուգահեռները որևէ այլ լեզվով: Հարկ է նշել, որ «Արդլ Ճաֆարի եւ Դեմիլայի պատմութեան» բնագիրը բացակայում է արաբական, պարսկական եւ մի շարք այլ արևելյան առավել կամ պակաս հայտնի հեքիաթների ժողովածուներում (ձեռագիր եւ տպագիր): Նշանակում է, այս պատմութեանն ակնհայտօրէն չի պատկանում հանրահայտ եւ մեծ տարածում գտած հեքիաթների թվին: Պետք է ենթադրել, որ այն կամ շարունակում է «բարբնված» մնալ որևէ ձեռագիր ժողովածուում<sup>8</sup>, որը դուրս է մնացել արևելագետների ուշադրութենից, կամ էլ, բերես, պարզապէս մեզ չի հասել: Վերջին դեպքում, եթե, ինչպէս, այդ ենթադրութեանը հաստատվի,

либо тем, что ее арабский оригинал все еще остается "скрытым" в каком-либо рукописном сборнике, оставшемся вне поля зрения востоковедов (как известно, подобных сборников, разбросанных по всему миру – множество, и большая их часть до сих пор остается не только неопубликованной, но и неизученной), либо этот подлинник просто до нас не дошел (подобные случаи известны арабистике, в частности, на примере ряда записей средневекового арабского фольклора, сохранившихся лишь в еврейской графике). В последнем случае армянский перевод повести приобретает определенную ценность – в смысле замены арабского подлинника. Присутствие же в армянском переводе около двух десятков арабских слов (при отсутствии персидских), а также арабских собственных имен и т.д. позволяет заключить, что повесть переведена, вероятнее всего, с арабского.

## SUMMARY

Thanks to Medieval Armenian translators, whose names quite often, unfortunately, are unknown to us, the Armenian reader has had the opportunity to acquaint himself in his mother tongue with such famous works of literature as "The Alexander Romance", "The Tale of Barlaam and Joasaph", "The Tale of Seven Sages of Rome", "The Wisdom of Khusro Anushirvan", "The Wisdom of Ahikar", "Physiologus", "Speculum Magnum", etc.

These translations were made from a number of different languages: Greek, Syriac, Latin, Persian, Polish, etc. The Medieval translations also include "The Story of the Young Man and the Girl", "The Tale of the Copper City", "The Story of King Bahlul", "The Tale of Abdul Jafar and Jemila", that have been classified by scholars as being translated from Arabic. These have enjoyed great popularity in the Armenian circles and have reached us in dozens of manuscript copies (dated between 14th and 20th centuries), as well as in a number of publications between 16th and 20th centuries.

Since the Arabic originals of the above-mentioned "tales" have not yet been identified (with the exception of "The Tale of the Copper City", which has been referred to by A. Laurentie in 1921), they have been studied solely from the Armenological perspective until now.

The present study attempts to identify the Arabic originals of the above-mentioned "tales" for the first time, to present the history of their written and folkloric tradition in the Arab environment, to demonstrate the relevance of the Armenian lore in the study of Arabic originals and conversely, to compare the Armenian stories with the Arabic ones with a view of finding whether the Armenian translations were really done from Arabic, which environment lent the stories to Armenian translation: Christian Arabic or Moslem Arabic, which transformations the stories have undergone in the Armenian environment. In cases when other Eastern parallels exist to these Arabic stories (Persian, Syriac, Turkish etc.) the Armenian version is compared with these with the purpose of finding which language was the Armenian translation made from. The comparison has made use of 9 unpublished manuscripts so far little studied or not studied at all (in Arabic, Pharsi, Hebrew script Arabic, etc.) kept in the Matenadaran (Yerevan, Armenia) and elsewhere (St. Peters-



burg's Institute of Oriental Studies and The Saltykov-Šchedrin State public library).

The book comprises a foreword dwelling on the Armenian-Arabic literary relations in the Middle Ages and the history of the study thereof, four chapters dealing each with one of the above-mentioned "tales", footnotes, an appendix (outlining the findings of the author on two more literary monuments, resulting from the Armenian-Arabic literary relations: "The Geoponica" and the "The Book of cures of Horses and Generally Sumpters", a summary (in Russian, French and English), a bibliography and a number of other listings.

## LES TRADUCTIONS ARMÉNIENNES MÉDIÉVALES DE LA PROSE ARABE

(X-XV siècles)

Résumé

Grâce aux traducteurs arméniens du Moyen âge, dont les noms, souvent, nous sont inconnus, le lecteur arménien a eu la possibilité de lire dans sa langue maternelle les romans et les recueils d'histoires alors en vogue: "L' Histoire d' Alexandre", "Le livre de Barlaam et Joasaph", "Le roman des Sept Sages de Rome", "Les préceptes de Nouchirvan", "Les préceptes du Sage Khikar", "Physiologus", "Speculum Magnum" etc.

Ces traductions ont été faites de diverses langues: du grec, du syriaque, du latin, du persan, du polonais etc. Parmi ces traductions médiévales on peut trouver quelques-unes qui ont été hypothétiquement mises, par les philologues, au nombre des écrits traduits de l' arabe; ce sont: "L' Histoire du jeune homme et de la jeune fille", "L' Histoire de la ville d' airain", "L' Histoire du roi Pahloul", "L' Histoire d' Abdl Djafar et de Djémila". Ces "histoires" ont acquis une grande popularité dans le milieu arménien et nous sont parvenues dans plusieurs dizaines de manuscrits remontant du XIVe au début du XX siècles; ainsi que dans une série d' éditions datant du XVI au XX siècles.

Puisque jusqu' alors les originaux arabes des "histoires" mentionnées n'ont pas été découverts (à l' exception de l' original arabe de "L' Histoire de la ville d' airain", indiqué par H.Laurentie en 1921), elles ont été étudiées, par les chercheurs, exclusivement du point de vue arménologique.

L' étude présente est la première tentative de découvrir les originaux arabes des "histoires" susmentionnées, de présenter l' histoire de leur tradition écrite et folklorique dans le milieu arabe, de montrer l' importance des versions arméniennes pour l' étude des originaux arabes et le contraire, de comparer les versions arméniennes avec les versions arabes pour établir quels changements ont-elles subis, après leur traduction, dans le milieu arménien, ainsi que de préciser au quel milieu arabe ont-elles été empruntées: au milieu arabe-chrétien ou bien arabe-musulman. Dans les cas où sont connus d' autres parallèles orientaux des versions arabes (persans, syriaques, arabes en caractères hébreux, turcs etc.), la version arménienne a été comparée avec ces



derniers pour préciser lequel d'entre-eux a servi d'original pour la traduction arménienne. Pour la comparaison ont été utilisés neuf manuscrits inédits, peu étudiés ou bien non étudiés (arabes, persans, arabes en caractères hébreux etc.), conservés à Maténadaran (Erévan, Arménie) et à l'étranger (Saint-Pétersbourg, Institut des recherches orientales et Bibliothèque d'État Saltykov-Šcedrin).

Le livre consiste d'une préface consacrée aux relations littéraires arméno-arabes au Moyen Age et à l'histoire de leur étude, de quatre chapitres chacun desquels concerne l'une des "Histoires" mentionnées, des commentaires, d'un résumé (en russe, en anglais et en français), d'une liste des manuscrits et de la littérature utilisés, des indices, ainsi que d'un appendice qui comprend deux articles de l'auteur, consacrés aux relations littéraires arméno-arabes pendant la période cilicienne: 1. "Les sources arabes du "Traité d'hippiatrie" de Paradj le Syrien". 2. "Du problème de l'original de la traduction arménienne des "Géoponiques".

## «ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

«Գիրք վաստակոցը», ինչպես հայանի է, երկրագործական յարօրինակ հանրագիտարան է նախատեսված գյուղատնտեսությամբ զբաղվողների համար, որոնց արվում են գործնական խորհուրդներ և ցուցումներ հացա-մշակության, գինեգործության, այգեգործության, քաչնաբուծության, մեղվաբուծության, անասնաբուծության և գյուղատնտեսության այլ բնագավառների վերաբերյալ: Նախապես կազմվելով հունարեն («Գեոպոնիկա»), միջին դարերում այն քարգմանվել է մի շարք արևելյան և արևմտյան լեզուներով (ասորերեն, արաբերեն, պարսկերեն, լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն), այդ բնագավառում և միջին հայերեն, և այդպիսով տարածում գտել ինչպես Արևմտյան Արևելքում, այնպես էլ Արևմուտքում:

Հարկ է նշել, որ Արևմտյան Արևելքում երկրագործության վերաբերյալ գործնական բնույթի գիտելիքների գրավոր արձանագրման սովանդայրը զարկ է դնում սեպագիր շրջանից: Նման գրառումներ ստեղծվում են, օրինակ, խեթական արձանագրություններում, ինչպես նաև հին սարսկական «Ալեստայում», իսկ հին հունական և հռոմեական գրականության մեջ են սովանդված մի ամբողջ շարք հեղինակների անուններ, որոնք կազմել են երկրագործական ձեռնարկներ և կամ իրենց երկերում անդրադարձել հողագործության բնագավառին (Թեոփրաստես, Հեսիոդոս, Բուենոփոն, Կատոն, Վարրոն, Կոլումելլա, Պլայպաղոս և այլն): Անտիկ հեղինակների երկերի դասական մտուցները կոմպենդիումների են վերածվել հույների կողմից, սպա, քարգմանվելով, տարածվել նախ՝ ասորիների, ապա՝ արաբների, հայերի և պարսիկների միջավայրում, իսկ այնուհետև նաև՝ Սելյուկյան:

Ուսումնասիրողները պարզել են, որ հունական «Գեոպոնիկան» կամայկյալով բնույթի գրական հուշարձան է՝ բաղված մի շարք աղբյուրներից, որոնք հաճախ, իրենց հերթին, նույնպիսի կոմպենդիումներ են եղել: Հայանի են «Գեոպոնիկայի» հունարեն բնագրի մի քանի տարբերակներ. այն իր վերջնական անսրն ստացել է Բյուզանդիայում, X դ., Կոստանդին Միրանա-ծին կայսեր օրոք: Մակայն, դեռևս ավելի վաղ, այն իր նախնական տեսքով արդեն քարգմանվել էր ասորերեն և արաբերեն, ինչով և բացատրվում են



նշված քարգմանությունների և հունարեն բնագրի միջև եղած տարբերությունները: Ըստ հունարեն ձևագրերում «Գեոպոնիկայի» հեղինակությունը վերագրվում է Կոստանոս Բասու Սխալաստիկոսին, սակայն առ այսօր այդ հարցը չի գտել իր վերջնական լուծումը, և որոշ ավելի զգույշ ուսումնասիրողներ առայժմ գերադասում են այն անանուն համարել: Հետազոտողների կարծիքով Կոստանոս Բասուն իրականացրել է «Գեոպոնիկայի» նորագույն խմբագրությունը՝ լրացնելով և փոփոխելով ավելի վաղ շրջանից հայտնի հունական գյուղատնտեսական ձեռնարկը:

«Գեոպոնիկայի» ուսումնասիրողներից Վ.Գեմոյը, հանգամանորեն վերլուծելով և բաղդատելով այն Փոտի, Կոնստանդին Միքանաձմի գյուղատնտեսական հանրագիտաբանների և մի շարք այլ նման երկերի հետ, մատնանշել է այս երկի անախկ աղբյուրները: Նա եզրակացնում է, որ X դ. «Գեոպոնիկայում» օգտագործված կոմպենդիումի հեղինակը ոմն Անատոլիոս Վինդանիոնիոս է Բեդրյոսից («Բեդրյոտացի»), որին հիշատակում է Փոպը (Կողերս 163): Անատոլիոսը նշում է այն հեղինակների անունները, որոնցից ինքը բաղել է իր անդեկտայունները: «Գեոպոնիկան» կազմող արտագրել է հիմնականում Անատոլիոսի երկը (*Συναγωγὴ γεωργικῶν ἐπιτηδεύματων*), ամուխիլ հեղինակներին մեջբերելով միայն նրա շարադրանքով: Ենթադրվում է, որ Անատոլիոսը եղել է Հուլիանոս կայսեր ժամանակակիցը և իր երկրագործական երկը կազմել է նրա համեմատաբար: Ամմիանոս Մարցելլինոսը մի քանի անգամ հիշատակում է նրա մասին որպես Հալիանոսի բարեկամի: Բացի այդ, հայտնի է, որ 346 թ. նա եղել է *officiorum magister* և Իլլիրիկ պրետորիայի պրեֆեկտը:

«Գեոպոնիկայի» հայերեն քարգմանությունը հայտնի է «Գիրք վաստակոց» կամ «Երկրափաստակը» անվանումով: Այն մեծապես արժեքավոր է որպես իր տևակի մեջ եզակի հուշարձան, քանի որ առ այսօր հայտնի չեն հայ մատենագրությանը ախանդված այլ երկրագործական ձեռնարկներ: Այդ իսկ պատճառով այն հանդիսանում է միջին հայերենին բնորոշ մեծ բով այնպիսի բառերի բացառիկ մի շտեմարան (թե՛ հայերեն, թե՛ այլ լեզուներից փոխառյալ), որոնցից շատերը չեն ավանդված հայկական այլ աղբյուրներով. դրանք հիմնականում գյուղատնտեսության զանազան բնագավառներին վերաբերող տերմիններ են, բուսանուններ և այլն: Վ.Ալիշանի զնահասմամբ, «Գիրք վաստակոցը», որ զի և քարգմանությամբ է (այլ նորութեամբ և ճոխութեամբ բառից լեզուին ընդ ազգային մատենագրութիւնս իսկ դասելի)... եթե ճանաչեսք գրարգմանիչն՝ բազում երախտեաց

դրուատիս և նմա մատուցանել:... հարիւարաց պիտանի և ընտիր բանից՝ որոց մեծ մասն մի չէ ևս է մտեալ յէս տպագիր բառարանաց մերոց:»

«Գիրք վաստակոցը» մեզ է հասել ընդամենը երեք գրչագրով, որոնք բոլորն էլ ոչ շրջանի են՝ քվագրվում են XVIII դ. երկրորդ կեսով: Գրանցից «ընտրելագույնը» ընդօրինակված է 1768 թ., Կ.Պոլսում, Գեորգ Դպիր Պալատեցու ձեռքով և սրահվում է Վիեննայի Մխիթարյանց Մատենադարանում՝ 281 համարի տակ (հիմ ՆՁ 26): Սակայն Գեորգ Դպիրը դժբախտաբար ոչ մի անդեկտայուն չի հաղորդում իր ընդօրինակության սկզբնագրի մասին, որն այժմ հայտնի չէ, թե ուր է: Մյուս երկու ձևագրերը գտնվում են Վենետիկի Մխիթարյանց մատենադարանում՝ և ընդօրինակված են, հավանորեն, նույնպես Կոստանդնուպոլսում, XVIII դ. երկրորդ կեսին: Գեորգ Դպիրի ընդօրինակած ձեռագիրը հիմք է ծառայել, մյուս երկու ձեռագրերի համեմատությամբ, «Գիրք վաստակոցի» քննական բնագրի հրատարակման համար: Վերջինս իրականացրել է Ղ.Ալիշանը 1877 թ., կից առաջարկումով և բացատրական բառարանով, ընդ որում բառարանը Գեորգ Դպիրի կազմածն է՝ Ղ.Ալիշանի որոշ լրացումներով և ճշգրտումներով:»

Ելնելով հուշարձանի լեզվի առանձնահատկություններից և մի քանի այլ հանգամանքներից, Ղ.Ալիշանը գտնում է, որ քարգմանությունը կատարվել է Կիլիկիայում, Ռոբինյանների ափրապետության օրոք, XIII դարում՝ «վաղագույն քան թէ անագան»: Իսկ հայերեն քարգմանության բնագրի վերաբերյալ Ղ.Ալիշանը գրում է. «Օրինակն այն՝ առանց կրկրայութեան էր արարելն քարգմանութիւն յունականին, որպէս քաջայայտ երկի յարապիկ անուանց համաստեղութեանց, զոր մերք քարգմանելով և մերք ոչ՝ կրկնէ մերս, և ՚ի բոսոց և կենդանեաց ոմանց՝ զորոց չէ գտեալ բնիկ հայեցի կոչմունս ընդ որոց հարկ էր նմա գյունականսն կարգել անուանս՝ եթէ ՚ի յունէ անախ քարգմանը...»: Բացի այդ, նա վկայակոչում է ևս մի սպառնայց՝ Անատոլիոս Բեդրյոտացու անվան *Պոնիոս* բաղադրիչի առկայությունը հայերեն քարգմանության մեջ, իրավամբ նկատելով. «... զի Պոնիոս կոչումն հայոյն՝ ոչ ուրեք լսի... Իսկ ուսախ՝ արդեօք սպրդեաց Պոնիոսայ անուն ՚ի հայոմս՝ ոչ ոմնիմ ասել, բայց միայն զի յաղասագութեմ իմերէ յայն բնագրին յեղոյ յարաբացի լեզու յորմէ մերն փախարերեալ է»: Հետագայում Կ.Բրովկեյմանը, համաձայնվելով Ղ.Ալիշանի նույնացման հետ (*Պոնիոս* Անադալիոս-Վինդանիոս Անատոլիոս) և հիմնվելով Վ.Գեմոյի այն դիտողության վրա, որ արաբական մատենագրության մեջ հանդիպում է *Վինդանիոս* անվան *Յունիոս* աղավաղված ձևը, հայերեն *Պոնիոս*-ը համարել է *Յունիասի* սխալ



գրչության հետևանք (քանի որ արարելնուս ք և յ տառերը միմյանցից տարբերվում են ընդամենը մեկ դիակրիտիկ կետով՝ *hmdm* *يونيسوس - يونيسوس*)<sup>14</sup>։

Ինչ վերաբերում է արարելնն բնագրին, ապա Ղ.Ալիշանը գրում է. «Ոչ է մեզ ծանօթ փափագելին այն արարացի քարգմանություն, յորմէ մարք էր անկասկած ստուգել զամենայն բառս հայկականիս...» և ավելացնում. «Միլլ (Clement Muller) որ յամս 1864-7 հրատարակեաց զգիրս երկրագործութեան Իպն-ալ-Ավան Արարացոյ, յիշէ և զայլ արարացի ձեռագիր իբրև բուն համառոտութիւն յունական Վաստակոց Գրոց, և Դիմոկրիտեայ ընծայեալ. և զի 'ի մերում քարգմանութեանս իսկ յայմիկ Դիմոկրիտես յաճախագոյն քան զայլ հեղինակս յիշի՝ կարծւմ թէ հայերէնս այս քարգմանութիւն է այնր արարացի մատենի, զոր ոչ ժամանեցար սնուցել»<sup>15</sup>։

Այսպիսով, Ղ.Ալիշանը կասկածից դուրս է համարում այն, որ «Գիրք վաստակոցը» հայերեն է քարգմանվել հունարեն բնագրի արարելնն քարգմանությունից, ընդ որում վերջինս նա ենթադրաբար նույնացնում է ֆրանսիացի արաբագետ Բլեման Մյուլլեի հիշատակած այն արարելնն ձեռագրի հետ, որն իրենից ներկայացնում է հունական «Գիրք վաստակոցի» «բուն համառոտությունը»։ Մակայն թե իրենից ի՞նչ է ներկայացնում այդ արարելնն ձեռագիրը և արդյո՞ք իրոք հենց դա է եղել հայերեն քարգմանության բնագիրը՝ առ այսօր մնում է չպարզված։

Ղ.Ալիշանի վերոհիշյալ տեսակետները գիտական շրջանառության մեջ են մտել և որդեգրվել հետագա ուսումնասիրողների կողմից՝ բացառությամբ Կ.Բրոկելմանի, որը «Գիրք վաստակոցի» հայերեն քարգմանությունը համարում է այլ ժամանակաշրջանում և այլ միջավայրում կատարված։ Կ.Բրոկելմանն ընդգծում է հայերեն քարգմանության ուսումնասիրության կարևորությունը ոչ միայն լեզվաբանական տեսանկյունից՝ որպես միջին հայերենով ավանդված հուշարձան, այլև որպես հունարեն բնագրի և ասորերեն քարգմանության հետագոտման համար մի լրացուցիչ և արժեքավոր աղբյուր՝ հայկական տարբերակի հետ դրանց ունեցած առնչության առումով։ Մակայն, նրա կարծիքով, հայերեն քարգմանությունը կատարվել է ոչ թե Կիլիկիայում, այլ Լեհաստանում, և ոչ թե XIII դ., այլ շատ ավելի ուշ։ Նման եզրակացության նա հանգում է՝ վկայակոչելով մի շարք լեզվական իրողություններ<sup>16</sup>, որոնք, սակայն, հիմնավորապես հերքվել են, մասնավորապես, Ս.Սարյանի կողմից։ Ս.Սարյանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Բրոկելմանի վկայակոչած հենց նույն լեզվական իրողությունները ոչ թե հաստատում են, այլ մխտում քարգմանության՝

Լեհաստանում և ուշ շրջանում կատարված լինելը։ Նա միանգամայն իրավացիորեն նկատում է. «... եթե ի Լեհաստան քարգմանումս համարինք, ուր հայերէն լեզուին յետադէմ և օտարաբան փոփոխութիւնն քաջայայտ է ամենուն, ինչո՞ւ լեհերենի, լատիներենի, քաքար լեզուի... փոքրիկ դրաշմներն անգամ չեն զանուիր անօր մէջ։ Ընդհակառակն ի Կիլիկիա քարգմանուելուն և այն՝ Ռուբինեանց տիրապետութեան ժամանակ, յայտնաբար նշաններ են հետեւեալքն. մախ՝ վասն զի Կիլիկոյ մէջ հայերէնի կրած յերափոխութեանց համաձայն կու գայ քարգմանութեանս լեզուն. երկրորդ՝ պարսն բառն ալ Ռուբինեանց ատեն մուտք գաած է Հայոց մէջ. երրորդ՝ արարական օրինակէ քարգմանուիլն ալ բուի թէ նշան մ'է հաստատիչ Մեծ Հրատարակչին կարծեաց, վասն զի արարական ազդեցութեան մը հետեւանք կրնայ համարուիլ»<sup>16</sup>։

Թեև «Գիրք վաստակոցի» մեզ հասած հայերեն ձեռագրերից ոչ մեկում քարգմանչի անունը չի պահպանվել, ուսումնասիրողներից ոմանք քարգմանությունը վերագրել են Մխիթար Հերացուն<sup>17</sup>՝ փորձելով այդ հիմնավորել որոշ լեզվական իրողությունների ընդհանրությամբ Հերացու «Ջերմանց մխիթարության» և «Գիրք վաստակոցի» միջև։ Բացի այդ, Ն.Անդրիկյանը, մասնավորապես, գտնում է, որ քարգմանիչը «շատ հաւանօրէն միայն Մխիթար Հերացին կրնայ ըլլայ», քանի որ Կիլիկիայում տվյալ ժամանակաշրջանում (XII-XIIIդդ.) արարելննի տիրապետող այլ հայ մշակութային գործիչներ հայտնի չեն<sup>18</sup>։ Մակայն, մեր կարծիքով, Ն.Անդրիկյանի հիշյալ փաստարկներն այնքան էլ համոզիչ չեն՝ հետևյալ պատճառներով.

1. Ն.Անդրիկյանի վկայակոչած լեզվական իրողություններն ընդհանուր են ոչ միայն «Գիրք վաստակոցի» և «Ջերմանց մխիթարության», այլև միջին հայերենով ստեղծված այլ հուշարձանների համար ևս, այլ կերպ ասած, դրանք կարելի է բացատրել ոչ այնքան նշված հուշարձանների հեղինակների նույնությամբ, որքան պարզապես տվյալ ժամանակաշրջանի լեզվին՝ կիլիկյան հայերենին բնորոշ առանձնահատկություններով<sup>19</sup>։

2. Մխիթար Հերացին չէր կարող արարելննի միակ տիրապետող լինել ժամանակի հայ մշակութային գործիչների մեջ<sup>20</sup>, և եթե անգամ նա միակն էլ լիներ, ապա չպետք է մոռոնալ, որ Կիլիկիայում բազմաթիվ էին ասորի քարգմանիչներն ու մշակութային գործիչները, որոնք տիրապետում էին թե՛ արարելննին և թե՛ հայերենին և ոչ միայն քարգմանում էին արարելննից հայերեն (հաճախ հայ քարգմանիչների օգնությամբ, ինչպես, օրինակ, «Բժշկարան ձիոյ»-ի հեղինակ Յարաջ Ասորին, որն օգտվել է արարական



աղբյուրներից), այլև նույնիսկ իրենց երկերը հայերենով էին գրում (ինչպես, օրինակ, Իշոխր և Արուսայիդը)<sup>21</sup>:

3. Ուղղակի հիշատակություններ այն մասին, որ Մխիթար Հերացին քարգմանել է «Գիրք վաստակոցը», չեն պահպանվել ոչ վերջինիս՝ մեզ հասած ձեռագրերում, ոչ Հերացու՝ մեզ հասած երկերից որևէ մեկում, ոչ էլ որևէ կողմնակի աղբյուրում, հետևաբար նշված խնդիրը վերջնականապես լուծված համարել չի կարելի, քանի դեռ չեն հայտնաբերված լրացուցիչ, ավելի համոզիչ փաստաթղթեր:

Ինչ վերաբերում է «Գիրք վաստակոցի» լեզվին, ասար Գ.Ալիշանն իր առաջաբանում նշում է, որ իր ձեռքի տակ եղած երեք ձեռագրերից երկուսը չսովորական ման են միմյանց և ծագում են միևնույն աղբյուրից, իսկ երրորդը, որը և նա հրատարակելիս որպես հիմք է ընդունել, մյուսներից տարբերվում է գրաբարին ավելի մոտ լեզվով, սառույց գրչությամբ և ամբողջականությամբ: Ըստ նրա, առաջին երկու ձեռագրերն ընդօրինակողը պարզեցրել կամ «տամկացրել» է դրանց լեզուն՝ «ըստ ոճոյ կամ հասկացման իրոյ ժամանակին»: Այս հանգամանքից ելնելով, նա ենթադրում է, որ հայերեն քարգմանության նախնական տարբերակը եղել է թերևս էլ ավելի մոտ գրաբարին, քան նույնիսկ երրորդ ձեռագրի լեզուն է<sup>22</sup>: Գ.Հովհանյանը, զուգահեռաբար մեջբերելով մի շարք հաստատվածներ նշված երեք ձեռագրերից, նույնպես ընդգծում է դրանց լեզվի միջև եղած տարբերությունը և, ջանալով բացատրել այն, առաջ է քաշում երեք վարկած, այն է՝

1. «Գիրք վաստակոցի» լեզուն հենց սկզբից էլ եղել է ռամկախառն գրաբար:

2. լեզուն եղել է գրաբար «սակա մի ռամկախառն» և հետո է միայն ընդօրինակողների կողմից աստիճանաբար փոփոխվել և հասել այժմյան վիճակին:

3. նախապես «փոքր մի ռամկախառն» գրաբար քարգմանությունը հետագայում «գրագիտի մը ձեռօք (գրաբարախառն) ռամկօրենի» է վերածվել, ինչպես այդ կատարվել է, օրինակ, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հետ, որը Սմբատ Մպարապետի կողմից քարգմանվել է «ռամկօրեն»<sup>23</sup>:

Նկատի ունենալով XII-XIII դդ. թվագրվող աշխարհիկ բնույթի այլ հուշարձանների լեզուն, որոնք նույն միջավայրում քարգմանվել են արարելենից կամ ստեղծվել արարական աղբյուրների հիման վրա, կարելի է եզրակացնել, որ «Գիրք վաստակոցի» մասն մի հաշարձան, որը նախա-

տեսված էր գործնական, ամենօրյա կարիքների համար և հասցևագրված էր ընթերցողների ոչ թե նեղ, այլ լայն շրջանակի, հագիվ թե սկզբում քարգմանվեր գրաբարով, իսկ հետո վերածվեր միջին հայերենի (կամ «ռամկօրենի»)։ ավելի հավանական է, որ այն հենց սկզբից էլ քարգմանվեր միջին հայերենով, որը, բնականաբար, կարող էր էլ ավելի ռամկացվել հետագա ընդօրինակող գրիչների կողմից:

«Գիրք վաստակոցի» հայերեն քարգմանությանը տարբեր առիթներով անդրադարձել են նաև մի շարք այլ ուսումնասիրողներ<sup>24</sup>, սակայն առ այսօր որոշ խնդիրներ մնում են դեռևս չլուծված, որոնցից կարևորագույնը, ինչպես արդեն նշվել է, հայերեն քարգմանության արարելեն բնագրի հայտնաբերումն է:

Այժմ անդրադառնանք «Գիրք վաստակոցի» այն այլալեզու տարբերակներին, որոնք ամենից ավելի սերտորեն են առնչվում նրա հայերեն քարգմանությանը և կարող են որոշիչ դեր խաղալ վերջինիս բնագրի հայտնաբերման հարցում, այսինքն՝ «Գեոպոնիկայի» ասորերեն և արարելերեն խմբագրություններին<sup>25</sup>:

Հավաստված է, որ Անատոլիոս Բերյուտացու երկի հունարեն բնագրին իր բովանդակությամբ և կառուցվածքով ամենամոտը ասորերեն քարգմանությունն է: Վերջինիս առաջին հայտնի միակ ձեռագիրը պահվում է Բրիտանական քանդաքանում: Ձեռագիրը թվագրվում է VIII կամ IX դարով և գտնվում է բավական վատ վիճակում: Այն սկզբից և վերջից թերի է, այդ իսկ պատճառով վերնագիրը և հեղինակի անունը չեն պահպանվել: Ձեռագիրը հրատարակել է Գ.Լազարոսը<sup>26</sup>: Հետազոտողները նշում են, որ ասորերեն քարգմանության տեքստն անկասկած հին է, և լեզուն հիշեցնում է վաղ շրջանի ասորի քարգմանիչների բառացի քարգմանությունները, ինչպես օրինակ, VI դ. նշանավոր բժիշկ, փիլիսոփա և քարգմանիչ Մարգիս Ռեշայնացու (Թեոդոսիոպոլսեցու) (մեռ. 536 թ.) կատարածները: Ա.Թատուշտարկի կարծիքով, ամենայն հավանականությամբ հենց Մարգիս Ռեշայնացին է ասորական «Գիրք վաստակոցի» քարգմանիչը: Միաժամանակ նա նկատում է, որ Գ.Լազարոսի հրատարակած ձեռագիրը ինչու է մի ամբողջական գրվածք լինելուց և իրենից ներկայացնում է Մարգիս քարգմանության համառոտ վերաշարադրանքը՝ կատարված ավելի ուշ շրջանում որևէ ասորու ձեռքով<sup>27</sup>: Հայանվել է նաև այն կարծիքը, որ ձեռագրի ստանձին մասերը թերևս գրվել են տարբեր անձանց կողմից և տարբեր ժամանակներում, այս կամ այն առիթով, ապա փորձ է արվել դրանք ի մի բերելու:



Մարգիս Ռեշայնացուն ասորական «Գիրք վաստակոցի» քարգմանիչ համարելու համար Ա.Բաունշարկը որպես հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ Հաջի Խալիֆան (1608-1658 թթ.) իր արարական գրականության մատենագիտությունում «Գիրք վաստակոցի» արարելեն քարգմանության քարգմանիչների թվում հիշատակում է ոմն Էլիայի որդի Սերգիուսի (*Մարջիս իրն Հիլյա առ-Ռումի*), ինչը, նրա կարծիքով, կարող էր մատնանշել Մարգիս Ռեշայնացուն<sup>26</sup>: Մակայն քանի որ Մարգիս Ռեշայնացու՝ ասորական «Գիրք վաստակոցի» քարգմանիչը լինելու վերաբերյալ մեզ ուղղակի փաստեր չեն հասել, ուսումնասիրողներից ոմանք զանոմ են, որ այդ խնդիրը դեռևս չի կարելի համարել վերջնականորեն լուծված<sup>27</sup>:

Չնայած հիշյալ ասորերեն ձեռագրի ոչ բավարար վիճակին, ուսումնասիրողներին հաջողվել է նրա բովանդակությունը համեմատել հունական «Գեոպոնիկայի» հետ և պարզել, որ դրանք հիմնականում կրկնում են միմյանց: Մակայն հանգամանալից հետազոտությունը ցույց է տալիս, որ ասորերեն տեքստը ոչ թե բուն «Գեոպոնիկայի», այլ Փոսի կողմից հիշատակվող Անատոլիոսի կոմպենդիումի քարգմանությունն է<sup>28</sup>:

Ասորական «Գիրք վաստակոցը» հիշատակվում է X դ. կեսերի հեղինակ Բար Բաելյուլի հանրագիտարանային բնույթի երկում, ուր նա ի մի է բերել բառարանագրական զանազան երկեր և քաղվածքներ արել ասորական տարբեր փիլիսոփայական, աստվածաբանական, բնագիտական և այլ գրվածքներից. այստեղ այն անվանվում է «Լոնիոսի կողմից կազմված երկրագործության գիրք»: Իսկ XIII դ. արարական հեղինակ Իբն ալ-Ավամը այդ հեղինակին անվանում է *Յունիոս*, որը հունարեն *Վինդանիոնիոս* անվան վերջին մասն է<sup>29</sup>:

Փոսի վկայության համաձայն Անատոլիոս Վինդանիոսի երկրագործական երկը բաղկացած էր 12 գրքից, մինչդեռ ասորական տարբերակն առնվազն 2 գրքով ավելի է եղել, քանի որ ասորական ձեռագրում թերի մասն սկսվում է 14-րդ գրքի 4-րդ գլխից հետո: Թարգմանիչը հավելումներ է կատարել զանազան աղբյուրներից, հատկապես Անատոլիոսի «Հիպոպոտրիկաներից». վերջինից քաղված նյութեր կարելի է գտնել նաև Կասիանոս Բասուսի «Գեոպոնիկայում»<sup>30</sup>:

Հայտնի են հունական գյուղատնտեսական հանրագիտարանների մի քանի արարելեն տարբերակներ, որոնք բխում են տարբեր ժամանակներում կատարված զանազան քարգմանություններից: Դրանցից մեկը Կասիանոս Բասուս Մյալասատիկոսի «Գեոպոնիկայի» վերարտադրությունն է, որը

արարական մատենագրության մեջ հայտնի է «*ալ-Ֆիլահա առ-Ռումիյա*» («Հունական երկրագործություն») անվանումով, ընդ որում հեղինակի անունը, աղավաղվելով, դարձել է *Կասաուս իրն Մարուրասքինա առ-Ռումի*: Այս երկը արարելեն է քարգմանվել երկու անգամ, տարբեր բնագրերից. առաջին քարգմանությունը Մարջիս իրն Հիլյա առ-Ռումին կատարել է ուղղակի հունարենից, 212/827 թ.<sup>31</sup>: Երկրորդի համար, որ վերաբերում է ավելի ուշ շրջանի, հիմք է ծառայել հունարենից արված փնիկի քարգմանությունը ("Varznama"): Թե՛ մեկը, թե՛ մյուսը մեզ են հասել սակավաթիվ ձեռագրերով, որոնք պահվում են աշխարհի տարբեր գրասպանոցներում, ընդ որում առաջին տարբերակի ձեռագրերն ընդամենը երեքն են (որոնցից միայն երկուսն են ամբողջական), իսկ փնիկից արվածները՝ յոթը (որոնց մեծ մասը ևս ամբողջական չեն): Հունարենից կատարված քարգմանությունը հրատարակվել է Կաեիրում 1293/1876 թ., իսկ փնիկից արվածն առ այսօր չի հրատարակված: Ըստ ուսումնասիրողների, վերջինս իրենից ներկայացնում է միջանկյալ օղակ Կասիանոս Բասուսի հունարեն բնագրի (Συναγωγὴ γεωργικῶν επιτηδευμάτων) և Կաստանդին Միրանձին կայսեր կրթմանով կազմված «Գեոպոնիկայի» միջև: Ինչ վերաբերում է Կաստուսի երկի հունարեն բնագրին, ապա այն մեզ է հասել ոչ իր նախնական վիճակով, այլ VII-VIII կամ X դ. կազմված երկրագործական ժողովածուի կազմում, որի հիմքում ընկած են նաև Անատոլիոս Բերյուտացու և ոմն Դիդիմոսի երկերը: Բացի այդ, Կաստուսի համար զլխավոր հեղինակություններն են Գեմոկլիոսը և Ստոիկոնը, որոնց նա հաճախ վկայակոչում է<sup>32</sup>:

Պեսք է նշել, որ Հաջի Խալիֆայի մատենագիտությունում որպես «Հունական երկրագործության գրքի» քարգմանիչ նկատարված է ոչ միայն վերոհիշյալ Մարջիս իրն Հիլյան, (որին որոշ հետազոտողներ փորձել են նույնացնել Մարգիս Ռեշայնացու հետ), այլև ևս երեք ուրիշներ՝ Կասա իրն Լուկա, Եվստասիոս և Աբու Չարաբիա Յահյա իրն Ադի<sup>33</sup>. ինչը տեղիք է ավել որոշ խառնաշփոթի՝ բյուրիմացության մեջ գցելով ուսումնասիրողներին: Նորագույն ուսումնասիրություններում փորձ է արվել հասակություն մտցնել այդ խառնաշփոթում, ինչը որոշ չափով հաջողվել է: Այսպես, օրինակ, արարելեն ձեռագրերի բնությունը ցույց է տալիս, որ «Հունական երկրագործության գիրք» կամ «Երկրագործության գիրք» անվանմամբ արարական մատենագրության մեջ հայտնի են ոչ միայն Կասիանոս Բասուսի երկի վերոհիշյալ երկու քարգմանությունները, այլև մի շարք այլ հայն



հեղինակների երկրագործական երկեր, որոնք ևս բարգձմանվել են արաբներն տարբեր բարգձմանիչների կողմից և տարբեր ժամանակներում:

Այսպես, 1931 թ. Պ.Մրաբը երատարակեց երկրագործական բնույթի արաբերեն իր հայտնաբերած ձեռագիրը, ուր տեղեկություններ կային այն մասին, որ Եվստաթիոսը պատրիարք Պոլիսիանոս Ալեքսանդրացու հետ միասին հունարենից արաբերեն է բարգձմանել այն 179/795 թ. բարձրից Յահյա իբն Խալիդի համար, ինչը Պ.Մրաբը հաստատում է իր սեփական դիտողությունների և այլ աղբյուրների միջոցով: Պ.Մրաբը իր հայտնաբերած երկի հեղինակին նույնացնում էր Անատոլիոս Վինդանիասի հետ, սակայն հետագա պրպումները ցույց են տվել, որ իրականում հեղինակը Բալինաս ալ-Հարիմն է, այսինքն Ապոլոնիոս Տիանացին: Իսկ բարգձմանության քվականը Կ.Բրոկելմանը վերագրել է Կասիանոս Բասուսի երկին, որը ևս ճշտվել է հետագա հետազոտողների կողմից: Այս երկը, ըստ նորագույն ուսումնասիրությունների, պետկոմպիլատի է, որը ծագում է հավանաբար, V դարից և հիմնված է մեկ տասնյակից ավելի հայն հեղինակների երկերի վրա (Հիպոկրատ, Արիստոտել, Գենոկրիտ, Գալեն, Սոտիոն, Ասկլեպիոս և այլն), որոնք բոլորովին տարբեր են Անատոլիոսի աղբյուրներից<sup>36</sup>: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հաստատվում է Հաջի Խալիֆայի մատենագիտությունում պահպանված տեղեկությունն այն մասին, որ Եվստաթիոս բարգձմանիչը հունարենից արաբերեն է բարգձմանել «Հունական երկրագործության գիրքը»:

Մեզ է հասել նաև Գենոկրիտոսի երկրագործական երկի արաբերեն բարգձմանությունը, որի ձեռագրերը պահվում են Փարիզի Ազգային գրադարանում<sup>37</sup>: Այս բարգձմանության հետ կապված դեռևս ոչ բոլոր խնդիրներն են լուծված, քանի որ ձեռագրերը կարիք են զգում հետագա ուսումնասիրության:

Առայժմ հայտնի միակ ձեռագրով մեզ է հասել նաև Անատոլիոս Վինդանիասի երկրագործական երկի արաբերեն բարգձմանությունը, որը պահվում է Մեշեղի Ասրանն Ռեզավի գրադարանում (Իրան): Անատոլիոսի երկի հունարեն բնագիրը չի պահպանվել, և դրա մասին մենք այժմ կարող ենք պատկերացում կազմել ասորերեն ոչ ամբողջական բարգձմանության, (որի մասին խոսվեց վերևում), ավելի ուշ շրջանի հունարեն «Գեոպոնիկաներում» պահպանված որոշ հատվածների և նշված արաբերեն բարգձմանության միջոցով: Ինչպես ցույց են տվել հետազոտողները, Անատոլիոսն իր երկը կազմել է օգտվելով հետևյալ աղբյուրներից՝ Կեղծ-Գենոկրիտ, Պամփի-

լոս, Ապոլոնիոս, Գիոֆանես, Աֆրիկանոս, Ֆրեբնոմիոս, Վալենս, Տարենտինոս, Լեոնահոնոս<sup>38</sup>:

Բացի վերոհիշյալ հունական երկրագործական երկերից, ինչպես ներառվում է, արաբերեն է բարգձմանվել նաև Մարգիս Ռեչայնացու ասորերեն վոխապոբյունը, որը, սակայն, մեզ չի հասել<sup>39</sup>:

Այսպիսով, երևի ամփոփենք վերևում ասվածը «Գիրք վաստակոցի» արաբերեն բարգձմանության մասին, կտեսցիք հետևյալը. հայտնի են այդ բարգձմանության առնվազն վեց տարբերակներ. դրանցից Կասիանոս Բասուսի «Գեոպոնիկան», 827 թ., հունարենից արաբերեն է բարգձմանել Մարջիս իբն Հիլյան, իսկ Ապոլոնիոս Տիանացու երկրագործական երկը, 795 թ., Եվստաթիոսը (Պոլիսիանոս Ալեքսանդրացու հետ համատեղ): Ինչ վերաբերում է մյուս բարգձմանությունների հեղինակներին և բարգձմանության ճիշտ ժամանակին, ապա այդ խնդիրները կարիք են զգան հետագա ուսումնասիրության:

Հարկ է նշել, որ «Գիրք վաստակոցի» հայերեն բարգձմանությունը արաբերեն և ասորերեն բնագրերի հետ համեմատելու փորձեր կատարել են Ա.Բասուշտարկը, Կ.Բրոկելմանը, Է.Ֆերլեն, քեև ոչ ամբողջությամբ, այլ հատվածաբար:

Ա.Բասուշտարկի կարծիքով հայերեն բարգձմանությունը կապված է, հավանաբար, ասորերեն տարբերակի հետ. նման Լեզակացության մա հանգամ է Կոստա իբն Լուկասին վերագրվող արաբերեն բարգձմանության և հայերեն տեքստի համեմատության միջոցով<sup>40</sup>:

Ըստ Կ.Բրոկելմանի, հայերեն տեքստն ըստ նյութի դասավորման կարգի անկախ է և ասորական, և Կասիանոս Բասուսի տեքստերից, քեև ճշտորեն հանրակնում է մերք մեկի, մերք մյուսի հետ: Բացի այդ, նրանում կան որոշ մասեր, որոնք բացակայում են նշված երկու տարբերակներում: Արդյոք Անատոլիոսի երկի արաբերեն տարբերակը ճշգրիտ բարգձմանությամբ է մեզ հասել, քե՞ հետագայում վերամշակված տեքստով կարելի է պարզել միայն համեմատության միջոցով հայերեն տեքստի, Պալլադիոսի, Կասիանոս Բասուսի, ասորերեն և արաբերեն բարգձմանությունների միջև<sup>41</sup>:

Է.Ֆերլեն, գուզահեռաբար միմյանց հետ համեմատելով հայերեն, հունարեն, ասորերեն և արաբերեն տարբերակները, ինչպես նաև Պալլադիոսի հունարեն բնագիրը, եկել է այն եզրակացության, որ ասորերեն և հայերեն բարգձմանությունները բխում են միևնույն աղբյուրից, մինչդեռ արաբերեն բարգձմանության երկու տարբերակները և հունական «Գեոպոնի-



կան» ունեն միևնույն բովանդակությունը և գրութների հերթականությունը. հետևաբար, առաջինի հիմքը կազմում է Անատոլիոսի երկը, ինչը և հաստատվում է հայերեն բարգմանության խորագրով՝ «Այս գիրք Պոնիոս Անադալիոսի՝ որ ի քաղաքէն Պերոթայ...»<sup>42</sup>:

Սակայն նշված երեք հեռագրողները հայերեն բարգմանությունը համեմատել են ոչ թե Անատոլիոսի և Գեմոկրիստոսի երկերի վերոհիշյալ արարերեն բարգմանությունների, այլ արարերեն ուրիշ տարբերակների հետ: Մինչդեռ, ամենայն հավանականությամբ, հենց դրանցից առաջինի հետ է կապվում «Գիրք վաստակոցի» հայերեն բարգմանությունը, իսկ երկրորդը՝ Գեմոկրիստոսը, որպես Անատոլիոսի կողմից ամենից ավելի հաճախ վկայակոչվող հեղինակ (ինչպես այդ իրավամբ նկատել է Ղ.Ալիշանը), փաստորեն Անատոլիոսի երկի հիմնական աղբյուրներից մեկն է: Մինչև վերջերս արարերեն վերոհիշյալ ձեռագրերի անմատչելիության պատճառով հնարավորություն չունեինք ուսումնասիրելու դրանք և, ամենակարևորը, բաղդատելու հայերեն բարգմանության հետ: Այժմ, քանի որ Մեշեղի Ասրանե Ռեզալի գրադարանից ստացվել է Անատոլիոսի երկի արարերեն ձեռագրի պատճենը<sup>43</sup>, մեզ բնօրինակ է այդ հնարավորությունը<sup>44</sup>:

### Ծանոթագրություններ

1. Ավելի մանրամասն տես Le Livre de l'agriculture d'Ibn al-Awam, traduit de l'arabe par J.-J. Clément-Mullet, t.I, Paris, 1864, p. 15-16 (այսուհետև՝ Ibn al-Awam). Геоπονики. Византийская сельскохозяйственная энциклопедия X в., введ., пер. с греч. и коммент. Е.Э.Липшиц, М.-Л., 1960, с. 5-6.

2. Геоπονики, с. 6, 7, 9, 13, 15.

3. Там же, с. 15-16.

4. W.Gemoll, Untersuchungen über die Quellen, der Verfasser und die Abfassungszeit der Geoponica, Berlin, 1884, S. 211-212, 218-219. Н.В.Пигулевская, Культура сирийцев в средние века, М., 1979, с. 184-185.

5. Գիրք վաստակոց, բարգմանութիւն նախնեաց յարարացի լեզուի, Վնենաիկ, 1877, էջ Ը, ԺԵ:

6. Տես Բ.Չուգասզեան, Գեորգ Դպիր Պայասեցու կեանքի և գործունեության տարեգրութիւն (1737-1811), Երևան, 1994, էջ 27-28: Նույն այս թվականն է նշված նաև Հ.Տաշյանի ձեռագրացուցակում, մինչդեռ Ղ.Հովհանյանը և Հ.Անասյանը նշում են այլ թվական՝ 1787 թ., որը

Բ.Չուգասզեանի՝ նորերս կատարած ճշգրտումներից հետո պետք է համարել ոչ ճիշտ: Հմմտ. Յ.Տաշեան, Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1896, էջ 705-706, 1144: Ղ.Յովհաննեան, Հնաագուտրիւնք նախնեաց ուսկորնի վրայ, Ա.Վիեննա, 1897, էջ 92: Հ.Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա.Երևան, 1959, էջ 843:

7. Յ.Տաշեան, Յուզակ..., էջ 705-706:

8. Ղ.Յովհաննեան, նշվ. աշխ., էջ 92:

9. Նույն տեղում:

10. Գիրք վաստակոց, էջ ԺԶ:

11. Բ.Չուգասզեան, նշվ. աշխ., էջ 7, 28: Մինչ այդ «Բազմավկյուն» հրատարակվել են հատվածներ նշված ձեռագրերից՝ 1862, էջ 93-95, 1864, էջ 27, 1867, էջ 358-359, 1874, էջ 324-328:

12. Գիրք վաստակոց, էջ ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ-ԺԱ:

13. C.Brockelmann, Die armenische Übersetzung der Geoponica. - Byzantinische Zeitschrift, Bd. V, 1896, S. 389.

14. Գիրք վաստակոց, էջ ԺԶ, ԺԴ, ծանոթ.2:

15. C.Brockelmann, op. cit.

16. Ս.Սարեան, Կ.Պոթելման և «Գիրք վաստակոցի» հայերեն բարգմանութիւնը, Բազմավկյ, 1900, էջ 4-7 և 52-58:

17. Ղ.Յովհաննեան, Հանդես Ամսօրեայ, 1889, էջ 2: Մլիք Թովկերէ Արեւելք, 1900, № 6798: Ն.Անդրիկեան, Վաստակոց գրքին բարգմանիչը, Բազմավկյ, 1906, էջ 435-439:

18. Ն.Անդրիկեան, նշվ. աշխ., էջ 436-438:

19. Հմմտ. Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, աշխ. Բ.Չուգասզեանի, Երևան, 1980, էջ 15:

20. Ինչպես հայտնի է, Փարիզի Ազգային գրադարանի № 248 հայերեն ձեռագրի հիշատակարանում հիշվում է «*իմաստասէր ոմն սարկաւազ Մանփանոս անուն գտեալ առ կայսրն*», որը Հերթում Ա թագավորի հանձնարարությամբ 1263 թ. արարերենից հայերեն է բարգմանել երեք գիրք՝ «Լասն ձիոյ պայթարման», «Լասն թրի շինելոյ» և «Լասն արեգական և լուսնի արվեստին»: (Sua Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale, par F.Macler, Paris, 1908, p. 130): Բացի այդ, մեզ հայտնի է նաև Առաքել Անեցու մասին, որը 1222 թ. արարերենից բարգմանել է «Աղէկախօս» երգահանը, իսկ այնուհետև (հավանաբար 1222-1236 թթ. միջև ընկած ժամանակահատվածում) նաև «Պղնձն քաղաքի



պատմությունը» (տես Հ.Սկրայան, Առաքել Անեցիի քարգմանիչ, «Անի» հանդես, Երևան, 1992, № 2, էջ 28-30):

21. Հմմտ. Բժշկարանի ձեռն... էջ 23: Իշոխ, Գիրք ի վերայ բնութեան, աշխ. Ս.Վարդանյանի, Երևան, 1979, էջ 57: Արուսայիղ, Յաղագս կազմութեան մարտչոյն, աշխ. Ս.Վարդանյանի, Երևան, 1974, էջ 8:

22. Գիրք վաստակոց, էջ ԺԶ, ԺԷ:

23. Ղ.Յովնանեան, նշվ. աշխ., էջ 109-110:

24. Ա.Սուրբեան, Գիրք վաստակոց, Բագմավալ, 1874, հտ. 32, էջ 321-324: Ն.Բիզանդացի, Հայկական բուսաբանություն, Կ.Պոլիս, 1880, էջ 96-101: Ա.Վարդանեան (Մասեմախոսական), Հանդիս Ամսօրեայ, 1920, էջ 312-314: Տես նաև Հ.Անասյան, նշվ. աշխ., էջ 832-846: Բժշկարանի ձեռն, էջ 13-16:

25. Նշենք, որ հունական «Գեոպոնիկայի» լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն քարգմանություններին հանգամանորեն չենք անդրադարձնում, քանի որ դրանք ողղակի կապ չունեն հայերեն քարգմանության հետ և որոշիչ դեր չեն կարող կատարել վերջինիս բնագիրը սլավոնա-հարցում: Այսպես, «Գեոպոնիկան» լատիներեն է քարգմանվել հայ մասնակիորեն, Բուրգունդիո Պիզացու կողմից, 1157 թ., ապա Յան Կոնստանտին կողմից (ամբողջությամբ): Վերջին քարգմանությունը ոչ միայն ունեցել է մի շարք հրատարակություններ Եվրոպայի տարբեր քաղաքներում (1538-1543 թթ.), այլև որպես բնագիր ծառայել ֆրանսերեն քարգմանության համար, որը եւ քաղմիցս հրատարակվել է XVI դ. կեսերին: 1542 թ. իրականացվել են Պիետրո Լավրոյի և Տոմազո Վիտելլիի իտալերեն քարգմանությունները: Տես Геопоника, с. 7-8.

26. De Geoponicon versione syriaca scripsit A.P. de Lagarde, Berlin, 1855.

27. A.Baumstark, Lucubrationes Syro-Graecae, Lipsiae, 1894, S. 390.

28. Op. cit., S. 379.

29. Н.В.Пигулевская, укр. соч., с. 185.

30. W.Gemoll, op. cit., S. 218-219.

31. R.Duval, La littérature syriaque, Paris, 1899, p. 280. Հմմտ. նաև սույն հոդվածի ծանոթ. 13:

32. A.Baumstark, Op. cit., S. 396-400.

33. Ինչպես ապացուցում է ուսումնասիրողներից Յ.Ռուսկան, Կասիանո Բասսո Սիլվաստիկոսի «Հունական երկրագործություն» գրքի քարգմանիչը ոչ թե Կաստա իրն Լուկան է (մեռ. մոտ. 912 թ.), ինչպես մինչ այդ կարծվում էր, այլ Սարջիս իրն Հիլյա առ-Ռումին: Տես J.Ruska, Cassianus

Bassus Scholasticus und die arabischen Versionen der Griechischen Landwirtschaft.-Der Islam, 1914, № 5, S. 174-179. Տես նաև G.Graf, Geschichte der Christlichen Arabischen Literatur, Bd. 2, S. 31, Anm. 1.

34. F.Sezgin, Geschichte des arabischen Schrifttums, Bd. IV, Leiden, 1971, S. 317-318 (այսուհետև՝ GAS). A.Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, S. 172.

35. Ըստ Հաջի Խալիֆայի, Կաստուսի «Հունական երկրագործություն» գիրքը, բաղկացած է 12 գլխից, իմաստներից արարել են է քարգմանել Սարջիս իրն Հիլյա առ-Ռումին. այն արարելների են վերածել նաև Կաստա իրն Լուկա ալ-Բաալրաբին, Առասաբ (Եվստաթիոս) և Աբու Չարաբիա Յահյա իրն Ադին, սակայն Սարջիսի քարգմանությունն ավելի կատարյալ և ավելի ճիշտ է մյուսներից: Հմմտ. Lexicon bibliographicum et encyclopaedicum a Haji Khalfa celebrato compositum. Ed. G. Fluegel. T. V, Leipzig-London, art. 10377, p.132.

36. F.Sezgin, GAS, Bd. IV, S. 315-317.

37. Op. cit., S. 310-312.

38. Op. cit., S. 314-315.

39. Mustafa al-Shihabi, Filaha.-The Encyclopaedia of Islam (new edition), T. 2, Leiden-London, 1965, p. 900.

40. A.Baumstark, Lucubrationes..., S. 496, Anm. 146 (Cod. Bibl. Lugd. Batav. 192).

41. C.Brockelmann, op. cit., S. 407-409.

42. E. Fehrle, Zur Geschichte der griechischen Geoponica, Habilitationsschrift zur Erlangung der Venia legendi der hohen philosophischen Fakultät der Universität Heidelberg, Leipzig, 1913, S. 28, 31.

43. Տես վերևում, էջ 117-118 (նախարանի ծանոթ. 36):

44. Հայերեն քարգմանության և նրա արարել են բնագրի բարդաստրության արդյունքներին մտադիր ենք անդրադարձնալ առանձին հանգամանակից ուսումնասիրությամբ:



## ՖԱՐԱՋ ԱՍՈՐՈՒ «ԲԺՇԿԱՐԱՆ ՉԻՈՅ ԵՒ ԱՌՀԱՄԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ» ԵՐԿԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

«Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրասանոյ» երկը, ինչպէս հայանի է, կիլիկյան շրջանի եռշարձաններից է՝ կազմված միջին հայերենով: Այն գրվել է Կիլիկիայի մայրաքաղաք Սիսում, Սմբատ III (1296-1298) քաղափորի երամանով: Հեղինակը Ֆարաջ անունով, ազգությամբ ասորի մի բժիշկ է: «Բժշկարանը» ձիաբարձանության ձեռնարկ է՝ ստեղծված մի շարք արևելյան (հատկապես արաբական) համանման աղբյուրների օգտագործմամբ ու նմանությամբ: «Բժշկարանն» արժեքավոր է թե՛ որպէս մեզ հասած հայերեն միակ միջնադարյան ամբողջական ձիաբուժական ձեռնարկ՝, և թե՛ այն նկատառմամբ, որ ընդգրկում է միջին հայերենին բնորոշ բազմաթիվ այնպիսի բառեր (հայերեն և փոխառյալ), որոնք չեն ավանդված ոչ մի ուրիշ աղբյուրով, չեն գրանցված հայերեն քառարաններից ոչ մեկում:

«Բժշկարանը» գրվել է մի շարք բանասերների ուշադրությունը՝ որոնցից Բ.Չուգասոյանը երատարակել է այն՝ կից արժեքավոր ուսումնասիրությամբ և մեծ բարեխղճությամբ կազմված քառարանով: Առաջարկում Բ.Չուգասոյանն ուշադրություն է դարձրել, մասնավորապէս, այն հանգամանքին, որ ձեռագրի հիշատակարանում Ֆարաջ Ասորին հայանում է, թե ինքը բժշկարանը քարգմանել է արաբերենից: Այս կապակցությամբ ուսումնասիրողը, միանալով պրոֆ. Լ.Հովհաննիսյանի կարծիքին այն մասին, որ «միջնադարում բժշկական գրականության մեջ քարգմանություն ասելով ավելի հաճախ հասկանում էին օտար աղբյուրների օգտագործումով կազմված աշխատանք», միանգամայն իրավացիորեն նկատում է. «Այս առումով և պիտի ընկալել Ֆարաջի «քարգմանեցի» նշումը»:

Իսկ ի՞նչ աղբյուրներ է օգտագործել Ֆարաջ Ասորին: Այդ աղբյուրների մասին նա հիշատակում է ինչպէս ձեռագրի հիշատակարանում, այնպէս էլ բժշկարանի բուն տեքստում՝ ժամանակ առ ժամանակ վկայակոչելով այս կամ այն հեղինակի կարծիքը իր քննարկած զանազան մասնագիտական հարցերի կապակցությամբ: Այսպէս, հիշատակարանում ասվում է հետևյալը. «... Թարգմանեցաւ գիրքս այս ի յարապ գրէ ի հայ բառ, որ է Բժշկարան ձիոյ եւ այլիասարակ գրասանոյ, ի բազում իմաստասիրաց եւ ֆիխսաֆայից ճընայ եւ Ապի Ուսուֆին եւ Ըռայշիտայ եւ այլ բազում հնդկաց եւ

Պաղարտայ իմաստասիրացն ասացեալ, որոց զանուանքն չենք ասա գրել: Եւ այդ եւ նուսառ բժիշկս՝ Ֆարայճս, ... քարգմանեցի զսա դորդ եւ յստակ բառի, զի յոյժ հմուտ էի վարժեալ յարեսասս բժշկութեան ի մեծն Պաղատա քաղում ամառք: ... Եւ աշխատեցայ քարգմանել գրժշկական եւ գիմաստասիրական գիրքս ի մայրաքաղաքս Սիս»՝ (ընդգծումը մերն է. - Հ.Մ.):

Ինչպէս տեսնում ենք, հիշատակարանում հատկապէս երեք հեղինակների անուններ են հիշվում՝ ճընայ, Ապի Ուսուֆ եւ Ըռայշիտ:

Այս հեղինակներից ամսջինը՝ ճընայ, պատկերված է ձեռագրի 6 ր էջում. պատկերի վերևի մասում կա հետևյալ մակագրությունը. «ճընայ իմաստասէր»։ Բացի այդ, բժշկարանի տեքստում նույն հեղինակը վկայակոչվում է ևս երկու անգամ՝ անվանվելով ճընայ իմաստասէրն հնդկաց (էջ 34ա) և ճընայ հնդկցի (էջ 36բ)։

Երկրորդ հեղինակը՝ Ապի Ուսուֆ, բժշկարանի տեքստում հիշվում է (բացի հիշատակարանից) ևս յոթ անգամ, քանի որ Ֆարաջը մեջբերումներ է անում «յասացեաց Ապի Ուսուֆին» (էջ 121բ, 124ա, 131ա, 135բ, 158ա, 177ա, 181բ)։

Ինչ վերաբերում է երրորդ հեղինակին՝ Ըռայշիտին, ապա վերջինս թև հիշատակվում է ձեռագրի հիշատակարանում, ինչպէս տեսանք, սակայն բժշկարանի բուն տեքստում ոչ մի անգամ չի անվանաբերվում:

Ուսումնասիրողներից Բ.Չուգասոյանը արևելյան ձիագիտական-ձիաբուժական աղբյուրների իր համառոտ ակնարկում անդրադառնում է հնդկական, պարսկական և արաբական մի շարք ձիագիտական երկերի, որոնց մի մասը, սակայն, վերաբերում է շատ ավելի ուշ շրջանի, քան Ֆարաջի «Բժշկարանը», այսինքն՝ XIV-XVIII դդ., իսկ համեմատաբար հնագույնները վերոհիշյալ երեք (ճընայ, Ապի Ուսուֆ, Ըռայշիտ) աղբյուրներից բոլորովին տարբեր կրկեր են։ Այլ կերպ ասած, Ֆարաջի բժշկարանի հիմնական անմիջական աղբյուրները, ինչպէս և նրանց հեղինակների ինքնությունը, առ այսօր մնացել են անորոշ:

Հարկ է նշել, որ արաբական միջնադարյան մի շարք քիչ հայանի կամ քիչ ուսումնասիրված ձեռագիր աղբյուրներ հնարավորություն են տալիս լույս սփռելու նշված հեղինակների ինքնության և, որոշ չափով, նաև նրանց այն երկերի վրա, որոնք օգտագործվել են Ֆարաջ Ասորու կողմից:

Այսպիսով, փորձենք պատասխանել այն հարցին, թե ովքե՞ր են նշված հեղինակները:



Արաբական մատենագրության մեջ այս հեղինակը հանդես է գալիս, համապատասխանաբար, *Շանակ ալ-Հինդի* (شأنق الهندي) «Շանակ Հնդիկ», *Շանակ ալ-Հարիմ* (شأنق الحكيم) «Շանակ Իմաստուն» կամ *Շանակ ալ-Հարիմ ալ-Հինդի* (شأنق الحكيم الهندي) «Շանակ Իմաստուն Հնդիկ» հորջորջմամբ, որին երբեմն ավելացվում է նաև *أطبيب* «Ժիշկ» մականունը:

Ըստ ուսումնասիրողների Շանակը (սանսկր. *Չանակյա Կառակյիա-Շահակյա Կաուլիյա*) եղել է Հնդկաստանի կայսր Չանդրագոտարայի (իշխ. մոտ. 321-298 թթ.) նշանավոր մինիստրը<sup>10</sup>, որը միաժամանակ հայանի էր նաև որպես փիլիսոփա, բժիշկ, աստղագետ: Հնդկական գրականության մեջ հայանի է նրա «Արթաստրա» (*Arthasāstra*) վերնագիրը կառուցվել մի յուրատեսակ «հայելի փայտ» քաղաքի անձի ազդեցության վերաբերյալ:

Արաբական միջնադարյան աղբյուրներում հիշատակվում են Շանակին վերագրվող մի շարք (ըստ նորագույն ուսումնասիրությունների՝ վեց) երկեր<sup>11</sup>, որոնցից, սակայն, մեկ է հասել միայն մեկը, այն է՝ «Գիրք բույների և հակաբույների» - *كتاب السموم والتهراق* (բունարանական երկ): Հայտնի են այս երկի մոտ մեկ տասնյակ ձեռագիր ընդօրինակություններ, որոնք պահվում են Բեռլինում, Կահիրեում, Բաղդադում և այլուր: Երկի ուսումնասիրությանն անդրադարձել են մի շարք եկեղեցուտոհներ, որոնցից Բ.Շարատը հրատարակել է այն՝ կից ուսումնասիրությամբ և գերմաներեն քարգմանությամբ<sup>12</sup>:

Գիրքը սանսկրիտից պարսկերեն է քարգմանել Գունդիշապուրի հռչակավոր բժշկական դպրոցի («Բիմարիսթան») բժիշկներից մեկը՝ ազգությամբ հնդիկ Մանկահը (*Mankah*): Խալիֆ Հարուն առ-Ռաշիդը (իշխ. 786-809) նրան Հնդկաստանից կրավորել է Բաղդադ, որտեղ Մանկահը, ընդունելով իսլամ, մնացել է աշխատելու Խալիֆարում: Հմուտ բժիշկ լինելու հետ մեկտեղ, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, նա միաժամանակ զբաղվել է նաև փիլիսոփայությամբ և քարգմանություններով՝ հնդկերենից պարսկերեն և արաբերեն: Մանկահը Շանակի «Թույների գիրքը» պարսկերեն է քարգմանել Յահյա իբն Խալիդ ալ-Բարմաքիի համար. քարգմանությունը գրի է առել Աբու Հարիմ ալ-Բալսին: Ավելի ուշ այն արաբերենի է վերածել ալ-Աբրաս իբն Մաիդ ալ-Ջաուհարին՝ իսաֆի ալ-Մամունի (իշխ. 813-833) համար<sup>13</sup>: Ինչպես ցույց են տվել Շանակի «Թույների գրքի» ուսումնասիրողները, երկում առկա են ոչ միայն վերա-

հիշյալ հնդկական *Kautiliya Arthasāstra*-ի, այլև մի շարք այլ, հիմնականում բժշկական աղբյուրների հետ համընկնող հատվածներ: Գրանցից են, մասնավորապես, հնդիկ հեղինակներ Սուշրուտայի (*Suśruta*, մոտ. VI դ. մ.թ.ա.) և Չարակայի (*Caraka*, մոտ. II դ. մ.թ.) *Suśrutasaṃhitā* և *Carakasamhitā* երկերի որոշ գլուխները կամ հատվածները, ինչպես նաև հունական որոշ աղբյուրներ: Ընդ որում Սուշրուտայի երկի համապատասխան գլուխը կարող էր ավելացվել Մանկահի (եներադավում է, որ վերջինս քարգմանել է նաև Սուշրուտայի երկը)<sup>14</sup>, իսկ հունական մասը՝ գրքի վերջին վերամշակողի՝ ալ-Աբրաս իբն Մաիդ ալ-Ջաուհարիի կողմից<sup>15</sup>: Այլ կերպ ասած, Շանակի «Թույների գրքի» արաբերեն տարբերակը ոչ թե պարզ քարգմանություն է, այլ կոմպիլյատիվ բնույթի վերամշակված շարադրանք, որն, ի դեպ, սովորական երևույթ էր միջնադարում:

Արաբական աղբյուրներում Շանակին վերագրվող մյուս, սակայն մեկ չհասած երկերը հետևյալներն են.

2. «Գիրք պատերազմ վարելու, քաղաքների անկրածեշտ մարդկանց ընտրելու, հեծելազորի, կերակուրների և բույնի մասին» - *والطعام والسم الرجال وفي امر المساورة كتاب في امر تدبير الحرب وما ينبغي للملك ان يتحد من* - հիշատակվում է Իբն ան-Նադիմի «Ֆիհրիսթ»-ում<sup>16</sup> (Լջ 305, 315):

3. «Գիրք աղբի» մասին» - *كتاب اللب* - հիշատակվում է Իբն-ան-Նադիմի նույն երկում (Լջ 316):

4. «Յուրացված գոնարներ» - *متاحل الجوزر* - բարոյագիտական երկ, որից մի հատված պահպանվել է Իբն Աբի Ուսայբիայի երկում<sup>17</sup> (հ.Չ, Լջ 32-33):

5. «Գիրք աստղագիտության մասին» - *كتاب في علم النجوم* - հիշատակում է Իբն Աբի Ուսայբիան (հ.Չ, Լջ 33):

6. «Գիրք անասնաբուծություն» - *كتاب البيطرة* - հիշատակվում է Իբն Աբի Ուսայբիայի կողմից (հ.Չ, Լջ 33):

Ինչպես տեսնում ենք, արաբական աղբյուրներում միայն հիշատակություններ են պահպանվել այս երկերի մասին:

Հարկ է նշել, որ ուսումնասիրողներից Յ.Յոլլիի կարծիքով, Շանակի Իբն Աբի Ուսայբիայի հիշատակած, մասնավորապես, անասնաբուծության և բանկազին քարերի վերաբերյալ գրքերը (այդ թվում և «Թույների գիրքը») հավանաբար նույնպես «ծագում են *Kautiliya Arthasāstra*-ից: Վերջինիս *Kosapraveśyaratnāparikṣā* գլխում (75-81) խոսվում է բանկապոծք քարերի տեսակների և ստուգման մասին, իսկ վազբուծության և ձիաբուծության վերաբերյալ գլուխներում՝ նաև այդ կենդանիների հիվանդությունների



